

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**«ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ»**

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**

**ԱՌԿԱ ԲԱԺՆԻ**

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**(մասնագիր և առարկայական նկարագրեր)**

**ԳԱՎԱՌ - 2024թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	3
<b>Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը</b> .....	5
<b>Ծրագրի նկարագիրը</b> .....	6
<b>ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ</b> .....	20
<b>ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ</b> .....	44
<b>1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ</b> .....	44
1.1. Պարտադիր դասընթացներ.....	44
1.2. Կամընտրական դասընթացներ.....	60
<b>2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ</b> .....	65
2.1. Պարտադիր դասընթացներ.....	65
2.2. Կամընտրական դասընթացներ.....	68
<b>3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ</b> .....	72
3.1. Պարտադիր դասընթացներ.....	72
3.2. Կամընտրականի դասընթացներ.....	125
<b>4. Կրթականայլ մոդուլներ</b> .....	133
<b>5. Դասընթացների քարտեզագրում</b> .. ..	139

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

### **Սիրելի՛ ուսանողներ,**

բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ձեր կարևոր սահմանադրական իրավունքն է, որի արդյունավետ իրականացումը վճռորոշ նշանակություն ունի յուրաքանչյուրիդ համար:

Ձեր կյանքում անգնահատելի դերակատարություն ունի համալսարանը, որտեղ դուք ձեռք եք բերում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, բացահայտում ձեր ներուժը, զինվում արժեքային ճիշտ կողմնորոշումներով, կայանում որպես մասնագետ: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և անվարան քայլեր տեսական ու գործնական խորը գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, հմտություններ կուտակելու ճանապարհով:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա և հեռակա բաժիններում, կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգեր:

2007 թվականից ԳՊՀ-ում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության գծով բակալավրի որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի՝ 240 կրեդիտի կուտակման արդյունքում:

Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների, մանկավարժության զարգացման արդի միտումների, առաջավոր մոտեցումների և Գավառի պետական համալսարանում իրականացվող՝ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի պահանջներին համապատասխան: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-

տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում ընդհանուր հումանիտար և մասնագիտական գիտելիքներ, միաժամանակ, խորացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) իմացությունը, տիրապետում են արդյունավետ հաղորդակցման հմտություններին, կրթության կազմակերպման հիմնական ձևերին, կրթության և դաստիարակության ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին: Ուսումնառության ընթացքում կարևորվում է կրթության ելքային արդյունքների ձեռքբերումը, այդ նպատակով սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացումը, գործնական, սեմինար պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքների պաշտպանությանը: Բուհն ավարտելուց հետո «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ բակալավրը կարող է աշխատել հանրակրթական դպրոցներում որպես տարրական դասարանների ուսուցիչ (դասվար), արտադպրոցական ուսումնադաստիարակչական, շտկողական-զարգացնող կենտրոններում, մանկատներում՝ որպես մանկավարժ, այլ կրթական հաստատությունների աշխատակից, ինչպես նաև ուսումը շարունակել հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում:

Գավառի պետական համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Ուստի, սիրելի՛ ուսանողներ, եղե՛ք նպատակասլաց ու աշխատասեր և միշտ հիշե՛ք, որ հաջողության երաշխիքը որակյալ կրթությունն է:

**ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան**

## **Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը**

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը ներառում է դասընթացների նկարագրեր և նախատեսված է «Տարրական մակավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ սովորող բակալավրի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Մասնագիրը ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը, այն է՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված կրթական ելքային արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ամփոփիչ ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական ելքային արդյունքներով, սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

# ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

## Ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /011301.01.6/
2. Բուհը	Գավառի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	-
4. Շնորհվող որակավորումը	Մանկավարժության բակալավր
5. Կրթական աստիճանը	Բակալավր
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա
<p><b>8. Ծրագրի ընդունելության չափանիշները</b></p> <p>Ծրագրի դիմորդը պետք է ունենա.</p> <ul style="list-style-type: none"> <li>միջնակարգ, միջին մասնագիտական կրթություն,</li> <li>ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով, հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա կամ օտար լեզու առարկաներից գրավոր քննությունների արդյունքների հիման վրա:</li> </ul>	
<p><b>9. Ավարտելու պահանջները և ծրագրի ելքային կրթական արդյունքները.</b></p> <p><b>Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li><b>240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը:</b></li> </ul> <p>Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.</p> <p><b>Գիտելիք</b></p> <p>Ունի հիմնարար մասնագիտական գիտելիքներ մանկավարժության և հոգեբանության տեսության, կրթության կազմակերպման հիմնական ձևերի և աստիճանների, կրթական տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդիկաների, ուսուցչի և աշակերտների իրավունքների ու պարտականությունների, անձի ձևավորման և զարգացման օրինաչափությունների, դպրոցականների զարգացման տարիքային առանձնահատկությունների մասին:</p> <p><b>Կարողություն</b></p> <p>Կարող է ծրագրել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը, լուծել խնդիրներ, կայացնել որոշումներ, գրագետ, ճիշտ ձևակերպել գրավոր և բանավոր խոսքը:</p> <p><b>Հմտություն</b></p> <p>Տիրապետում է հոգեբանամանկավարժական խնդիրների լուծման մեթոդներին, կրթության և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին, մանկավարժական մեթոդներին և անհրաժեշտ այլ հմտություններին:</p>	

Ունի բավարար գիտելիքներ և կարողություններ՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ մագիստրատուրայում, ուսումը շարունակելու համար:

**10. Ծրագրի նպատակները և խնդիրները**

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության կրթական ծրագրի նպատակն է՝

- փոխանցել հիմնարար և համակարգված գիտելիքներ մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես սկզբնական կրթության) սկզբունքների ու հիմնական դրույթների, կրթական նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,
- ծանոթացնել տարրական դպրոցի կրթության բովանդակությանը և առանձնահատկություններին,
- ձևավորել մանկավարժական փորձն ու մշակույթը վերլուծելու և գնահատելու, տարրական կրթության ծրագրերով դասավանդելու կարողություններ և հմտություններ:

**Կրթություն**

- Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու մանկավարժի պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն:
- Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ մանկավարժության ոլորտում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար:
- Ձևավորել մանկավարժին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:
- Նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և նրա՝ որպես վերլուծական մտածողություն ունեցող հասարակության անդամի ձևավորմանը:
- Զարգացնել ուսանողների մոտ սովորելու, նորն ընդունելու և անընդհատ կատարելագործվելու հմտություններ:

**Հանրային ծառայություն**

Նպաստել ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ ներգրավելով նրանց արտաքին շահակիցներին մատուցվող մասնագիտական ծառայությունների տրամադրման գործընթացին:

<p><b>11. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը</b></p>	<p><b>Ուսումնառության վերջնարդյունքները</b></p>
<p>Ա . Մասնագիտական գիտելիք և իմացություն Ա 1. Մեկնաբանում է մանկավարժական</p>	<p><b>Գիտի</b> ներկայացնել և հիմնավորել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրերն ու</p>

<p>տեսությունների զարգացման պատմությունը, կրթության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, միջգիտակարգային կապերը, ներկայացնում է մանկավարժության և դասավանդման մեթոդիկաների, մանկավարժական նորարարական տեխնոլոգիաների սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, հեռավար կրթության մեթոդաբանությունը, իրականացման սկզբունքները, առանձնահատկությունները, գնահատման համակարգերը:</p>	<p>կիրառման առանձնահատկությունները:  <b>Կարող է</b> բացահայտել մանկավարժական տեխնոլոգիաների անհատակորթիչ դերն ու կիրառման տրամաբանությունը, հիմնավորել ընթացքում ծագած բարդությունների հաղթահարման եղանակներն ու միջոցները:  <b>Տիրապետում է</b> դասի թեմային համապատասխան տարբեր մանկավարժական տեխնոլոգիաների համադրման և կիրառման, գնահատման կարողություններին:</p>
<p>Ա 2. Դասերը պլանավորելու, իրականացնելու, վերլուծելու, արդյունքները գնահատելու, անդրադարձի և կշռադատման (ռեֆլեքսիայի) կարողություն:</p>	<p><b>Գիտի</b> հիմնավորել ու ներկայացնել դասի պլան կազմելու և իրականացնելու հոգեբանամանկավարժական, կազմակերպակառավարչական պահանջներն ու առանձնահատկությունները:  <b>Կարող է</b> պլանավորել, նախագծել, վերլուծել, համադրել, կշռադատել, անդրադարձել 12-ամյա ուսուցման տարրական օղակում ուսումնադաստիարակչական աշխատանքների տարբեր փուլերը:  <b>Տիրապետում է</b> դասի նպատակին և խնդիրների համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորման, իրականացման, վերլուծության, արդյունքների գնահատման, անդրադարձի և կշռադատման (ռեֆլեքսիայի) կարողություններին:</p>
<p>Ա 3. Ներկայացնում է անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին /հոգեբանական/ և արտաքին /ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական/ գործոնները:</p>	<p><b>Գիտի</b> անձի ձևավորման սոցիալական գործոնները, դրդապատճառները, անձնավորության ինքնագիտակցության զարգացման առանձնահատկությունները, հոգեախտորոշման մեթոդները, կապը այլ գիտությունների հետ:  <b>Կարող է</b> նախագծել և կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատություններում կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացմանը նպաստող գործընթաց: Ախտորոշել և բնութագրել կրտսեր դպրոցականի ճանաչողական գործընթացների հուզականային, պահանջմունքադրդապատճառային ոլորտների, անձնային որակների առանձնահատկությունները:          Հոգեախտորոշման հիման վրա իրականացնել ուսումնադաստիարակչական և հաղորդակցական գործունեություն:  <b>Տիրապետում է</b> վերլուծության, նկարագրման, հետազոտման, ախտորոշման մեթոդներին, դրանց կիրառմանը կրտսեր դպրոցականների հոգեկան և տարիքային զարգացման գործում:</p>
<p>Ա 4. ՀՀ կրթության քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ-իրավական ակտերը, տարրական դպրոցի կրթության բովանդակությունը,</p>	<p><b>Գիտի</b> օգտվել ու ներկայացնել տարրական դպրոցի կրթության բովանդակությունն ու առանձնահատկությունները, դրանք արտացոլող փաստաթղթերն ու աղբյուրները,</p>

<p>նպատակը, խնդիրները, օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, դրանց առանձնահատկությունները հասկանալու, հիմնավորելու և ներկայացնելու կարողություններ:</p>	<p>հոգեբանամանկավարժական և մասնագիտական գործունեության կազմակերպման տեսագործնական հիմքերը:</p> <p><b>Կարող է</b> պլանավորել, նախագծել և մշակել տարրական կրթության ծրագրերին, բովանդակությանը, նպատակին, խնդիրներին, օրենքներին, օրինաչափություններին, սկզբունքներին, մեթոդներին և դրանց առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթաց:</p> <p><b>Տիրապետում է</b> տարրական դպրոցի առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպման հիմքերի ներկայացման, հիմնավորման կարողություններին:</p>
<p>Ա 5. Կրթական փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն (չափորոշիչներ, պլաններ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ):</p>	<p><b>Փիտի</b> ՀՀ կրթության մասին օրենքը, ՀՀ կրթական չափորոշիչները, պլանները, ծրագրերը, դասագրքերը, ուսումնադիրդակտիկ նյութերը, արտացոլող փաստաթղթերն ու աղբյուրները:</p> <p><b>Կարող է</b> կազմել, մշակել, իրականացնել ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթական չափորոշիչների, պլանների, ծրագրերի, դասագրքերի, ուսումնադիրդակտիկ նյութերի համապատասխան դասերի թեմատիկ պլաններ:</p> <p><b>Տիրապետում է</b> ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթական չափորոշիչների, պլանների, ծրագրերի, դասագրքերի, ուսումնադիրդակտիկ նյութերի, ձեռնարկների հետ աշխատելու հմտություններին:</p>
<p>Ա 6. Մանկավարժական տարբեր իրավիճակներում մասնագիտական վարպետության դրսևորում (պատասխանատվություն, հանդուրժողականություն, տակտ, ապրումակցում, այլն):</p>	<p><b>Փիտի</b> ներկայացնել և հիմնավորել մասնագիտական մանկավարժական մշակույթի բաղադրիչները, էթիկայի նորմերն ու կանոնները, հաղորդակցական սկզբունքներն ու տեսակները, մանկավարժական կոնֆլիկտային իրավիճակների և խնդիրների առանձնահատկությունները:</p> <p><b>Կարող է</b> հիմնավորել, վերացարկել, համեմատել մանկավարժական տարբեր իրավիճակներին բնորոշ խնդիրների լուծման եղանակներն ու մեխանիզմները՝ դրանց կիրառման համար անհրաժեշտ մասնագիտական մշակույթի ու վարպետության բաղադրիչները:</p> <p><b>Տիրապետում է</b> մանկավարժական մշակույթի բաղադրիչներին, հաղորդակցական էթիկայի նորմերին ու կանոններին, սկզբունքներին ու տեսակներին, մանկավարժական իրավիճակներին և խնդիրներին համապատասխան գործունեության և հաղորդակցման կառուցման կարողություններին:</p>
<p>Ա 7. Երեխաների, ծնողների, գործընկերների, համայնքի հետ արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու կարողություն՝ երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով, սահմանելու մարդու իրավունքներն ու պարտականությունները, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության կանոնները և իրավական նորմերը:</p>	<p><b>Փիտի</b> ներկայացնել իր դերը և նշանակությունը երեխաների, ծնողների, գործընկերների, համայնքի հետ արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու գործընթացում, երեխայի բնական իրավունքների, իրավական կարգավիճակի ձևավորման հիմնարար սկզբունքների, քաղաքացիության և երկքաղաքացիության ներպետական և միջազգային-իրավական ասպեկտների մասին:</p>

	<p><b>Կարող է</b> կառուցել, ըստ իր դերակատարության, նպատակի և նշանակության, հաղորդակցում և համագործակցություն, երեխայի իրավունքների դասավանդման և պաշտպանության ոլորտում գործունեություն ծավալել:</p> <p><b>Տիրապետում է</b> երեխաների ուսուցման ու դաստիարակության նպատակով գործընկերների, ծնողների, համայնքի հետ հաղորդակցման և համագործակցության հմտություններին, երեխայի իրավունքների պաշտպանության ներպետական միջոցներին:</p>
<p>Ա 8. Մանկավարժական փորձը, մշակույթը ուսումնասիրելու, վերլուծելու և գնահատելու կարողություն:</p>	<p><b>Գիտի</b> վերլուծել, ներկայացնել մանկավարժական մտքի, փորձի և դերի հաշվառման կարևորությունը կրթական համակարգում:</p> <p><b>Կարող է</b> ուսումնասիրել, համեմատել և վերլուծել արդի մանկավարժական փորձը, համադրել սեփական գիտելիքների ու փորձի հետ:</p> <p><b>Տիրապետում է</b> մանկավարժական փորձի, մշակույթի ուսումնասիրության, վերլուծության, գնահատման, սեփական անձնային մասնագիտական աճի նախագծման կարողություններին:</p>
<p><b>Բ. Կրթական ծրագրի գործնական կոմպերենցիաների շրջանակը</b></p>	<p><b>Ուսումնառության վերջնարդյունքները</b></p>
<p>Բ 1. Կիրառում է մասնագիտական մանկավարժական աշխատանքում առողջ ապրելակերպի, կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների հետ աշխատանքի կազմակերպման մեթոդաբանությունը, պլանավորում, կազմակերպում, իրականացում, ղեկավարում, վերահսկում, գնահատում է մանկավարժական գործընթացը համընդհանուր ներառականության պայմաններում:</p>	<p><b>Գիտի</b> հիմնավորել ու ներկայացնել կրթական գործընթացում իր մասնագիտական գործունեության իմաստավորման, նպատակների, խնդիրների գիտատեսական հիմքերը:</p> <p><b>Կարող է</b> կազմակերպել, իրականացնել կրթական գործընթացում իր մասնագիտական գործունեության իմաստին, նպատակին և խնդիրներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթաց:</p> <p><b>Տիրապետում է</b> ուսումնադաստիարակչական գործընթացի նախագծման, կազմակերպման, պլանավորման, գնահատման, անդրադարձման գործնական կարողությունների կիրառմանը պրակտիկաների ընթացքում:</p>
<p>Բ 2. Կիրառում է մանկավարժության ոլորտի հիմնական սկզբունքները և մեթոդները մանկավարժական գործունեության ընթացքում, լուծում է մասնագիտական խնդիրներ, կողմնորոշվում է մանկավարժական տարբեր իրավիճակներում:</p>	<p><b>Գիտի</b> մանկավարժական ոլորտի հիմնական սկզբունքներն ու մեթոդները, հիմնավորել ու ներկայացնել մանկավարժական իրավիճակների, խնդիրներ առաջադրելու, վերլուծելու և համադրելու, գնահատելու և լուծումներ գտնելու տեսամեթոդական հիմքերը:</p> <p><b>Կարող է</b> վերլուծել, համեմատել և համադրել տարբեր մանկավարժական իրավիճակները, առաջադրված խնդիրները, դրանց լուծման ուղիներն ու մեթոդները:</p> <p><b>Տիրապետում է</b> մանկավարժական իրավիճակների, խնդիրների առաջադրման, վերլուծության, գնահատման և լուծումների հիմնավորման կարողություններին:</p>
<p>Բ 3. Մանկավարժական թեմաներով անհատական, հետազոտական աշխատանքների պատրաստում:</p>	<p><b>Գիտի</b> ընտրել, հետազոտել արդիական հոգեբանամանկավարժական հիմնախնդիրներ, դրանց առնչվող գիտական աղբյուրներն ու</p>

	<p>տեսությունները:</p> <p><b>Կարող է</b> ձևակերպել, մուտքագրել և ներկայացնել հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները հետազոտական աշխատանքների չափանիշներին համապատասխան:</p> <p><b>Տիրապետում է</b> վերլուծական, քննադատական, վերացական մտածողությանը, գիտատեսական նյութերի հիման վրա հետազոտական աշխատանքների կազմակերպման, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունների օգտագործման հմտություններին:</p>
<p>Բ 4. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը:</p>	<p><b>Գիտի</b> ներկայացնել, վերլուծել, հիմնավորել սեփական գործունեությունը ուսումնական գործընթացում:</p> <p><b>Կարող է</b> պլանավորել, հիմնավորել սեփական գործունեությունը ուսումնառության ընթացքում, գնահատել սեփական մասնագիտական աճը:</p> <p><b>Տիրապետում է</b> սեփական, մասնագիտական գործունեությունը ուսումնառության գործընթացում կազմակերպելուն, գնահատում է սեփական մասնագիտական աճը:</p>
<p>Բ 5. Մեկնաբանելու սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորելու կայուն հետաքրքրություն:</p>	<p><b>Գիտի</b> հիմնավորել, ներկայացնել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություններ և շարունակական ինքնազարգացման պատրաստականություն:</p> <p><b>Կարող է</b> պլանավորել սեփական մասնագիտության սոցիալական նշանակության համապատասխան հետաքրքրությունների զարգացման գործընթացը:</p> <p><b>Տիրապետում է</b> մասնագիտական զարգացման և ինքնազարգացման պլանավորման և իրականացման կարողությունների և միջոցների:</p>
<p><b>Գ. Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը</b></p>	<p><b>Ուսումնառության վերջնարդյունքները</b></p>
<p>Գ 1. Սահուն ու փաստարկված գրավոր և բանավոր խոսք՝ հայերեն և օտար լեզուներով, մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ անելու և դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություն, հաղորդակցվելու անձնային, միջանձնային և մասնագիտական ոլորտում:</p>	<p><b>Գիտի</b> ուսումնասիրել, մեկնաբանել օտար լեզվով մասնագիտական գրականություն և հաղորդակցվել մասնագիտական ոլորտում:</p> <p><b>Կարող է</b> գրավոր և բանավոր ներկայացնել տեքստեր և ցուցադրություններ, գիտական տեքստեր՝ ավարտական տարում օգտագործելով հաղորդակցման տարբեր կարողություններ:</p> <p><b>Տիրապետում է</b> օտար լեզվով մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթների և արտահայտությունների, պարզ տեքստեր մասնագիտական թեմայի շուրջ կազմելու և թարգմանելու, հաղորդակցվելու հմտություններին:</p>
<p>Գ 2. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, արագացնելու և խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն:</p>	<p><b>Գիտի</b> տիրապետել, կիրառել տեղեկատվական մասնագիտական տեխնոլոգիաների հմտությունները՝ մասնագիտական խնդիրների լուծման և անձնային որակների զարգացման համար:</p> <p><b>Կարող է</b> կիրառել տեղեկատվական և մասնագիտական տեխնոլոգիաները՝ մասնագիտական խնդիրներ լուծելու նպատակով:</p> <p><b>Տիրապետում է</b> համակարգչից ազատորեն օգտվելու,</p>

	<p>հայտնի ծրագրային փաթեթներ (Word, Excel, PPT, Internet, էլեկտրոնային որոնման և վերլուծման գործիքներ) օգտագործելու, էլեկտրոնային գրադարանային համակարգերից և տվյալների բազաներից օգտվելու հմտություններին:</p>
<p>Գ 3. Հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթների ներկայացում:</p>	<p><b>Գիտի</b> հումանիտար, բնագիտական և սոցիալ-տնտեսագիտական գիտությունների ոլորտներում կիրառվող ընդհանուր հասկացությունները, սահմանումները:  <b>Տիրապետում է</b> դրանց ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին:</p>
<p>Գ 4. Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն և անհրաժեշտության դեպքում 1-ին բուժօգնության ցուցաբերում:</p>	<p><b>Գիտի</b> արտակարգ իրավիճակներում անվտանգ վարվելակերպի և բնակչության պաշտպանության հիմունքները:  <b>Տիրապետում է</b> անհատական պաշտպանության միջոցների կիրառության սկզբունքներին, կոլեկտիվ պաշտպանության հիմունքներին և արտակարգ իրավիճակներում շտապ բժշկական օգնության կազմակերպման ձևերին ու եղանակներին:</p>
<p>Գ 5. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:</p>	<p><b>Գիտի</b> թիմում աշխատելու հիմնական սկզբունքները:  <b>Կարող է</b> արդյունավետորեն կատարել որոշակի գործառնություններ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, կատարել առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ:  <b>Տիրապետում է</b> հետազոտության արդյունքները վերլուծելու և դրանք պրակտիկայի ընթացքում կիրառելու հմտություններին:</p>
<p>Գ 6. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական կարողություն, կրում է պատասխանատվություն ազգային և համամարդկային արժեքների պահպանման և ներկայացման համար:</p>	<p><b>Գիտի</b> հիմնավորել, ներկայացնել շարունակական կրթության նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություններ ինքնակրթությամբ զբաղվելու, մասնագիտական և անձնային զարգացման խնդիրներն ինքնուրույն պլանավերլու պատրաստականություն:  <b>Կարող է</b> ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը, պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել օրենսդրությունը և դրա կիրառման պրակտիկան, մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել հարափոփոխ և պահանջկոտ աշխատանքային միջավայրին:</p>

## 12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳՊՀ-ում իրականացվում է ուսանողակենտրոն ուսուցում, ուսումնական ծրագրի իրականացման ընթացքում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ մեթոդներ, որոնք օգնում են հասնել ուսումնական ծրագրի նպատակներին: Դասախոսներն առաջնորդվում են հետևյալ մեթոդներով՝

**Բովանդակային ուսուցում/դասախոսություն.** ուսանողներին ներկայացվում են հիմնարար գիտելիքներ տեսական-պատմական և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսությունների ու սկզբունքների վերաբերյալ:

**Մասնագիտական գրականության ընթերցում և քննարկում.** ներկայացված նյութերի համընդգրկուն ուսումնասիրություն, նախագծում, քննադատական գնահատում, դրա հիման վրա համեմատական վերլուծություն, քննարկում և ամփոփում:

**Աշխատանքային խմբերի սեմինարներ.** դասավանդման ակտիվ մեթոդներ՝ Մտագրոհ, Վենի դիագրամ, Խորանարդի մեթոդ, Քառաբաժան, որոնք ներառում են՝ աշխատանք խմբերում, սահիկահանդեսի ցուցադրում, տեսաֆիլմերի ցուցադրում և քննարկումներ, բանավեճեր՝ դիրքորոշումների և փաստարկների ձևակերպում և ներկայացում:

**Համագործակցային ուսումնառություն.** նորարարական մանկավարժական մեթոդ, որը խրախուսում է ուսանողին ակտիվ սովորել և կառուցողական համագործակցություն իրականացնել փոքր և մեծ խմբերում, նպաստում է վերլուծական և քննադատական մտածելակերպի ձևավորմանը, մշակում է թիմում աշխատելու, ժամանակը կառավարելու հմտություններ:

**Մանկավարժական իրավիճակների ուսումնասիրման մեթոդ.** ուսանողներին ներկայացվում են մանկավարժական իրավիճակներ, մասնագիտական աշխատանքային իրավիճակներ: Նյութը ներկայացվում է առանց մեկնաբանությունների և գնահատման: Ուսանողներին առաջարկվում է վերլուծել իրավիճակը անհատապես կամ խմբով, գրավոր կամ բանավոր ձևով: Կազմակերպվում է իրավիճակի համատեղ քննարկում: Սույն մեթոդը թույլ է տալիս զարգացնել խնդիրների/պրոբլեմների լուծման և որոշումների կայացման կարողություններ:

**Տեսական գիտելիքների կիրառում.** կիրառում դպրոցում, ինչպես նաև համապատասխան կառույցներում և կազմակերպություններում պրակտիկա անցնելու միջոցով: Դպրոցի փաստաթղթերի ուսումնասիրություն, հոգեբանամանկավարժական հետազոտություն իրականացնելու, մեթոդական նյութերի, դասի պլան-կոնսպեկտի, դասի վերլուծության, զննական և դիդակտիկ նյութերի կազմում:

**Վերլուծական աշխատանք/քննադատական մտածողություն.** խմբային աշխատանք, վերլուծական-համադրական աշխատանք-հետադարձ կապ, «Բլից հարցում», թեստային աշխատանք, սահիկահանդեսի պատրաստում և ներկայացում, մանկավարժական իրավիճակների, դասերի իրականացման ընթացքի վերլուծություն, տրամաբանական-վերլուծական կարողությունները զարգացնող այլ առաջադրանքներ:

**Ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանք:** Ծրագիրը հիմնվում է լայն գործիքակազմի վրա, ինչն օգնում է ուսանողներին իրականացնել ինքնուրույն աշխատանքներ և ապահովել կայուն կապ դասախոսների հետ (առցանց և էլեկտրոնային հետազոտություններ, որոնք օգնում են ուսանողին ինքնուրույն ծանոթանալ մասնագիտական ոլորտին, վերլուծել դրանք, փնտրել առաջադրված հարցերի և առաջադրանքների պատասխանները, որպեսզի լավագույնս պատրաստվեն սեմինարներին, դասախոսություններին և արդյունքների գնահատման այլ ձևերին/միջանկյալ, ամփոփիչ քննություններ/):

## 13. ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

### Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- թեստային աշխատանք,

- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքների կատարում,
- ստուգարքներ,
- ամփոփիչ քննություն,
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

**Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները**

Ուսանողների Բ1-Բ5 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- ստուգարքներ
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- ախտորոշիչ մեթոդների ու մեթոդիկաների կիրառման արդյունքների ներկայացում,
- գործնական աշխատանք,
- դերային խաղ,
- գաղափարների և հասկացությունների քարտեզագրում
- ամփոփիչ քննություն:

**Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները**

Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- Բանավոր հարցում,
- գրավոր հարցում,
- թեստային գնահատում,
- սեմինարներին մասնակցության գնահատում,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում,
- ամփոփիչ քննություն:

**14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական կաբինետներ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն:

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները պետք է ապահովվեն ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/ կամ էլեկտրոնային հրատարակություններով:

## **15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող առարկային համապատասխանող մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի որակավորում) և իրականացնում են մանկավարժական, գիտական-հետազոտական կամ գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսուցման գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենա գիտական աստիճան և /կամ/ կոչում, այդ թվում՝ «Մանկավարժություն» մասնագիտության մասնագիտական առարկաների գծով: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ պրակտիկաների բազային հանրակրթական դպրոցների, պրոֆիլային կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների աշխատակիցների համակազմից:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

### ***Մասնագետի բնութագիր.***

#### ***1. Անձնային որակներ***

Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և ինքնադրսևորվելու կարողություններ, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու կարողություն, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու կարողություն, ուսումնառողների ներուժի գնահատում:

#### ***2. Մանկավարժական որակներ.***

Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացման կարողություն, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, կրթական ծրագրի մշակման և գործնական որոշումների կայացման կարողություն:

#### ***3. Կազմակերպչական բնութագիր***

Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության կարողություն, սուբյեկտների միջև

փոխգործակցության մոդելավորման կարողություն, վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն:

#### **4. Հաղորդակցական հմտություններ.**

Խոսքի մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն, մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

#### **5. Համակարգչային ծրագրերի իմացություն**

Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում դրանք կիրառելու հմտություն:

### **Դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները**

#### **Դասախոսը պետք է՝**

- 1. Իմանա** մանկավարժության հիմունքները, կրթության բնագավառի օրենսդրությունը, կրթական փաստաթղթերով ներկայացվող պահանջները, ժամանակակից կրթության հիմնախնդիրներն ու հասկացությունները, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաները, հոգեբանամանկավարժական հետազոտությունների պլանավորման նպատակը, ներառական կրթության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները,
- 2. կարողանա** քննադատաբար վերլուծել և գնահատել տարբեր կրթական մոտեցումները, աշխատել տարբեր լսարաններում, տարբեր մանկավարժական մեթոդներով կազմակերպել և համակարգել ուսուցման գործընթացը, դասավանդման, հետազոտության և հոգեբանամանկավարժական գնահատման մեթոդները, վերլուծել ու բարելավել ուսուցման գործընթացի արդյունքները, դրսևորել ուսուցման գործընթացում արդյունավետ հաղորդակցման կարողություններ, զարգացնել մանկավարժական հաղորդակցման մշակույթը,
- 3. տիրապետի** մասնագիտական և մանկավարժական հմտություններին, կրթության արդի հայեցակարգերին, մանկավարժական մշակույթի զարգացման և մանկավարժի անհատական գործունեության մոդելի ձևավորման հմտություններին, տվյալ ուսուցման ձևի կազմակերպման համար անհրաժեշտ իրազեկություններին (կոմպետենցիաներին):

### **16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մանկավարժության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու մանկավարժության մագիստրոսի որակավորման աստիճան,

- ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

### **17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել հանրակրթական դպրոցներում՝ որպես տարրական դասարանների ուսուցիչ (դասվար), մանկատներում, արտադասարանական ուսումնադաստիարակչական կենտրոններում որպես մանկավարժ, մանկավարժական գիտակրթական կենտրոնների /համալիրների/ աշխատակից, դաստիարակչական հաստատությունների մանկավարժ, աշխատակից, շտկողական-զարգացնող հաստատությունների աշխատակից:

### **18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ**

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրի կայունությունը պայմանավորող գործոններն են մանկավարժական մասնագիտության նկատմամբ հասարակության հարգալից վերաբերմունքը, դիմորդների շրջանում մանկավարժության նկատմամբ եղած հետաքրքրությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզում դպրոցների, քոլեջների, այլ ուսումնական հաստատությունների առկայությունը, հանրապետության և մարզի ուսումնական հաստատություններում աշխատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում աշխատելու դրական փորձը, առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը, բակալավրի որակավորմամբ մանկավարժի՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, ուսման համեմատաբար ցածր վարձավճարը, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի կադրային և մեթոդական պատշաճ ապահովվածությունը, պրակտիկ մանկավարժների, ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի Գավառի մասնաճյուղի, Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության հետ ամբիոնի համագործակցությունը, ուսանողների համար անհրաժեշտ պրակտիկայի բազայի առկայությունը՝ ի դեմս մարզի դպրոցների, քոլեջների, այլ ուսումնական հաստատությունների, շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ «Learn.GSU» համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ «E-Library.GSU» առկայությունը, հանրակրթության բարեփոխումներին զուգընթաց մասնագիտական կրթական ծրագրի վերանայման և բարելավման շարունակական աշխատանքները, մանկավարժին ներկայացվող արդի պահանջներին մասնագիտական կրթական ծրագրի վերջնական արդյունքների համապատասխանեցման աշխատանքները:

Կրթական ծրագիրն ունի նաև որոշակի ռիսկեր: Բացասական գործոններ են անվճար (պետպատվեր) տեղերի փոքր թիվը, ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալապես անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզում տարեց տարի նկատվող ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, երկրորդ և երրորդ հայտերով դիմորդների ընդունելությունը, 1 տարի սովորելուց հետո այլ բաժիններ կամ առկայից հեռակա ֆակուլտետ ուսանողների որոշ մասի տեղափոխությունը, հեռավար ուսուցման հնարավորության բացակայությունը, մասնագիտական կրթական ծրագրի՝ օտար լեզվով մշակված չլինելը, Մանկավարժություն մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի բացակայությունը, ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Մանկավարժական բաժնի ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, մասնագիտությամբ աշխատանք գտնելու դժվարությունները, փորձառու ուսուցիչների կողմից երիտասարդ մասնագետների նկատմամբ անվստահությունը:

Վտանգները հաղթահարելու և մասնագիտական կրթական ծրագրի կայունությունը ապահովելու միջոցներն են ԳՊՀ-ի և հովանավոր կազմակերպությունների կողմից ուսանողների ֆինանսական աջակցությունը, սովորողների համար օտար լեզվի լրացական դասընթացների, սեմինարների, ամառային և ձմեռային դպրոցների կազմակերպումը, արդի SՀS-ների ընձեռած հնարավորությունների արդյունավետ և նպատակային օգտագործումը, հեռավար դասերի կազմակերպումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին մասնակցությունը, տարբեր ծրագրերով, դրամաշնորհային միջոցներով ամբիոնի դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացումը, կրթական ծրագրի իրականացման մեթոդական, տեխնիկական հիմքերի արդիականացումն ու շարունակական համալրումը, գործընկեր դպրոցների և ոլորտի այլ կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման նպատակով բենչմարքինգի գործիքների կիրառումը:

# ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- ✓ կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- ✓ կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- ✓ կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր

աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը և այլն,

- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատաժամալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 30-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 15 շաբաթը հատկացվում է ուսումնական լսարանային պարապմունքներին, 1 շաբաթը՝ առաջին միջանկյալ քննությանը, 1 շաբաթը՝ երկրորդ միջանկյալ քննությանը և ստուգարքներին, իսկ 3 շաբաթը նախատեսված է գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 28-34 ժամ:

Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը 240 կրեդիտ է:

### **3. Դասընթացները և կրթական մոդուլներ**

Ուսումնական ծրագրում (ալլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

- Ա) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,
- Բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

#### 4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

##### 4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր Մաթեմատիկական և բնագիտական և ընդհանուր մասնագիտական, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

*Աղյուսակ 1*

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթաց	39	17
պարտադիր	36	14
կամընտրական	3	3
Ընդհանուր Մաթեմատիկական և բնագիտական դասընթաց	9	4
պարտադիր	6	2
կամընտրական	3	2
Ընդհանուր մասնագիտական դասընթաց	166	42
պարտադիր	153	33
կամընտրական	10	6
կուրսային աշխատանքներ	3	3
Կրթական այլ մոդուլներ	26	4
<b>Ընդամենը</b>	<b>240</b>	<b>85</b>

#### 4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների (ՀՍԳ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

##### ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 2

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ռուսաց լեզու - 1	3	30(0/30/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու - 2	3	30(0/30/0)	2	քննություն
Օտար լեզու (անգլերեն) – 1	3	30(0/30/0)	1	ստուգարք
Օտար լեզու (անգլերեն) – 2	3	30(0/30/0)	2	քննություն
Հայոց պատմության հիմնահարցեր -1	3	30 (20/10/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր 2	3	30 (20/10/0)	2	քննություն
Տրամաբանության հիմունքներ	3	30 (20/10/0)	2	ստուգարք
Իրավագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	ստուգարք
Փիլիսոփայության հիմունքներ	4	50 (40/10/0)	7	քննություն
Հետազոտության մեթոդաբանություն	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Կրոնագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Ֆիզիկական դաստիարակություն - 1	0	30 (0/30/0)	1	ստուգարք
Ֆիզիկական դաստիարակություն - 2	0	30 (0/30/0)	2	ստուգարք
Շախմատի տեսություն և պրակտիկա	3	60 (20/40/0)	3	ստուգարք

<sup>2</sup> Այսուհետ՝ **դ** - դասախոսություն, **գ** - գործնական կամ սեմինար պարապմունք, **լ** - լաբորատոր աշխատանք:

**ՀԱՏ կամընտրական դասընթացներ**

ՀԱՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 3

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մշակութաբանության հիմունքներ	3	30(20/10/0)	5	ստուգարք
Քաղաքագիտության հիմունքներ				
Տնտեսագիտության հիմունքներ				

**4.1.2. Ընդհանուր Մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամաս**

Ծրագրի ընդհանուր Մաթեմատիկական և բնագիտական դասընթացների (ԸՄԲԴ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական

**ԸՄԲ պարտադիր դասընթացներ**

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 4

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3	30 (20/10/0)	2	ստուգարք
Տեղեկատվական տեխնոլոգիաների	3	30 (20/10/0)	1	ստուգարք

կիրառման հիմունքներ				
---------------------	--	--	--	--

### ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 5

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Սոցիոլոգիա	3	30(20/10/0)	2	ստուգարք
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր				

#### 4.1.3. Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթամաս

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

Աղյուսակ 6

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ընդհանուր մանկավարժություն - 1	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Ընդհանուր մանկավարժություն - 1	3	30 (20/10/0)	4	քննություն
Ներառական կրթության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն-1	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն-1	3	30 (20/10/0)	4	քննություն

Հայոց լեզու-1	6	60 (30/30/0)	1	ստուգարք
Հայոց լեզու -2	6	60 (40/20/0)	2	քննություն
Հայոց լեզու -3	6	60 (40/20/0)	3	ստուգարք
Հայոց լեզու -4	6	60 (40/20/0)	4	քննություն
Հայոց լեզու -5	3	40 (20/20/0)	5	ստուգարք
Հայոց լեզու -6	3	40 (20/20/0)	6	քննություն
Հայոց լեզու -7	3	40 (20/20/0)	6	քննություն
Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա- 1	6	60(40/20/0)	4	ստուգարք
Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա- 2	6	60(40/20/0)	5	ստուգարք
Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա- 3	6	60 (40/20/0)	6	քննություն
Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա- 4	6	60 (40/20/0)	7	քննություն
Մանկական գրականություն	6	60(40/20/0)	7	քննություն
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ-1	6	60 (40/20/0)	2	քննություն
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ -2	6	60 (40/20/0)	3	քննություն
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ -3	6	60 (40/20/0)	4	քննություն
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ 4	3	40 (20/20/0)	5	ստուգարք
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ -5	3	40(20/20/0)	6	քննություն
Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ -6	3	40 (20/20/0)	7	քննություն
Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-1	6	60 (40/20/0)	4	ստուգարք
Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2	6	60(40/20/0)	5	քննություն
Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-3	6	60 (40/20/0)	6	ստուգարք
Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-4	6	60(40/20/0)	7	քննություն

Կերպարվեստ և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	60(40/20/0)	1	քննություն
Տեխնոլոգիա և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	60 (40/20/0)	1	քննություն
Երաժշտություն և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	60 (40/20/0)	1	քննություն
«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դասավանդման մեթոդիկա	5	50 (30/20/0)	8	ստուգարք
Մանկավարժական տեխնոլոգիաներ	5	50 (30/20/0)	8	ստուգարք
Ֆիզիկական դաստիարակության տեսություն և դասավանդման մեթոդիկա	2	30 (20/10/0)	7	ստուգարք
Կուրսային աշխատանք /Մանկավարժություն/, Հոգեբանություն/	1		4	քննություն
Կուրսային աշխատանք - Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա	1		5	քննություն
Կուրսային աշխատանք - Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	1		6	քննություն

*Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ*

Լեզվական վերլուծության սկզբունքները	4	40 (30/10/0)	7	ստուգարք
Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները				
Կիրառական մանկավարժություն	2	30 (20/10/0)	6	ստուգարք
Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն				
Սոցիալական մանկավարժություն	4	40 (30/10/0)	8	ստուգարք
Մանկավարժության պատմություն				

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 3 կրեդիտ աշխատաժամավալով կուրսային աշխատանքների կատարում, որի արդյունքների ստուգումն իրականացվում է կրեդիտային եղանակով:

**4.1.4. Կրթական այլ մոդուլներ**

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ 7

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մանկավարժական պրակտիկա	18	4,6,8	ստուգարք/քննություն/քննություն
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	8	8	քննություն

**5. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը**

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրսղեկների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերի քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

**6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը**

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար

ընդունվում է ներքոհիշյալ աղյուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

*Աղյուսակ 8*

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացա	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրգումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

2. Միավորների բաշխումն ըստ գործոնների

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 9

h/h	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	1-ին միջանկյալ քննություն	20
3	2-րդ միջանկյալ քննություն	20
4	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	20
5	Վերջնական հանրագումարային քննություն	12-30
<b>Ընդամենը</b>		<b>100</b>

բ/ Սպուզարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 10

h/h	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	40
4	Վերջնական հանրագումարային ստուգում	20-50
<b>Ընդամենը</b>		<b>100</b>

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 11

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորը
1	Բովանդակության ամբողջականությունը /լիարժեքությունը/	30
2	Կատարման ինքնուրույնությունը	25
3	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15
4	Ներկայացման և պաշտպանության որակը	30
<b>Ընդամենը</b>		<b>100</b>

դ/ Մանկավարժական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 12

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավոր	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	20	գնահատման ժամանակ 20 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Փորձնական կամ բաց դասեր	20	Գնահատումը իրականացվում է հավելվածներում բերված արձանագրություններին համապատասխան, յուրաքանչյուր հարցադրման հասանելիք միավորը հաշվարկելով ընդհանուր միավորի և հարցերի քանակի քանորդով
3	Արտադասարանական միջոցառումներ	20	
4	Հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ և բնութագրերի կազմում	20	
5	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	20	Գնահատումը իրականացվում է՝ կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն

ե/ Մանկավարժական պրակտիկա /ստուգարք/

Աղյուսակ 13

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորներ
1	Հաճախումներ	30
2	Աշխատանքային պլանի կատարում	30
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	40

ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 14

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+/1,7 – 4,0

h/h	Գործոններ	Միավոր
1	Աշխատանքի Թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10

### 6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը՝ կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

### 6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից

ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6.2.3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի բովանդակությունը հարստացնելու և արդիականացնելու, մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքներ, հանձնարարում ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6.2.7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյունների միավորների բազմապատկման արդյունքում)։

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

**Օրինակ 1.**

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը				<b>25,2=26</b>
/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

**Օրինակ 2.**

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/

1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				12,8=13

Այսպիսով,  $V_{\text{ընթ}} = 4x * Գx.$ , որտեղ

$V_{\text{ընթ}}$ -ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

$4x$ -ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

$Գx$ -ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի  $/0,4+0,4+0,2=1/$ ,  $/0,4+0,6=1/$ :

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

### 6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված Թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /Թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

#### **6.4. Հանրագումարային ստուգում**

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերոնշյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝

համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

## **7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը**

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ✗ ծրագրային կրեդիտների քանակը,
- ✗ որակավորման կրեդիտների քանակը,
- ✗ վարկանիշային միավորները,
- ✗ միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\text{ՈԿ} = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$ՎՄ = \sum \text{Կրեդիտ Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ  $3,0 = 6 \cdot 8$  հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

## **8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները**

### *8.1 Լուծարք*

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է հինգ գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում։

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար։

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25-ի և պակաս՝ 40-ից։

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին։

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, իսկ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով։

### *8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները*

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25-ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ

քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

## **9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը**

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

9.4 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

## **Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը**

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ:

10.2. Ավարտական աշխատանքի Թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում

բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

10.4. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 8-ի և Աղյուսակ 13-ի:

## **10. Ծրագրի ավարտական պահանջները**

11.1 Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

11.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր Մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

11.3 Մնացած 171 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և մասնագիտության համար տրվում է առանձին (մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

11.4 Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ

բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

## **12. Կրեդիտների փոխանցումը**

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

## **13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,

- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

**2024-2025 ուսումնական տարի**

**Աշնանային կիսամյակ**

*Աղյուսակ 15.*

01 սեպտեմբերի 2024թ. – 22 դեկտեմբերի 2024թ.	
Ուսուցման սկիզբ	01 սեպտեմբեր
1-ին միջանկյալ քննություն	30 հոկտեմբերի -03 նոյեմբերի
2-րդ միջանկյալ քննություն	25 դեկտեմբերի - 29 դեկտեմբերի
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	18 դեկտեմբերի -22 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	25 դեկտեմբերի - 29 դեկտեմբերի
Ուսուցման ավարտ	22 դեկտեմբերի
Քննաշրջան	8 հունվարի - 26 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	30 դեկտեմբերի – 07 հունվարի

**Գարնանային կիսամյակ**

*Աղյուսակ 16.*

05 փետրվարի 2025 թ. – 25 մայիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	05 փետրվարի
1-ին միջանկյալ քննություն	02 ապրիլի - 06 ապրիլի
2-րդ միջանկյալ քննություն	29 մայիսի - 01 հունիսի
Ինքնուրույն հետազոտական աշխատանքների հանձնում,	21 մայիսի -25 մայիսի

գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	
Ստուգարքների հանձնում	29 մայիսի - 01 հունիսի
Ուսուցման ավարտ	25 մայիսի
Քննաշրջան	04 հունիսի – 22 հունիսի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	07 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	29 հունիսի – 31 օգոստոսի

## ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

### 1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական դասընթացների կրթամաս

#### 1.1. Պարտադիր դասընթացներ

24/Բ 64 Ռուսաց լեզու - 1 ( 3 կրեդիտ)  
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)  
1-ին կիսամյակ, ստուգարք

#### Դասընթացի նպատակն է՝

1. ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները,
2. ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը, զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

#### Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա՝

1. ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները,
2. հաղորդակցման պայմաններին համապատասխան խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները,
3. մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:

#### Կկարողանա՝

1. ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը
2. մեկնաբանել տեքստը,
3. փոխակերպել տեքստի ոճը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել,
5. տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի,
6. լուծել իրավիճակային խնդիրներ:
7. կառուցել բանավոր և գրավոր խոսք:

#### Կտիրապետի՝

1. ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին,
2. տարբեր երևույթների, մանկավարժական իրավիճակների, խնդիրների վերաբերյալ ռուսաց լեզվով դատողություններ անելու, լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:

#### Բովանդակություն

Тема 1. Основные фонетические и интонационные нормы русского языка. Речевые темы: «Функции педагога», «Формирование мотивации к учебной деятельности», «Стиль деятельности учителя». **Тема 2.** Лексические нормы русского языка. (Лексическое значение слова. Фразеологический оборот. Употребление синонимов, антонимов, паронимов. Лексическая

омонимия. Архаизмы, историзмы, неологизмы). Нарушения лексических норм (тавтология, паронимия, плеоназм и т.д.). Речевые темы: «Реакция эмансипации», «Реакция увлечения - хобби-реакция», «Интеллектуально-эстетические увлечения подростков». **Тема 3.** Состав слова: основа слова и окончание, корень, суффикс, префикс. Речевые темы: «Мотивационный этап организации учебной деятельности», «Операционально-познавательный этап учебной деятельности», «Метод наблюдения», «Методы беседы и анкетирования», **Тема 4.** Семантический потенциал аффиксов. Речевые темы: «Реакция группирования со сверстниками», «Реакция отказа и оппозиции», «Метод тестирования». «Общение», его виды», «Функции общения». **Тема 5.** Имя существительное (лексико - грамматические разряды, род, число, падеж имен существительных); имя прилагательное (значение и грамматические признаки имени прилагательного; изменение имен прилагательных); согласование имён существительных и прилагательных.

**24/Բ65 Ռուսաց լեզու - 2 ( 3 կրեդիտ)**  
**Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)**  
**2-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է՝**

1. ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները,
2. ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը, զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

**Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա՝**

1. ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները,
2. հաղորդակցման պայմաններին համապատասխան խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները,
3. մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները,

**Կկարողանա՝**

1. ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը
2. մեկնաբանել տեքստը,
3. փոխակերպել տեքստի ոճը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել,
5. տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի,
6. լուծել իրավիճակային խնդիրներ,
7. կառուցել բանավոր և գրավոր խոսք:

**Կտիրապետի՝**

1. ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին,
2. տարբեր երևույթների, մանկավարժական իրավիճակների, խնդիրների վերաբերյալ ռուսաց լեզվով դատողություններ անելու, լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Глагол. Значение и грамматические признаки глагола; наречие, местоимение, числительное. Речевые темы: «Факторы, обуславливающие эффективность педагогического общения, «Манера общения, «Интерактивное обучение», «Инновационные методы обучения», «Работа в малых группах (в команде)», «Анализ конкретных ситуаций (case study)». **Թեմա 2.** Причастие. Деепричастие. Причастный и деепричастный обороты. Речевые темы: «Ролевые и деловые игры», «Развитие критического мышления», «Контекстное обучение», «Индивидуальное обучение», **Թեմա 3.** Способы выражения синтаксических отношений, простое предложение, типы предложений по цели высказывания, главные члены предложения. Речевые темы: «Собственно коммуникативные умения педагога», «Дидактические умения педагога», «Педагогический такт», «Отрицательная реакция имитации», «Гипертимный тип подростка» **Թեմա 4.** Способы выражения синтаксических отношений, сложное предложение, сочинительная связь, *Речевые темы:* «Культура речи педагога», «Личностные особенности педагогов», «Общение и взаимоотношения учителей с родителями учащихся», «Междисциплинарное обучение», «Развитие критического мышления», «Лабильный тип подростков» **Թեմա 5.** Сложное предложение, подчинительная связь, прямая речь, косвенная речь. Речевые темы: «Шизоидный (интравертированный) тип подростков», «Истероидный (демонстративный) тип подростков». «Проектная технология», «Информационно-коммуникационные технологии (IT- методы)» «Установление взаимопонимания педагога и учащихся», «Изучение и понимание педагогом учеников», «Половые особенности восприятия учителями учащихся».

## **24/Բ30 Օտար լեզու՝ անգլերեն – 1 (3 կրեդիտ)**

### **Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)**

#### **1-ին կիսամյակ, սիրուզարք**

#### **Դասընթացի նպատակն է՝**

1. ընդհանուր անգլերենի հիմնական լեզվական հմտությունների զարգացում,
2. մասնագիտական անգլերենի հիմունքների ներմուծում,
3. հիմնական մասնագիտական բառապաշարի, այնուհետև մասնագիտական տերմինների ներմուծում և ուսուցում,
4. մասնագիտական նյութերի ընթերցանություն և թարգմանություն:

#### **Դասընթացի ավարտին ուսանողը**

##### **կիմանա՝**

1. անգլերեն լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում, ծանոթ կլինի անգլերեն լեզվի հիմնական հատկանիշներին,
2. ընթերցանության կանոնները, հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները,
3. օտար լեզու սովորելու և նրա բառապաշարն ու քերականությունը յուրացնելու եղանակներն ու մեթոդները:

##### **կկարողանա՝**

1. լիարժեք օգտվել երկլեզու և միալեզու լեզվաբանական բացատրական բառարաններից՝ թարգմանելով միջին բարդության տեքստեր հայերենից անգլերեն և հակառակը,
2. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել,

- վերարտադրել տեքստը օգտագործելով անցած բառակապակցությունները և դարձվածքները,
- համեմատել և գտնել տրված դարձվածքների հայերեն ճիշտ թարգմանությունը,
- խորամուխ լինել անգլերեն լեզվի առանձնահատկությունների մեջ՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները, որ առկա են անգլերենի ու մայրենի լեզվի միջև:

### **Կտիրապետի՝**

- մասնագիտական լեզվին՝ խոսքային բոլոր ձևերում,
- անգլերեն լեզվով հարց-պատասխան բնույթի զրույցին մասնակցելու, հաղորդակցվելու կարողություններին,
- անգլերեն լեզվով բանավեճեր, քննարկումներ վարելու հմտություններին,
- թարգմանություններ կատարելու հմտություններին:

### **Բովանդակությունը.**

**Unit 1.** Where are you from? Introductions and greetings; names, countries, and nationalities. **Unit 2.** What do you do? Jobs, workplaces, and school daily schedules; clock time. **Unit 3.** How much are these? Shopping and prices; clothing and personal items; colors and materials. **Unit 4.** Do you play the guitar? Music, movies, and TV programs; free-time activities and excuses; dates and times. **Unit 5.** What an interesting family! Talking about families and family members; physical descriptions and personality traits. **Unit 6.** How often do you run? Sports, fitness activities, and exercise; routines. **Unit 7.** We went dancing! Free-time and weekend activities. **Unit 8.** How's the neighborhood? Stores and places in a city; neighborhoods, houses, and apartments.

### **24/Բ31 Օտար լեզու՝ անգլերեն -2 (3 կրեդիտ) Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական) 2-րդ կիսամյակ, քննություն**

### **Դասընթացի նպատակը՝**

- ընդհանուր անգլերենի հիմնական լեզվական հմտությունների զարգացում,
- մասնագիտական անգլերենի հիմունքների ներմուծում,
- հիմնական մասնագիտական բառապաշարի, այնուհետև մասնագիտական տերմինների ներմուծում և ուսուցում,
- մասնագիտական նյութերի ընթերցանություն և թարգմանություն:

### **Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա՝**

- անգլերեն լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում, ծանոթ կլինի անգլերեն լեզվի հիմնական հատկանիշներին,
- ընթերցանության կանոնները, հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները,
- օտար լեզու սովորելու և նրա բառապաշարն ու քերականությունը յուրացնելու եղանակներն ու մեթոդները:

### **Կկարողանա՝**

1. լիարժեք օգտվել երկլեզու և միալեզու լեզվաբանական բացատրական բառարաններից՝ թարգմանելով միջին բարդության տեքստեր հայերենից անգլերեն և հակառակը,
2. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել,
3. վերարտադրել տեքստը օգտագործելով անցած բառակապակցությունները և դարձվածքները,
4. համեմատել և գտնել տրված դարձվածքների հայերեն ճիշտ թարգմանությունը,
5. խորամուխ լինել անգլերեն լեզվի առանձնահատկությունների մեջ՝ վերհանելով նմանություններն ու տարբերությունները, որ առկա են անգլերենի ու մայրենի լեզվի միջև:

### Կտիրապետի՝

1. մասնագիտական լեզվին՝ խոսքային բոլոր ձևերում,
2. անգլերեն լեզվով հարց-պատասխան բնույթի զրույցին մասնակցելու, հաղորդակցվելու կարողություններին,
3. անգլերեն լեզվով բանավեճեր, քննարկումներ վարելու հմտություններին,
4. թարգմանություններ կատարելու հմտություններին:

### Բովանդակությունը.

**Unit 9.** What does she look like? Appearance and dress; clothing and clothing styles; people. **Unit 10.** Have you ever been there? Past experiences; unusual activities. **Unit 11.** It's a really nice city. Cities; hometowns; countries. **Unit 12.** It's important to get rest. Health problems; medication and remedies; products in a pharmacy. **Unit 13.** What would you like? Food and restaurants. **Unit 14.** It's the coldest city! World geography and facts; countries. **Unit 15.** What are you doing later? Invitations and excuses; free-time. **Unit 16.** How have you changed? Life changes; plans and hopes for the future.

### 23/Բ19- Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (3 կրեդիտ) Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար) 1-ին կիսամյակ, ստուգարք

#### Դասընթացի նպատակն է՝

Հիմնարար գիտելիքներ տալ հայոց պատմության հին և միջին շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է, նաստել Հայաստանի քաղաքական,

տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբողջական պատկերացման ձևավորմանը, նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը և առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** համակողմանի ու խոր գիտելիքներ հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի վերաբերյալ:

**Կկարողանա** քննական ու ինքնուրույն մոտեցումներ ձևավորել հին և միջնադարյան ժամանակաշրջանի պատմական երևույթները գնահատելու առումով,

**Կտիրապետի** հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, կհասկանա ու կարժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը հետագա պատմական զարգացումների հետ:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Հայոց հայրենիքը և հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 2.** Վանի թագավարություն: **Թեմա 3.** Երվանդունիների պետությունը: **Թեմա 4.** Արտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 5.** Արշակունիների թագավարությունը: **Թեմա 6.** Հայկական մշակույթը 4-9-րդ դդ.: **Թեմա 7.** Մ դարի ազգային ազատագրական շարժումները: **Թեմա 8.** Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 9.** Հայաստանը Զաքարյանների օրոք: **Թեմա 10.** Կիլիկիայի հայկական պետությունը:

### **23/Բ20- Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (3 կրեդիտ)**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **2-րդ կիսամյակ, քննություն**

#### **Դասընթացի նպատակն է՝**

Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության նոր և նորագույն շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության

ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է, նպաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբողջական պատկերացման ձևավորմանը, նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը և առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի առանցքային հիմնահարցերը:

**Կկարողանա** ներկայացնել հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրները, 20-րդ դարում հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացները:

**Կտիրապետի** հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանների օրինաչափություններին և առանձնահատկություններին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Հայ ազգային ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Հայկական հարցի առաջացումը: **Թեմա 3.** Հայ ազգային-քաղաքական կուսակցություններ: **Թեմա 4.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին. հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում: **Թեմա 5.** Հայոց ցեղասպանությունը: **Թեմա 6.** Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918-1920թթ.): **Թեմա 7.** Խորհրդային Հայաստան: **Թեմա 8.** Հայաստանի անկախության գործընթացը. ՀՀ հռչակումը: **Թեմա 19.** Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

### **23/Բ53- Տրամաբանության հիմունքներ (3 կրեդիտ )**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **2-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին մի շարք տրամաբանական հիմնախնդիրների, կանոնների և օրենքների, որը կօգնի նրանց իրենց մասնագիտության ոլորտում կիրառելու և առավել շոշափելի արդյունքների հասնելու: Տրամաբանական գիտելիքը

կնպաստի ուսանողի կանոնավոր մտածողության զարգացմանը, սեփական մտքերի կոնկրետ ներկայացմանը և հիմնավորմանը:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** տրամաբանության օրենքները և սահմանման ու բաժանման կանոնները, հասկացության կազմավորման ձևերը, մտահանգման տարատեսակները,

**Կկարողանա** վերլուծել և մեկնաբանել փաստերը, բացատրել մտքի կառուցվածքի տրամաբանական կանոններն ու օրենքները, ճշմարիտ եզրակացություններ անել և հիմնավորել ստացած գիտելիքները:

**Կտիրապետի** բանավեճերի, ապացուցման, հերքման, քննադատության գործընթացներին, գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների կիրառմանը, կանոնավոր մտածողության հմտությունների, տրամաբանության օրենքների պահանջների կապակցմանը մասնագիտական առարկայի պահանջների հետ:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Տրամաբանության առարկան: **Թեմա 2.** Հասկացության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3.** Սահմանում և բաժանում: **Թեմա 4.** Դատողություն: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Դեդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 7.** Ինդուկտիվ մտահանգում: **Թեմա 8.** Ապացուցում և հերքում: **Թեմա 9.** Վարկած: Գիտական տեսության տրամաբանական հիմքերը: **Թեմա 10.** Տրամաբանության օրենքները:

### **21/Բ10- Իրավագիտության հիմունքներ (3 կրեդիտ)**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **5-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակը.**

Դասընթացի նպատակն է ապահովել իրավագիտության հիմնարար դրույթների, պետության և իրավունքի ծագման ու գործառույթների, պատմական տիպերի և ձևերի, իրավունքի հիմնական ճյուղերի հիմունքների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետաիրավական վերնաշենքի, սոցիալական կյանքի կազմակերպման պետաիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի բազմաթիվ ու բազմաբնույթ առնչությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մարդու իրավունքների և ազատությունների, հասարակության պետաիրավական վերնաշենքի կառուցվածքի և գործառույթների իմացություն:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.**

##### **Գիտենա՝**

1. պետության և իրավունքի ծագումն ու հիմնական հատկանիշները
2. պետության և իրավունքի պատմական տիպերը
3. պետության գործառույթները
4. իրավունքի հիմնական ձևերը (աղբյուրները)
5. պետության ձևերը
6. մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները
7. հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգի տարրերը
8. իրավունքի համակարգը կազմող ճյուղերի հիմունքները:

##### **Կարողանա՝**

1. սահմանել պետություն, իրավունք, պետության պատմական տիպ, պետության ձև,
2. «իրավունքի համակարգ», «իրավանորմ», «իրավահարաբերություն», հասկացությունները
3. ներկայացնել պետության և իրավունքի ծագման նախադրյալները
4. բնութագրել պետության և իրավունքի հիմնական հատկանիշները
5. դասակարգել պետության և իրավունքի պատմական տիպերը
6. ներկայացնել պետության հիմնական ձևերը
7. դասակարգել պետության գործառույթները
8. տարբերակել իրավունքի աղբյուրները
9. վերլուծել իրավունքի հիմնական ճյուղերը:

##### **Տիրապետի՝**

1. սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտներին
2. վարչական իրավունքի հիմունքներին

3. քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմունքներին
4. աշխատանքային իրավունքի հիմունքներին
5. բնապահպանական իրավունքի հիմունքներին
6. ընտանեկան իրավունքի հիմունքներին
7. ֆինանսական իրավունքի հիմունքներին
8. քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմունքներին
9. միջազգային իրավունքի հիմունքներին

### **Բովանդակությունը.**

**ԹԵՄԱ 1.** Իրավագիտության ուսումնասիրման առարկան և մեթոդները: **ԹԵՄԱ 2.** Պետության և իրավունքի ծագումը: **ԹԵՄԱ 3.** Պետության ծագման մասին հիմնական ուսմունքները: **ԹԵՄԱ 4.** Պետության հիմնական տարբերիչ հատկանիշները: **ԹԵՄԱ 5.** Պետության և իրավունքի պատմական տիպերը: **ԹԵՄԱ 6.** Պետության և իրավունքի ձևերը: **ԹԵՄԱ 7.** Պետության գործառույթները: **ԹԵՄԱ 8.** Պետական ապարատի հասկացությունը և կառուցվածքը: **ԹԵՄԱ 9.** Սահմանադրական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 10.** Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ.11** Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 12.** Աշխատանքային իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 13.** Ընտանեկան իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 14.** Վարչական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 15.** Ֆինանսական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 16.** Բնապահպանական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 17.** Ազգային և միջազգային իրավունք:

### **23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ (3 կրեդիտ )**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)**

#### **5-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն կընձեռի խորությամբ ընկալելու շրջակա միջավայրն ու վերլուծելու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմելու հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջմունքների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ: Սովորողը, ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին, հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության

հիմնախնդիրների վերաբերյալ: Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** փիլիսոփայության գիտական-մեթոդաբանական, աշխարհայացքային, արժեքանական գործառույթները, ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման, տարբերակման սկզբունքները, քաղաքակրթական զարգացումների օրինաչափությունները և միտումները:

**Կկարողանա** պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները, տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցները, գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները, վերլուծել հասարակության պատմական զարգացման ուղիները:

**Կտիրապետի** փիլիսոփայության հիմնարար եզրույթներին, սկզբունքներին և նրանց տեսական ու գործնական նշանակությանը, կեցության, մարդկային գոյության իմաստի հիմնախնդիրներին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները: **Թեմա 2.** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը: **Թեմա 3.** Գոյաբանություն: **Թեմա 4.** Փիլիսոփայական մարդաբանություն /անթրոպոլոգիա/: **Թեմա 5.** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական-գաղափարական տարասեռ համակարգերում: **Թեմա 6.** Իմացաբանություն: **Թեմա 7.** Սոցիալական փիլիսոփայություն:

### **23/Բ27-Հետազոտության մեթոդաբանություն (3 կրեդիտ)**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **3-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն** է ուսանողներին ծանոթացնել հետազոտություն կատարելու սկզբունքներին, ընդունված կանոններին, պահանջներին, զարգացնել մասնագիտական ոլորտում խնդրո առարկայի ուսումնասիրման կարողությունները: Ապահովել ինչպես ուսումնական, այնպես էլ ակադեմիական հետազոտական աշխատանք (ռեֆերատ, կուրսային աշխատանք, բակալավրի ավարտական աշխատանք կատարելու, հոդված գրելու) հիմնական սկզբունքները, հետազոտական աշխատանքի պլանավորման կանոնները, աշխատանքին առաջադրվող կառուցվածքային և բովանդակային պահանջները, գիտական աշխատանքի էթիկայի նորմերը,

տեղեկատվություն հավաքելու, ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, մեջբերումներ ու հղումներ կատարելու, եզրակացություններ ու առաջարկություններ ձևակերպելու, այնուհետև դրանք ամփոփ ու գրագետ ներկայացնելու եղանակները: Դասընթացը կօգնի ուսանողներին արդյունավետ պլանավորել իրենց հետազոտությունները, պատրաստել գիտականության սկզբունքներին և գիտական էթիկայի կանոններին համապատասխանող աշխատանքներ:

## **Կրթական արդյունքները**

### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա՝** ինչ է գիտական ճանաչողության հասկացությունը, հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնասիրության մեթոդները, տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական գրականության, վիճակագրական նյութի հետ աշխատելու կանոնները, հետազոտական աշխատանք կատարելու եղանակները, աշխատանքում հղումների կատարման կարգը:

**Կկարողանա** հիմնավորել թեմայի արդիականությունը, ներկայացնել ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրը, առանձնացնել հետազոտության հիմնական դրույթները, ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

**Կտիրապետի** հետազոտական աշխատանքի մեթոդներին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հիմնախնդրի ուսումնասիրության ձևերին, եզրակացությունների ներկայացման գիտական ոճին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Գիտական ճանաչողությունը, գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը:

**Թեմա 2.** Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը: **Թեմա 3.**

Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները: **Թեմա 4.** Գիտահետազոտական

աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները: Մասնագիտական աղբյուրների բացահայտման

եղանակները: **Թեմա 5.** Փաստարկման ընդհանուր մեթոդաբանությունը և ակադեմիական

ազնվությունը /Մ. Ջաքարյանի «Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները <

Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» հոդվածի օրինակով/ **Թեմա 6.** Հղումները գիտական

հրապարակումներում: Հետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող

հասկացություններ: **Թեմա 7.** Ռեֆերատը որպես տեքստի հիմնական տեղեկատվության սեղմ

փոխադրություն: Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրինակելի

նմուշներ **Թեմա 8.** Գրավոր խոսք: Ծանոթագրություններ: Ներածություն: Հիմնական մաս:

Եզրակացություն: Օգտագործված գրականության ցանկ:

## **24/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (3 կրեդիտ )**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**3-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Դասընթացի նպատակը**

Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը, ոչ ավանդական կրոնների առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը:

**Կկարողանա** հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:

**Կտիրապետի** ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքները բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4.** Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դեմոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** Արդի կրոնական իր վիճակը ՀՀ-ում:

## **12/Բ56- Ֆիզիկական դաստիարակություն – 1 (0 կրեդիտ)**

### **Շաբաթական 2 ժամ ( 30 ժամ գործնական)**

#### **1-ին կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակը**

Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին՝ սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժությունների կատարման տեխնիկատակտիկական միջոցները և ստանալու հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:

#### **Կրթական արդյունքները**

##### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, թեթևատլետիկայի դերը ֆիզիկական դաստիարակման համակարգում, մարմնամարզական վարժությունների տեխնիկան:

**Կկարողանա** բացատրել ֆիզիկական դաստիարակության դասավանդման դերը հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինքնուրույն կատարել բժշկական վերահսկողություն և ինքնավերահսկողություն ֆիզիկական դաստիարակության դասերին, սպորտային խմբակներում պարապմունքների ժամանակ, տալ համապատասխան ֆիզիկական բեռնվածություն:

**Կտիրապետի** վազքի և ֆիզիկական տարբեր վարժությունների տեխնիկաներին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Տեսական տեղեկություններ: **Թեմա 2.** Կարճ տարածության վազքեր: **Թեմա 3.** Վազք 60մ, 100մ, ստարտը և եզրագծի հատումը: **Թեմա 4.** Հեռացատկ տեղից, սպորտային թափավազք: **Թեմա 5.** Միջին տարածության վազք: **Թեմա 6.** Երկար տարածության վազք: **Թեմա 7.** Ակրոբատիկա, եռացատկ տեղից: **Թեմա 8.** Հենացատկ այծի վրայից, ձգումներ կախ դրությունից: **Թեմա 9.** Հեռացատկ տեղից, հեռացատկ այծի վրայից: **Թեմա 10.** Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժեր, ցատկեր ցանցի մոտ: **Թեմա 11.** Սկզբնահարված, դաշտի տարբեր

մասերը: **Թեմա 12:** Սկզբնահարվածի ընդունում, հարձակողական հարված: **Թեմա 13.**  
Հարձակողական հարվածի շրջափակում: **Թեմա 14.** Երկկողմանի խաղ:

**12/Բ57- Ֆիզիկական դաստիարակություն – 2 (0 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Դասընթացի նպատակը**

Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժությունների կատարման տեխնիկատակտիկական միջոցները և ստանալու հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:

**Կրթական արդյունքները.**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**կիմանա** կարճ տարածության վազքերի և եռացատկի տեխնիկան:

**Կկարողանա** կատարել վազք 2000-3000 մ:

**Կտիրապետի** վոլեյբոլ խաղի տեխնիկային:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Գնդակի վերագումով սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցումը և ամրապնդումը: **Թեմա**

**2.** Կտրված հարված աջից և ձախից: **Թեմա 3.** Հարված աջից և ձախից գլորումով: **Թեմա 4.**

Հաշվով խաղ: **Թեմա 5.** Գնդակի փոխանցում վերևից, ներքևից, 2 ձեռքով ցանցի վրայից: **Թեմա**

**6.** Ցանցի մոտ գնդակի ետ մղում բռունցքով: **Թեմա 7.** Վերին ուղիղ սկզբնահարված: **Թեմա 8.**

Հանդիպակաց փոխանցումից ուղիղ հարձակողական հարված: **Թեմա 9.** Երկկողմանի խաղ:

**Թեմա 10.** Փոքր գնդակի նետում հորիզոնական և ուղղահայաց նպատակին: **Թեմա 11.** Փոքր

գնդակի նետում աջով և ձախով կամավոր թափավազքից: **Թեմա 12.** Վազք 1500-2000մ: **Թեմա**

**13.** Վազք 800-1000մ: **Թեմա 14.** Կարճ տարածության վազքեր, արագացումներ: **Թեմա 15.**

Նոնակի նետում:

**23/Բ44- Շախմատի տեսություն և պրակտիկա - (3 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական)**

**3-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակը**

Շախմատային հիմնարար պատրաստությամբ, հումանիտական դավանանքի արժեքային համակարգով և մեթոդական բարձր մշակույթով օժտված տարրական դպրոցի ուսուցչի պատրաստում մեթոդաշախմատային մասնագիտական կոմպետենտության համատեքստում:

## **Կրթական արդյունքները**

### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

- «Շախմատի տեսություն և պրակտիկա» դասընթացի նպատակները, խնդիրները, բովանդակությունը, կառուցվածքը, հիմնական հասկացությունները,
- ըստ ուսուցման տարիների աշակերտների գիտելիքներին ներկայացվող պահանջները,
- ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձևերը,
- ուսուցման հիմնական միջոցները՝ դասագիրք, աշխատանքային տետր, թեմատիկ գրավոր աշխատանքների տետր, շախմատի խաղատախտակը, խաղաքարերը, կարողանա դրանք դասավորել խաղատախտակին,
- շախմատ խաղի նպատակը, խաղաքարերի մոտավոր արժեքները, զինվորի քայլը՝ զինվորով կողանցիկ վերցնելը,
- շախմատային վերջնախաղերը:

#### **Կկարողանա՝**

- բոլոր ֆիգուրներով ճիշտ քայլեր, ճիշտ փոխատեղում կատարել,
- կազմակերպել աշակերտների ուսումնական գործունեությունը, արտադասարանական աշխատանքները,
- կիրառել միջառարկայական կապերը,
- ուսումնական գործընթացում ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:

#### **Կտիրապետի՝**

1. բոլոր ֆիգուրներով ճիշտ քայլեր կատարելուն:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Շախմատի պատմություն: Խաղատախտակի և խաղաքարերի շարժման, ինչպես նաև խաղաքար վերցնելու վերաբերյալ պատկերացումների և հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 2.** Արքա, քայլի հասկացության իմաստի, շախմատում հերթական քայլի, արքային վերաբերվող կանոնների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 3.** Թագուհի խաղաքարի, նրա շարժման, թագուհով խաղաքար վերցնելու, հարվածի տակ գտնվող դաշտերի և այլ հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 4.** Շախ և մատ: Մատի իմաստը, արքային վերաբերվող կանոնների, պատկերացումների, հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 5.** Պատ: Շախմատ խաղի հնարավոր արդյունքների, պատի իմաստի ուսուցման

մեթոդիկա: **Թեմա 6.**Նավակ և փիղ խաղաքարերի շարժման ձևերը: **Թեմա 7.** Զինվոր: Զինվորի սկզբնական դասավորությունը: Զինվորի շարժումը, հարվածի դաշտերը, զինվորով խաղաքար վերցնելը, շախ և մատ հայտարարելը: **Թեմա 8.** Քայլի գրանցում: Պայմանական նշանները շախմատում: Խաղի գրանցումը: **Թեմա 9.** Մատ թագուհիով մատի տեխնիկայի ուսուցման մեթոդիկան:

## **1.2. Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ**

### **23/Բ55- Քաղաքագիտության հիմունքներ (3 կրեդիտ )**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակն է**

ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական հասկացություններին, քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին: Սովորեցնել կողմնորոշվել բարդ և հակասական քաղաքական աշխարհում, ներկայացնել ու պաշտպանել սեփական հետաքրքրություններն ու շահերը, հարգելով մյուսների իրավունքները և շահերը:

Նպաստել ուսանողների մոտ քաղաքական իրականության, քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծական մտքի ձևավորմանը:

#### **Կրթական արդյունքները**

**Դասընթացի ավարտին ուսանողը.**

#### **Կիմանա**

- քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը,
- քաղաքական գիտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը,
- քաղաքական իշխանության էությունն ու բովանդակությունը, կառուցվածքը, լեգիտիմությունն ու լեգալությունը,
- քաղաքական համակարգի էությունը և կառուցվածքը,
- ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությունն ու բնորոշ գծերը,
- իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները,
- քաղաքական կուսակցության էությունը, գործառույթները: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը,

- քաղաքական գաղափարախոսության հասկացությունը, գործառույթները, հիմնական գաղափարախոսական հոսանքները,
- քաղաքական կոնֆլիկտի էությունը, տիպերը, հաղթահարման ուղիները:

### **Կկարողանա**

- կատարել քաղաքագիտական վերլուծություններ,
- կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում,
- պատկերացում կազմել քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,
- արտահայտել սեփական քաղաքական կարծիքը, անհրաժեշտության դեպքում միավորվել որևէ քաղաքական գաղափարի շուրջ:

### **Կտիրապետի**

- քաղաքագիտության առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
- քաղաքագիտության տեսության և պատմության հիմնական հասկացություններին, սկզբունքներին,
- հասարակական, քաղաքական ոլորտներում առկա տարբեր հիմնախնդիրներին, դրանք ներկայացնելու, բացահայտելու, վերլուծելու, քննարկելու հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: **Թեմա 2.** Քաղաքագիտության տեսական-գաղափարական ակունքները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 4.** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5.** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ **Թեմա 7.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 8.** Քաղաքական կոնֆլիկտներ: **Թեմա 9.** Քաղաքական գաղափարախոսություն: **Թեմա 10.** Քաղաքական լիդերություն:

### **12/Բ28- Տնտեսագիտության հիմունքներ (3 կրեդիտ )**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Դասընթացի նպատակն է**

ուսանողներին տալ գիտելիքներ տնտեսության զարգացման պատմական շրջաններում ձևավորված տնտեսական հարաբերությունների, տնտեսական կատեգորիաների և տնտեսական

և իրավական օրենքների համակարգերի, շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական և մակրոտնտեսական օրինաչափությունների մասին, զարգացնել գիտելիքներ տնտեսագիտական հասկացությունների, դրանց վերլուծության կարևորության և պրակտիկայում դրանք կիրառելու արդյունքում ֆինանսների ձևավորման և դրանց վերաբաշխման ուղղությամբ: Ուսումնասիրել և զուգակցել տնտեսական և իրավական օրենքները:

Դրանք անհրաժեշտ են տնտեսվարող սուբյեկտների գործունեության գնահատման, համապատասխան իրավական դաշտի ապահովման և ձեռնարկատիրական գործունեությունը վերահսկելու, ինչպես նաև ազատ մրցակցային պայմաններ ապահովելու համար:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսությունները, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունները, շուկայի հիմնական տարրերի գործողության մեխանիզմը, ձեռնարկատիրական գործունեության սկզբունքները և բիզնեսի կազմակերպման խնդիրները, պետության տնտեսական գործառույթները, տնտեսության կարգավորման շուկայական և պետական մեխանիզմները, համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունները և ազգային տնտեսության տեղն ու դերը:

**Կկարողանա** կողմնորոշվել, արտահայտվել տնտեսական հարաբերությունների ժամանակակից պրակտիկ քննարկումներում, վերլուծել, պատկերացնել շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեության նպատակներին և արդյունքներին հասնելու և շահույթ ստանալու առանձնահատկությունները, մեկնաբանել, բնութագրել տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մեկնաբանել, լուսաբանել տնտեսագիտական հասկացությունների, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը բնակչության կենսամակարդակի բարձրացման և այդ գործում մարդկային կապիտալի դերի կարևորությունը, ներկայացնել, տարբերակել ազգային տնտեսության զարգացման համեմատական ցուցանիշներ և կիրառել այլ երկրների առաջավոր փորձը, տնտեսական կոնկրետ խնդիրների հետ կապված՝ բացահայտել, առանձնացնել թերությունները և գտնել ժամանակակից պայմաններում դրանց լուծման ուղիները:

**Կտիրապետի** փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական հաջողությունների հասնելու համար ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու և խմբային աշխատանքում իրեն դրսևորելու հմտություններին, պրակտիկ աշխատանքում տնտեսական պրոբլեմներ լուծելիս մասնակից դառնալուն, քննադատական մտածողություն ցուցաբերելուն, տնտեսական և իրավական օրենքների զուգակցմանը, նորմատիվային տնտեսագիտական մոտեցումների պրակտիկ կիրառմանը, տնտեսական վերլուծություններ և հաշվարկներ կատարելու մեթոդների

գործնական կիրառությանը, ֆինանսական, բյուջետային գիտելիքները առօրյա կյանքում օգտագործելու, հանրային կյանքին տեղեկացված և ակտիվ մասնակցելու, առաջացած խնդիրները լուծելու հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Տնտեսագիտության հիմունքներ առարկան և ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Տնտեսագիտության ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Շուկայական տնտեսություն: Շուկայի հիմնական տարրերը: **Թեմա 4.** Աշխատանքի և կապիտալի շուկաներ: **Թեմա 5.** Ձեռնարկատիրական գործունեություն և շահույթ: **Թեմա 6.** Ազգային տնտեսության գնահատման հիմնական ցուցանիշները: **Թեմա 7.** Շուկայական տնտեսության ցիկլային զարգացումը: Գործազրկությունը և ինֆլյացիան: Եկամուտների բաշխման տեսությունը: **Թեմա 8.** Սպառում, խնայողություն, ներդրում: **Թեմա 9.** Դրամավարկային քաղաքականությունը և բանկային համակարգը: **Թեմա 10.** Ֆինանսական համակարգը և պետության ֆինանսական քաղաքականությունը:

### **23/Բ38- Մշակութաբանության հիմունքներ (3 կրեդիտ)**

#### **Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **5-րդ կիսամյակ, ստուգաբաղ**

#### **Դասընթացի նպատակն է**

ուսանողներին հաղորդել կայուն գիտելիքներ մշակույթ հասկացության վերաբերյալ: Արմատավորվում է համակարգված պատկերացում մշակույթ հասկացության բաղադրիչների, գործընթացների և մեխանիզմների մասին: Դասընթացը բացահայտում է մշակութաբանության՝ որպես գիտության էությունը և տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում: Օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես է առաջացել մշակույթը նախ որպես երևույթ, հոգևոր պահանջմունքի տարատեսակ, այնուհետև նպաստել մարդկային հասարակության առաջընթացին: Ծանոթանալով նախնադարից մինչ օրս տարբեր դարաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի կողմից ստեղծած մշակութային արժեքներին, հնարավորություն կունենա այն համադրելու հայ ժողովրդի կողմից ստեղծած մշակութային արժեքներին: Մշակութաբանության, որպես գիտության մեջ հայազգի մշակութաբանության էդուարդ Մարգարյանի ներդրումը, մշակույթը որպես մարդկային գործունեության հատուկ կամ առանձնահատուկ գործունեություն դիտարկելը:

#### **Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** «Մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի առանձին բաղադրիչներն ու դրսևորումները:

**Կկարողանա** բացատրել մշակույթի կառուցվածքը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ներկայացնել համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունները, լուսաբանել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները, զանազանել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները:

**Կտիրապետի** արդի դարաշրջանում մշակութային գործոնի դերի աճի կարևորման հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Մշակութաբանությունը որպես գիտություն: Մշակույթի ըմբռնումը: Մշակույթ հասկացության ծագումը և բովանդակության պատմական զարգացումը: Մշակույթի սահմանումը և գործառույթները: Մշակույթի կառուցվածքը, հոգևոր և նյութական մշակույթ: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Հոգևոր գործունեության մշակութային ձևերը, մշակույթի ազգային և համամարդկային բնույթը, զանգվածային և էլիտար մշակույթ, կրոնի, գիտության, արվեստի ու մշակույթի փոխկապակցվածությունը: **Թեմա 3.** Մշակույթ-բնություն-հասարակություն: Հասարակություն և մշակույթ, բնություն և մշակույթ, մշակույթ-արժեք-քաղաքակրթություն, քաղաքակրթության մասին արդի տեսությունները: **Թեմա 4.** Նախնադարյան հասարակության և Հին արևելքի մշակույթը: Նախնադարյան հասարակության պարբերացման հարցը: Օյկումեն: Հին Միջագետքի, Եգիպտոսի և Հնդկաստանի մշակույթները: **Թեմա 5.** Հին Հունաստանի և Հռոմի մշակույթը: Հին Հունաստանի մշակույթի զարգացման փուլերը, դասական շրջան: Հելլենիզմի մշակույթը և Հին Հռոմի մշակույթը: **Թեմա 6.** Միջնադարյան մշակույթը: Վերածննդի դարաշրջանի մշակույթը: Բյուզանդիայի մշակույթը: Եվրոպայի միջնադարյան մշակույթը: Կրթության համակարգի փոփոխությունը, համալսարանների հիմնումը /Բոլոնյան և Փարիզյան մոդելները/: Վերածնությունը Իտալիայում: Հյուսիսային վերածնունդ: Վերածնունդը Արևելքում: Արևելյան վերածննդի հարցը: **Թեմա 7.** Նոր դարաշրջանի մշակույթը /17-19-րդ դար/: 17-րդ դարի Եվրոպական մշակույթը: 18-րդ դ.մշակույթը, 19-րդ դարի մշակույթը: Ռուսական մշակույթի առանձնահատկությունները: **Թեմա 8.** Մշակույթը 20-րդ դարում: Մշակույթը որպես 20-րդ դարի պատմական իրադարձության անդրադարձ: Գեղագիտական նոր ըմբռնումների ու գեղարվեստական ուղղությունների ձևավորումը: **Թեմա 9.** Հայկական մշակույթը պատմական զարգացման ընթացքում, ձևավորման նախադրյալները, համահայկական պետական համակարգի ձևավորումը և մշակույթը: Մշակույթը Արարատի թագավորությունում: Հայկական

մշակույթը հելլենիզմի դարաշրջանում: Հայկական միջնադարյան մշակույթը: Նոր շրջանի հայկական մշակույթը:

## **2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամաս**

### **2.1 Պարտադիր դասընթացներ**

**11/Բ51- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ (3կրեդիտ )**

**Շաբաթական 2ժամ (10 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)**

**1-ին կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակը.**

1. Ծանոթացնել ուսանողներին համակարգիչների, ծրագրավորման, ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմնական հասկացություններին, համակարգիչների մինիմալ կառուցվածքին և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքին, Windows օպերացիոն համակարգին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

2. Սովորեցնել Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական կիրառական տեխնոլոգիաներով գործնական աշխատանքներ կատարելու հմտությունները՝ MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և աշխատանքը նրա հետ, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, օգտագործել MS Office փաթեթի Power Point ծրագրը շնորհանդեսներ պատրաստելու համար: Ծանոթացնել համացանցին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

#### **Կրթական արդյունքները**

##### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** ինֆորմատիկայի տեսական հիմունքները, համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները, համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչի օգտագործման հիմունքները, համացանցի կիրառության, համացանցում մատուցվող ծառայություններից օգտվելու սկզբունքները:

**Կկարողանա** աշխատել «Windows»-ի միջավայրում, օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը՝ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, MS Office փաթեթի Power Point խմբագրիչը՝ ներկայացումներ պատրաստելու համար, օգտվել համացանցից:

**Կտիրապետի** համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների, Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման հմտություններին, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրի օգտագործման հմտություններին, համացանցից օգտվելու և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ինֆորմատիկայի տեսական հիմունքները: **Թեմա 2.** Համակարգիչներ, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները: **Թեմա 3.** Ալգորիթմներ, բլոկ-սխեմաներ, ծրագրեր, ծրագրային ապահովում: **Թեմա 4.** Windows օպերացիոն համակարգ, ընդհանուր տեղեկություններ: **Թեմա 5.** Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական տեխնոլոգիաները: **Թեմա 6.** Համացանց:

## **13/Բ52 – Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (3 կրեդիտ )**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

### **2-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակն է**

«Մարդ - բնական միջավայր» համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն, հասկանալ, թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում

կայացնել և իրադրությանը համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները, նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը, լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում, մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները, ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները, նկարագրել արտակարգ իրավիճակները, վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն, արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

**Կկարողանա** կիրառել ստացած գիտելիքները, ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակներում, զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին, իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները, լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել, ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին:

**Կտիրապետի** կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին, արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին, անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին, քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին, վտանգված տեղանքում փրկարարական աշխատանքներիռեժիմների, կատարել արհեստական շնչառություն, կատարել սրտի անուղղակի մերսում:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **Թեմա 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **Թեմա 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից: **Թեմա 4.** Հակահիդրեհային պաշտպանություն: **Թեմա 5.** Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլեկտրական պարպումներից: **Թեմա 6.** Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից: **Թեմա 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **Թեմա 8.** Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **Թեմա 9.** Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **Թեմա 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **Թեմա 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **Թեմա 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **Թեմա 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **Թեմա 14.** Սրտի աշխատանքի խանգարումներ: **Թեմա 15.** Արյունահոսություններ: **Թեմա 16.** Այրվածքներ: **Թեմա 17.** Թունավորումներ:

## **2.2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ**

**13/Բ5 – Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումների մասին: Դասընթացը միտված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքը, առաջացման և զարգացման հայեցակարգերը, բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում, տիեզերքի

մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:

**Կկարողանա** վերլուծել բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխապայմանավորվածությունը, հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը, բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

**Կտիրապետի** բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին, բնություն – կենսոլորտ – մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ժամանակակից բնագիտության գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: Վերածննդի դարաշրջանը և բնագիտական հայտնագործությունները: **Թեմա 3.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: Հասկացողություն տիեզերական մասշտաբների մասին: **Թեմա 4.** Արեգակնային համակարգի կառուցվածքը: **Թեմա 5.** Երկիր մոլորակը որպես բնագիտական հայեցակարգերի կարևորագույն օբյեկտ, երկրի կառուցվածքը և ձևը: **Թեմա 6.** Մթնոլորտ, կառուցվածքի և բաղադրամասերի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները: **Թեմա 7.** Արեգակնային ճառագայթում, սպեկտրիալ բաղադրությունը: **Թեմա 8.** Ջրոլորտ, ջուրը և կյանքը: **Թեմա 9.** Երկրագնդի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները: **Թեմա 10.** Արեգակնային ճառագայթման չափման մեթոդները: **Թեմա 11.** Երկրագնդի օդային թաղանթը, առանձնահատկությունները: **Թեմա 12.** Հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների որոշման մեթոդները: **Թեմա 13.** Ջուրը երկրի վրա և դրա հատկությունները: Ջրոլորտի էկոլոգիական հիմնահարցերը: **Թեմա 14.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

**13/Բ25 – Սոցիոլոգիա (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության առանձնահատկություններին, գիտությունների համակարգում սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, ուսումնասիրության առարկային՝ հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին: Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիական գիտության ձևավորմանն ու զարգացմանը, առանցքային հասկացություններին և պարզաբանել սոցիալական աշխատանքի տարբեր բնագավառներում դրանց կիրառման առանձնահատկությունները:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** սոցիոլոգիական գիտելիքների ազատ կիրառության հիմնարար սկզբունքի, հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառության, սոցիոլոգիական հետազոտությունների կատարման մեթոդների մասին:

**Կկարողանա** բնորոշել առօրյա կյանքի երևույթների և գործընթացների սոցիալական էությունը, կիրառել սոցիոլոգիայի տեսական մոտեցումները՝ հասարակության տարբեր գործընթացների, հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով, իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

**Կտիրապետի** սոցիոլոգիական աշխարհայացքի առանձնահատկություններին, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Սոցիոլոգիան որպես գիտություն: Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները: Սոցիոլոգիայի առաջացման նախադրյալները: Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Սոցիոլոգիայի մեթոդը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Մակրո և միկրոսոցիոլոգիա: Սոցիոլոգիան և այլ գիտությունները: Սոցիոլոգիայի գործառույթները: **Թեմա 2.** Ամերիկյան և ժամանակակից արևմտյան սոցիոլոգիան: 1920-1940 թթ. էմպիրիկ սոցիոլոգիան: Թ. Փարսոնսի սոցիալական գործողության տեսությունը, սոցիալական համակարգերի հայեցակարգը: Ռ. Մերթոնի միջին մակարդակի տեսությունը և գործառական վերլուծությունը: Բախման տեսությունը: Դյուրգեյմյան ավանդույթը ֆրանսիական սոցիոլոգիայում: Վեբերական և մարքսիստական ավանդույթները գերմանական սոցիոլոգիայում: Ժամանակակից արևմտյան սոցիոլոգիա: **Թեմա 3.** Հասարակությունը որպես սոցիոլոգիական վերլուծության օբյեկտ. Հասարակության մասին պատկերացումների ծագումը:

«Հասարակություն» հասկացությունը հիմնական սոցիոլոգիական տեսություններում: Հասարակությունը որպես սոցիալական համակարգ: Հասարակության հիմնական հայտանիշները: Հասարակությունների տիպավորումը: «Սոցիալական կառուցվածք» հասկացությունը: Մակրո և միկրոկառուցվածք: Սոցիալական խմբեր: **Թեմա 4.** Սոցիալական հաստատություններ և սոցիալական կազմակերպություններ: «Սոցիալական հաստատություն» հասկացությունը: Սոցիալական հաստատությունների հիմնական հայտանիշները: Սոցիալական հաստատությունների տիպաբանությունը: Սոցիալական հաստատությունների գործառույթները: «Կազմակերպություն» հասկացությունը: Սոցիալական կազմակերպությունների ձևավորման մեխանիզմները: Սոցիալական կազմակերպության հիմնական հայտանիշները: Սոցիալական կազմակերպությունների տիպաբանությունը: **Թեմա 5.** Սոցիալական շերտավորվածություն և սոցիալական շարժունություն: Սոցիալական անհավասարության հիմնախնդիրը սոցիոլոգիայում: «Սոցիալական շերտավորվածություն» հասկացությունը: Շերտավորված համակարգերի տիպերը: Խորհրդային հասարակության սոցիալական շերտավորվածությունը: «Սոցիալական շարժունություն» հասկացությունը: Սոցիալական շարժունության հիմնական տեսակները: Սոցիալական շարժունության հիմնական ուղիներն ու մեխանիզմները: Սոցիալական շարժունության հիմնական չափանիշները: Սոցիալական շարժունությունը ԽՍՀՄ-ում և ժամանակակից հասարակության մեջ: **Թեմա 6.** Անձի սոցիոլոգիական հիմնախնդիրները և սոցիալականացումը: «Անձ հասկացությունը» և անձի տեսությունները: Անձի կառուցվածքը: Անձի տիպերը: Անձի գործառույթները, սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը: Հասարակության և անձի փոխազդեցությունը: Սոցիալականացման հասկացությունները և տեսությունները: Սոցիալականացման փուլերը: Սոցիալականացման գործակալները և ինստիտուտները: **Թեմա 7.** Շեղված վարք. «Սոցիալական նորմեր» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Վարքի շեղման բացատրության հիմնական գիտական մոտեցումները: Շեղված վարք: Շեղված վարքի պատճառները: Վարքի շեղման հիմնական ձևերը: Սոցիալական հսկողության հիմնախնդիրները, հիմնական մեխանիզմներն ու մեթոդները: **Թեմա 8.** Սոցիոլոգիական հետազոտություններ. կառուցվածքը, մեթոդիկական և տեխնիկական. Սոցիոլոգիական հետազոտության փուլերն ու տեսակները: Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագիրը: Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները: Դիտարկման մեթոդը: Փաստաթղթերի վերլուծության մեթոդը: Փորձի մեթոդ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների կիրառումը և վերլուծությունը:

### **3. Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթամաս**

#### **3.1 Պարտադիր դասընթացներ**

**23/Բ5- Ընդհանուր մանկավարժություն – 1 (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**3-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին գաղափար տալ մանկավարժության հիմնական հասկացությունների /դաստիարակություն, ուսուցում, կրթություն, զարգացում, ձևավորում և այլն/ մասին, բացահայտել ուսուցման և դաստիարակության հիմնահարցերը:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** մանկավարժության օբյեկտը, առարկան, խնդիրները, մանկավարժության հիմնական հասկացությունները՝ դաստիարակություն, կրթություն, ուսուցում, ուսուցման և դաստիարակության օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, միջոցները, կազմակերպման ձևերը և այլն, մանկավարժության դերը անձի ձևավորման գործում:

**Կկարողանա** ուսումնասիրել տարբեր առարկաների դասավանդման մեթոդիկաները, նախապատրաստվել դպրոցում անցկացվելիք մանկավարժական պրակտիկայի համար, կազմել դասի օրվա պլան, լսել, քննարկել և վարել դասեր, օգնել ուսուցիչներին կրթադաստիարակչական տարբեր հարցերում:

**Կտիրապետի** ուսուցչի մասնագիտության առանձնահատկություններին, մանկավարժական վարպետության հիմնական բաղադրիչներին՝ մանկավարժական տեխնիկա, կազմակերպիչ, դաստիարակ և այլն:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Մանկավարժության առարկան, հիմնական հասկացություններն ու խնդիրները: **Թեմա 2.** Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: **Թեմա 3.** Դպրոցականի անձի զարգացման և ձևավորման տարիքային փուլերը, դրանց համառոտ բնութագիրը: **Թեմա 4.** Մանկավարժական գործընթաց: **Թեմա 5.** Դիդակտիկական որպես գիտություն և ուսումնական առարկա: **Թեմա 6.** Կրթության բովանդակություն: Հայ ազգային կրթության տիպերը: **Թեմա 7.** Ուսումնական աշխատաքների կազմակերպման ձևերը, նրանց պատմական զարգացումը:

**23/Բ6- Ընդհանուր մանկավարժություն – 2 (3 կրեդիտ )**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**4-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել դաստիարակության էությանը, նպատակին, խնդիրներին, շարժիչ ուժերին, կազմակերպման օրինաչափություններին, սկզբունքներին ու մեթոդներին: Ապագա մանկավարժին տեղեկացնել դպրոցի բարեփոխումների ներկա ռազմավարության մասին, նրանց նախապատրաստել առարկայական մեթոդիկաների ուսումնասիրման համար:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա**

- դաստիարակության էությունը,
- դաստիարակության նպատակը, խնդիրները,
- շարժիչ ուժերը, կազմակերպման օրինաչափությունները, ձևերը, սկզբունքները, մեթոդները,
- ինքնադաստիարակության և վերադաստիարակության էությունը,
- կոլեկտիվը որպես դաստիարակության օբյեկտ և սուբյեկտ՝ կարևորելով դաստիարակության վերջնական արդյունքը:

##### **Կկարողանա**

- ըմբռնել դաստիարակության նպատակը,
- պատմական բնույթը,
- հայ ազգային դաստիարակության բնորոշ կողմերը,
- աշակերտական կոլեկտիվի օբյեկտ և սուբյեկտ լինելը, անձի զարգացման փուլերը, գնահատել ինքնադաստիարակության և վերադաստիարակության դերը մեր կյանքում:

##### **Կտիրապետի**

- դաստիարակության օրինաչափություններին, սկզբունքներին,
- մեթոդներին /գիտակցության ձևավորման, գործունեության կազմակերպման և խթանման/, հնարներին,
- աշակերտական կոլեկտիվի զարգացման առանձնահատկություններին,
- սովորողների ինքնադաստիարակության և վերադաստիարակության հարցերում գործնական մոտեցում դրսևորելուն՝ կարևորելով ընտանեկան դաստիարակության դերը՝ ելնելով ժամանակակից հասարակական դրսևորումներից,
- ուսանողը պետք է կարողանա որոշումներ ընդունել դաստիարակչական բնույթի տարբեր իրավիճակներում՝ ելնելով անձի տարիքային և անհատական առանձնահատկություններից:

##### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Դաստիարակության գործընթացի բովանդակությունը: **Թեմա 2.** Դաստիարակության տեխնոլոգիաներ և միջոցներ: **Թեմա 3.** Դաստիարակության մեթոդներ: **Թեմա 4.** Կոլեկտիվի ձևավորումն ու բնորոշ գծերը: **Թեմա 5.** Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: ԹԵՄԱ 6. Դաստիարակության բաղադրատարրերը: **Թեմա 7.** Դաստիարակության հիմնահարցերը նորմատիվային փաստաթղթերում:

## **23/Բ40– Ներառական կրթության հիմունքներ (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)**

**5-րդ կիսամյակ, ստուգաթղթ**

**Դասընթացի նպատակը** մասնագիտական կրթության գործընթացում, ներառական կրթության ներդրման հետ կապված մանկավարժական հիմնախնդիրների, սկզբունքների, մեթոդների յուրացումն է: Դասընթացի առաջին բաժնի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ներառական կրթության գաղափարական և օրենսդրական հիմքերին, հասկացություններին, պատմական զարգացման փուլերին ու առանձնահատկություններին: Երկրորդ բաժնի նպատակն է զինել ներառականության միջավայրում անհրաժեշտ և հոգեբանամանկավարժական գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, նպաստել ներառական կրթության կազմակերպման մշակույթի ձևավորմանը, մասնագիտական և անձնային որակների ու կոմպետենտությունները զարգացմանը: Երրորդ բաժինը նախատեսված է ներառական կրթության պայմաններում կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման կարողությունների զարգացմանը՝ տարբեր գիտական մոտեցումների ու մեթոդների կիրառմամբ:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա**

- մեկնաբանել ներառական կրթության էությունը, գաղափարախոսական հիմնադրությունները, օրենսդրական հիմքերն ու զարգացման հեռանկարները, հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները,
- հիմնավորել ՀՈւԱ շահերից բխող գործընթացների կազմակերպման մատահրավերներ,
- վերլուծել ներառական կրթության կազմակերպման մանկավարժական մեթոդները,
- ճանաչել մասնագիտական կոնսիլիումի անդամների միջև փոխհամագործակցության ու թիմային աշխատանքի կազմակերպման սկզբունքները,
- վերլուծել ներառական գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման առանձնահատկությունները:

## Կկարողանա

- կազմակերպել օրենսդրության ու ներառական կրթության գաղափարախոսությանը համապատասխան հաղորդակցման, ուսուցման, դաստիարարական ու զարգացման միջավայր,
- ձևավորել՝ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ԿԱՊԿՈւ սովորողների հետ աշխատանքների անհատական ուսումնական պլաններ (ԱՈւՊ)՝ ըստ սովորողների կարիքների,
- վերլուծել և կազմակերպել դրանց իրականացման ուղիները:

## Կտիրապետի

- ԱՈւՊ –ներով աշխատանքի մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմանը, անհատական մոտեցման սկզբունքներին:
- Բոլոր աշակերտներին ուսումնական գործընթացում լիարժեք ներառելու մանկավարժական և հոգեբանական միջոցների ու հնարների ընտրության հիմնավորմանն ու դրանց համապատասխան գործընթացների կազմակերպմանը:

## Բովանդակություն

**Թեմա 1.** Ներառական կրթության էությունն ու գաղափարախոսական հիմքերը: **Թեմա 2.** Հատուկ և ներառական կրթության կազմակերպման ձևերը: **Թեմա 3.** Ներառականության գաղափարի պատմական զարգացման ակունքները: **Թեմա 4.** Ներառական մանկավարժության էությունը: **Թեմա 5.** Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգ Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգեր: **Թեմա 6.** Հոգեֆիզիկական զարգացման խանգարումների դասակարգումները: **Թեմա 7.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ ներառական մանկավարժական գործընթացի կազմակերպումը: **Թեմա 8.** Սովորողների կարիքների գնահատման մեթոդաբանությունը: Բնական ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսներ: Ալբերտ Մասլոուի պահանջմունքների տեսությունը և բուրգը: **Թեմա 9.** Հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման առանձնահատկությունները: Հոգեբանական զարգացման և բարոյական ինքնակատարելագործման պահանջմունքներ: **Թեմա 10.** Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անհատական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անհատական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: **Թեմա 11.** ԿԱՊԿՈւ երեխա ունեցող ընտանիքների առանձնահատկությունները, նրանց աջակցության հոգեբանամանկավարժական ուղիներն ու մեթոդները: **Թեմա 12.** Հոգեբանամանկավարժական

դիագնոստիկ աշխատանքների կազմակերպման տրամաբանությունը, մեթոդներն ու գործիքները: **Թեմա 13.** ԿԱՊԿՈՒ երեխաների ուշադրության և հիշողության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 14.** ԿԱՊԿՈՒ երեխաների մտածողության և երևակայության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 15.** ԿԱՊԿՈՒ երեխաների բանավոր և գրավոր խոսքի զարգացման մակարդակի հետազոտություններ, հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդները: **Թեմա 16.** ԿԱՊԿՈՒ երեխաների անձնային առանձնահատկությունների և հուզական ոլորտի խնդիրների դիագնոստիկա և կարգավորման մեթոդներ:

### **23/Բ3- Ընդհանուր հոգեբանություն - 1 (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **3-րդ կիսամյակ,ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** նպաստել, որ ուսանողներն իմանան հոգեկանի կառուցվածքը՝ մանրամասն ուսումնասիրելով հոգեկանի գործընթացները, վիճակները, հուզականային ոլորտը:

#### **Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

##### **Կիմանա**

- սահմանել հոգեբանություն գիտության զարգացման առարկան, խնդիրները, սկզբունքները, հետազոտման մեթոդները, հոգեբանության հիմնական հասկացությունները:
- ճանաչել կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիական ինտեգրատիվ մակարդակները և ուղեղի գործունեության ֆունկցիոնալ համակարգը, հոգեկան երևույթների, գործընթացների ռեֆլեկտոր բնույթը, հոգեկանի կառուցվածքը:

##### **Կկարողանա**

- բնորոշել մարդու հոգեկան երևույթների առանձնահատկությունները,
- օգտագործել համապատասխան մեթոդներ, մեթոդիկաներ,
- նախագծել մասնագիտական գիտելիքների, հմտությունների զարգացում:

**Կտիրապետի** հոգեբանություն գիտության ժամանակակից տեսական հայեցակարգերին, մոտեցումներին, հոգեբանական հետազոտման մեթոդների կիրառմանը:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Հոգեբանության զարգացման փուլերը: **Թեմա 3.** Հոգեբանության ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 4.** Հոգեկանի կառուցվածքը: **Թեմա 5.** Հոգեկանի գործընթացները: **Թեմա 6.** Հուզականային ոլորտ: **Թեմա 7.** Պահանջմունքներ և նպատակներ: **Թեմա 8.** Հոգեկանի վիճակները. Տրամադրություն, աֆֆեկտ, կիրք, սթրես: **Թեմա 9.** Սթրեսի առանձնահատկությունները, տեսակները, փուլերը: **Թեմա 10.** Հետտրավմատիկ սթրես, Դեպրեսիա:

## **23/Բ4- Ընդհանուր հոգեբանություն - 2 (3 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

### **4-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել տարիքային շրջափուլերը, տարիքային առանձնահատկությունները: Հասնել այն բանին, որ սովորողները զանազան են և ուսումնասիրեն անհատական տարբերությունները: Կարողանան ստացված գիտելիքները կիրառել իրենց մասնագիտական գործունեության ոլորտներում:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա** անձի ձևավորման տարաբաժանման առանձնահատկությունները:

**Կկարողանա** ներկայացնել և միմյանցից զանազանել տարիքային շրջափուլերը և յուրաքանչյուր տարիքին բնորոշ ճգնաժամերը:

**Կտիրապետի** անհատական տարբերությունների և տարիքային առանձնահատկությունների մասին առկա գիտելիքների կիրառման մեթոդներին իրենց մասնագիտական ոլորտներում:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Տարիք հասկացության մեկնաբանումը: **Թեմա 2.** Տարիքային շրջափուլեր: Ճգնաժամեր: **Թեմա 3.** Հոգեսեքսուալ զարգացման փուլերը: **Թեմա 4.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 0-3 տարեկան: **Թեմա 5.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 3-7 տարեկան: **Թեման 6.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 7-11 տարեկան: **Թեմա 7.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. դեռահասություն: **Թեմա 8.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. ծերություն: **Թեմա 9.** Անհատական տարբերություններ. խառնվածք, բնավորություն, անձնային որակներ, գծեր: **Թեմա 10.** Մտավոր ունակություններ: **Թեմա 11.** Ընդունակություններ. օժտվածություն, տաղանդ, հանճար:

## 22/Բ34- Հայոց լեզու - 1 (6 կրեդիտ )

### Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

#### 1-ին կիսամյակ, ստուգարք

##### Դասընթացի նպատակը՝

- ներկայացնել հայոց լեզվի ծագումը, ուսումնասիրության մեթոդները և հայեցակետերը,
- ներկայացնել հայոց լեզվի զարգացման փուլերը՝ նախագրային և գրային, արևելահայերեն և արևմտահայերեն, հայերենի բարբառային տարբերակվածությունը, գործառույթները,
- Գաղափար տալ հայերենի կառուցվածքի, կառուցվածքային մակարդակների՝ հնչյունաբանության, բառագիտության և քերականության, լեզվական հիմնական միավորների վերաբերյալ,
- ներկայացնել հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, հնչյունափոխական երևույթները, հայոց այբուբենը և նրա առանձնահատկությունները,
- կատարել հնչյունաբանական, ձևաբանական, վերլուծություններ,
- ձևավորել գրագետ խոսք կառուցելու ունակություն,
- նպաստել փոքրածավալ շարադրանքներ /հետազոտական աշխատանք, տարբեր ժանրերով գրություններ/ կատարելու ունակությունների ձևավորմանը,
- ամրակայել գիտելիքները ուղղագրությունից:

##### Դասընթացի ավարտին ուսանողը

##### Կիմանա՝

- առանձնացնել հայոց լեզվի զարգացման փուլերը, գործառույթները,
- սահմանել ու տարբերակել հնչույթ և հնչյուն հասկացությունները, հնչյունների և հնչյունափոխական երևույթների տեսակները,
- տարբերակել հայերենի հնչյուններն ըստ իրենց ֆիզիկական առանձնահատկությունների,
- բացահայտել հնչյունափոխական երևույթները, ուղղախոսության և ուղղագրության կանոնները, այբուբենը:

##### Կկարողանա՝

- հասկանալ հայերենի զարգացման ընթացքի հնչյունական-հնչյունափոխական իրողությունները,
- դասակարգել հայերենի հնչյունները,
- ներկայացնել այբուբենի և ուղղագրական-ուղղախոսական կանոնների առանձնահատկությունները:

**Կտիրապետի** հնչյունները դասակարգելու, ճիշտ կարդալու, գրելու, խոսելու, հնչյունաբանական վերլուծություններ կատարելու, հնչյունափոխությունը, նրա տեսակը որոշելու կարողությունների:

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ներածություն: ԺՀԼ դասընթացը: Հայոց լեզվի զարգացման շրջանները: Նոր գրական հայերենի 2 ճյուղերը: Հայերենը ազգային, պետական և գրական լեզու: **Թեմա 2.** Հնչյունաբանություն: Հնչյուն և հնչույթ: Հայերենի հնչյունական համակարգը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, նրանց դասակարգումը: Վանկ, շեշտ, հնչերանգ: **Թեմա 3.** Հնչյունափոխություն, տեսակները: **Թեմա 4.** Ուղղագրություն և ուղղախոսություն: Մ. Մաշտոցը և հայ գրերի գյուտը: Այբուբեն: Հայերենի ուղղագրության և ուղղախոսության սկզբունքները: Ուղղագրական բարեփոխումներ:

## **22/Բ35- Հայոց լեզու - 2 (6 կրեդիտ)**

### **Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### **2-րդ կիսամյակ, քննություն**

##### **Դասընթացի նպատակը՝**

1. պատկերացում տալ բառի, նրա հատկանիշների մասին,
2. ցույց տալ բառի իմաստաբանական և իմաստափոխական հատկանիշները,
3. ներկայացնել բառապաշարի շերտերը, դրանց կիրառության առանձնահատկությունները,
4. ներկայացնել հայերենի բառակազմական հնարավորությունները
5. ծանոթացնել դարձվածքների տեսական-գործառական հնարավորություններին,
6. ներկայացնել բառարանների տեսակները,
7. ուսուցանել բառագիտական տարբեր վերլուծություններ ու գործնական աշխատանքներ կատարելու մեթոդներն ու եղանակները:

##### **Դասընթացի ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

● բնութագրել բառը, իմաստափոխությունը, համակարգել նրա տեսակները, բարդությունները,

● ներկայացնել հայերենի բառակազմական հնարավորություններն ու կաղապարները,

● բնութագրել ածանցները, դարձվածքները և խմբավորել բառարաններն իրենց տեսակներով:

##### **Կկարողանա՝**

- բացատրել բառիմաստը և ցուցադրել նրա փոփոխության պատճառներն ու առանձնահատկությունները,

- առանձնացնել բառակազմական կաղապարները, գնահատել դարձվածքների ու բառարանների նշանակությունը,
- օգտագործել դարձվածքներն ու բառարաններն ըստ իրենց նշանակության:

**Կտիրապետի** բառապաշարն ըստ տարբեր հատկանիշների դասակարգելու, դարձվածքների տեսակները, նրանց ոճական առանձնահատկությունները, բառարանների տեսակները որոշելու, ինչպես նաև ձևաբանական և բառակազմական վերլուծություններ անելու կարողությունների:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Բառագիտություն: Բառ, հատկանիշներն ու սահմանումը: Բառաձևեր: Բառ և ձևույթ: Լիիմաստ և թերիմաստ /սպասարկու/ բառեր: Բնածայնական բառեր: **Թեմա 2.** Իմաստաբանություն: Բառիմաստի բնորոշումը, նրա տեսակները: Բառի բազմիմաստությունը: Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստներ: Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. համանուն, հոմանիշ և հականիշ բառեր: **Թեմա 3.** Իմաստափոխություն: Արդի հայերենի իմաստափոխությունը, նրա տեսակները: **Թեմա 4.** Բառապաշար: Բառակազմ և բառային հիմնական ֆոնդ: Բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը: Բնիկ և փոխառյալ բառեր: Բառապաշարի դասակարգումն ըստ հայերենի զարգացման փուլերի և լեզվական տարբեր շերտերի, ըստ հուզաարտահայտչական գունավորման և ոճական կիրառության, ակտիվ և պասիվ շերտերի: Հնաբանություններ և նորաբանություններ: Բառապաշարի իմաստաբանական դասակարգումը: **Թեմա 5.** Բառակազմություն: Բառակազմության առարկան: Ձևույթներ: Բառերի ձևույթաբանական, ձևաբանական, բառակազմական վերլուծություն: Բառերի տեսակներն ըստ կազմության: Համադրական և վերլուծական բարդություններ: **Թեմա 6.** Ածանցում: Ածանցների դասակարգումն ըստ ծագման, ըստ դիրքի, ըստ խոսքի մասեր կերտելու արժեքի: **Թեմա 7.** Դարձվածաբանություն: Դարձվածք, նրա հարաբերակցությունը բառերի, բառակապակցությունների նախադասությունների, ասացվածքների, թևավոր խոսքերի հետ: Դարձվածքների դասակարգումը, նրանց կիրառությունը խոսքում: **Թեմա 8.** Բառարանագրություն: Բառարանների տեսակները:

22/Բ36- Հայոց լեզու - 3 (5 կրեդիտ )

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**3-րդ կիսամյակ, ստուգաք**

**Դասընթացի նպատակն է** գիտելիքներ տալ հայերենի ձևաբանական համակարգի՝ գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի, նրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

## **Կրթական արդյունքները**

### **Դասընթացի ավարտին ուսանողը**

**Կիմանա** սահմանել և արժևորել հայերենի խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, որոշարկել խոսքի մասերի քանակը, պարզաբանել անվանումները, տարբերակել ու բնութագրել գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի քերականական կարգերը:

**Կկարողանա** հասկանալ խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, տարբերակման յուրահատկությունները, ներկայացնել և մեկնաբանել քերականական կարգերի հատկանիշները, վիճարկել քերականական զուգաձևությունների կիրառական նպատակահարմարությունը, բացահայտել շեղումներն ու բացառությունները:

**Կտիրապետի՝** խոսքի մասերի կիրառական առանձնահատկությունները գործնականում ցույց տալու և ձևաբանական վերլուծություններ կատարելու հմտությունների:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ներածություն: Քերականություն, բաժինները: Ձևաբանության ուսումնասիրության առարկան: Քերականական կարգեր: **Թեմա 2.** Խոսքի մասեր, նրանց որոշման հիմունքները: Հայերենի խոսքի մասերը, նրանց ընդհանուր բնութագիրը: Խոսքի մասերի փոխանցումը: Փոխանունություն: **Թեմա 3.** Գոյական անուն: Գոյականը որպես խոսքի մաս, կազմությունը: Գոյականի իմաստային-քերականական խմբերը: Հատուկ և հասարակ գոյականներ, նրանց կազմությունը: **Թեմա 4.** Գոյականի թվի քերականական կարգը, նրա արտահայտությունը: Եզակի և հոգնակի թվեր: Նրանց կազմությունը և գրությունը: **Թեմա 5.** Գոյականի հոլովի քերականական կարգը: Արդի հայերենի հոլովական համակարգը: Հոլովների կազմությունը: Հոլովում. արտաքին և ներքին հոլովումներ: Այլաձև հոլովումներ: **Թեմա 6.** Գոյականի առկայացման, անձի և ոչ անձի քերականական կարգերը, նրանց ձևաբանական առանձնահատկությունները: Գոյականի կիրառությունները: **Թեմա 7.** Ածական անուն: Ածականը որպես խոսքի մաս: Ածականի կազմությունը: Ածականի տեսակները: Ածականի համեմատության աստիճանները, նրանց կազմությունը և գրությունը: Ածականների հոլովումը: Ածականների կիրառությունները: **Թեմա 8.** Թվական անուն: Թվականը որպես խոսքի մաս: Թվականների տեսակները, նրանց կազմությունը և գրությունը: Թվականների կիրառությունները: **Թեմա 9.** Դերանունը որպես խոսքի մաս: Դերանունների հարաբերակցությունը մյուս խոսքի մասերի հետ: Դերանունների տեսակները: **Թեմա 10.** Դերանունների հոլովումը: Դերանվանական և անվանական հոլովումներ: Դերանունների կրառությունները:

**22/Բ37- Հայոց լեզու - 4 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 5 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### 4-րդ կիսամյակ, քննություն

**Դասընթացի նպատակն է** բնորոշել հայերենի ձևաբանական համակարգը, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերը՝ իրենց քերականական առանձնահատկություններով հանդերձ:

#### Կրթական արդյունքները

#### Դասընթացի ավարտին ուսանողը

#### Կիմանա՝

- սահմանել բայը, մակբայը, կապը, շաղկապը, վերաբերականն ու ձայնարկությունը որպես խոսքի մասեր,
- ներկայացնել և վերհանել բայի դերբայական և եղանակաժամանակային ձևերի կազմության առանձնահատկությունները,
- հիմնավորել նրանց կիրառության առանձնահատկությունները:

#### Կկարողանա՝

- հասկանալ բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները,
- կիրառել դրանք խոսքում, տարանջատել կապ և շաղկապ, վերաբերական և ձայնարկություն խոսքի մասերը, գնահատել դրանց դերը գործնականում:

**Կտիրապետի** ձևաբանական վերլուծություններ կատարելուն:

#### Բովանդակություն

**Թեմա 1.** Բայը որպես խոսքի մաս: Բայի կազմությունը. բայաձանցներ: Բայական լծորդություններ և խոնարհումներ: Բայահիմքեր: Բայի սեռի քերականական կարգը. ներգործական, կրավորական և չեզոք սեռեր: **Թեմա 2.** Բայի դեմքի, թվի, եղանակի և ժամանակի քերականական կարգերը: Բայի դիմավոր և անդեմ ձևեր: Արդի հայերենի դերբայները, նրանց կազմությունը: **Թեմա 3.** Սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակներ, նրանց ժամանակներն ու կազմությունը: **Թեմա 4.** Անկանոն և պակասավոր բայեր, նրանց կազմությունը: Բայի ժխտական խոնարհումը: **Թեմա 5.** Մակբայը որպես խոսքի մաս: Մակբայների դասակարգումը: Մակբայների կազմությունն ու ուղղագրությունը: **Թեմա 6.** Կապը որպես խոսքի մաս: Կապերի դասակարգումը: Կապերի հոլովառությունը: Կապերի կազմությունն ու կիրառությունը: **Թեմա 7.** Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները: Շաղկապների իմաստային դասակարգումը: Շաղկապների կազմությունն ու կիրառությունը: **Թեմա 8.** Վերաբերականը որպես խոսքի մաս: Վերաբերականների տեսակները:

Վերաբերականների կիրառությունները: Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները: Կիրառությունը:

## **22/Բ38- Հայոց լեզու - 5 (3 կրեդիտ )**

### **Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### **5-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգն իր տարբեր հատկանիշներով, բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, նախադասության հատկանիշները, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները՝ ենթակա և ստորոգյալ, գոյականական անդամի լրացումները՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, նրանց տեսակները, արտահայտությունը և տրոհումը:

#### **Կրթական արդյունքները**

##### **Դասընթացի ավարտին ուսանողը**

**Կիմանա** սահմանել բառակապակցությունը և նախադասությունը որպես քերականական-շարահյուսական կարգեր, տարբերել դրանք միմյանցից, համակարգել և խմբավորել ըստ տեսակների, շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները համեմատել ու գնահատել ըստ նշանակության, կիմանա նախադասության անդամների տեսակները:

**Կկարողանա** հասկանալ բառակապակցության և նախադասության կազմության առանձնահատկությունները, բացատրել շարահյուսական կապակցման միջոցների և եղանակների նշանակությունը, դասակարգել բառակապակցություններն ու նախադասություններն ըստ տարբեր մոտեցումների, տարբերակել նախադասության անդամներն ըստ առանձնահատկությունների, նախադասության բազմակի և տրոհվող անդամները:

**Կտիրապետի** կապակցման միջոցներն և եղանակները որոշելու, բառակապակցություններն ու նախադասություններն ըստ տարբեր մոտեցումների դասակարգելու, շարահյուսական վերլուծություններ կատարելու, մասնագիտական գրականությունից, տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու, բնագրերի վրա տարաբնույթ լեզվական աշխատանքներ կատարելու, իր գիտելիքները ուրիշներին փոխանցելու, նախադասություններ և խոսք կառուցելու կարողությունների:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Շարահյուսության ուսումնասիրության առարկան: Շարահյուսության առավելագույն և նվազագույն միավորներ: Շարահյուսական կաղապարներ: **Թեմա 2.** Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները: **Թեմա 3.** Բառակապակցություն, տեսակները,

դասակարգումը: **Թեմա 4.** Նախադասություն, նրա բնորոշ հատկանիշները: Նախադասությունների դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների: **Թեմա 5.** Նախադասության տեսակներն ըստ խոսքի նպատակադրման և հնչերանգի: **Թեմա 6.** Միակազմ նախադասություններ: **Թեմա 7.** Նախադասության անդամներ, նրանց դասակարգումը: **Թեմա 8.** Ենթակա, նրա արտահայտությունը: **Թեմա 9.** Ստորոգյալ, նրա արտահայտությունն ու տեսակները: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: **Թեմա 10.** Գոյականական անդամի լրացումներ. որոշիչ, նրա արտահայտությունը: **Թեմա 11.** Գոյականական անդամի լրացումներ. հատկացուցիչ, նրա արտահայտությունը: **Թեմա 12.** Գոյականական անդամի լրացումներ. բացահայտիչ, նրա արտահայտությունը:

## **22/Բ39- Հայոց լեզու - 6 (3 կրեդիտ )**

### **Շաբաթական 6 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### **6-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել ժամանակակից հայերենի պարզ նախադասության բայական անդամի լրացումները՝ սեռի և բնության խնդիրները, պարագաները, նրանց տեսակներն ու արտահայտությունը, նախադասության տրոհվող և բազմակի անդամները, նախադասության հարակից միավորները, ինչպես նաև շարադասության տեսակները:

#### **Կրթական արդյունքները**

##### **Դասընթացի ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

1. ներկայացնել բայական անդամի լրացումները, դրանց քերականական առանձնահատկությունները,
2. սեռի և բնության խնդիրների հատկությունները, նրանց տարբերությունները,
3. պարագաների տեսակները, նրանց արտահայտությունը:
4. նախադասության հարակից միավորների բնութագիրը, նրանց տրոհման հնարավորությունները,
5. հայերենի շարադասության առանձնահատկությունները:

**Կտիրապետի** շարահյուսական վերլուծություններ կատարելու, մասնագիտական գրականությունից, տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու, բնագրերի վրա տարաբնույթ լեզվական աշխատանքներ կատարելու, իր գիտելիքները ուրիշներին փոխանցելու, նախադասություններ և խոսք կառուցելու կարողությունների:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Բայական անդամի լրացումներ, նրանց դասակարգումը: **Թեմա 2.** Սեռի և բնության խնդիրներ: **Թեմա 3.** Պարագաներ: **Թեմա 4.** Նախադասության տրոհվող անդամներ: Նախադասության բազմակի անդամներ: **Թեմա 5.** Դերբայական դարձված: Կետադրությունը: **Թեմա 6.** Նախադասության հարակից անդամներ, կետադրությունը: **Թեմա 7.** Շարադասություն:

**22/Բ39- Հայոց լեզու - 7 (3 կրեդիտ )**

**Շաբաթական 6 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**7-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգն իր տարբեր հատկանիշներով, բարդ նախադասությունների տեսակները, հատկանիշները, բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները, ներկայացնել բազմաբարդ նախադասությունների տեսակները, հատկանիշները, բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները, մեջբերվող ուղղակի և անուղղակի մեջբերվող խոսքը, դրա փոխակերպումը, բնորոշել պարբերոյթը, ներկայացնել կետադրական նշանների տեսակները:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի ավարտին ուսանողը**

**Կիմանա** բնութագրել ու սահմանել բարդ նախադասությունը, առանձնացնել ու տարբերակել նրա տեսակները, արժևորել բաղադրիչների շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները:

**Կկարողանա** հասկանալ բարդ նախադասության, նրա բաղադրիչների կապակցման առանձնահատկությունները, որոշել բարդ համադասական նախադասությունների իմաստային տեսակները, առանձնացնել բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս բաղադրիչները:

**Կտիրապետի** նախադասությունների շարահյուսական վերլուծություններ և փոխակերպումներ կատարելու հմտությունների:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները: **Թեմա 3.** Բարդ համադասական նախադասություն, նրա կառուցվածքը, իմաստային տեսակներն ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների բնույթի: **Թեմա 4.** Բարդ ստորադասական նախադասություն. ընդհանուր բնութագիրը: Գերադաս և ստորադաս բաղադրիչներ: Ստորադաս նախադասությունների շարադասությունը, կետադրությունը, կապակցման միջոցները: **Թեմա 5.** Ստորադաս նախադասություններն ըստ իրենց շարահյուսական գործառույթի, նրանց

դասակարգումը: **Թեմա 6.** Ենթակա և ստորոգելի ստորադաս բաղադրիչներով կառույցներ: **Թեմա 7.** Գոյականական անդամի լրացում ստորադաս բաղադրիչով կառույցներ: **Թեմա 8.** Սեռի և Բնության խնդիր ստորադաս բաղադրիչներով կառույցներ: **Թեմա 9.** Պարագա ստորադաս բաղադրիչներով բարդ ստորադասական կառույցներ: **Թեմա 10.** Բազմաբարդ նախադասություններ. ընդհանուր բնութագիրը: Համադասական բազմաբարդ նախադասություններ: **Թեմա 11.** Ստորադասական բազմաբարդ նախադասություններ. համաստորադասություն, ենթաստորադասություն, տարաստորադասություն: **Թեմա 12.** Խառը տիպի բազմաբարդ նախադասություններ: **Թեմա 13.** Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպումը: **Թեմա 14.** Մեջբերվող խոսք. ուղղակի և անուղղակի մեջբերվող խոսք, նրանց կետադրությունը: **Թեմա 15.** Մեջբերվող խոսքի փոխակերպումը: **Թեմա 16.** Կետադրություն: Տրոհության, առոգանության, բացահայտության նշաններ:

**22/Բ49- Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա - 1 (6 կրեդիտ)**  
**Շաբաթական 5 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**4-րդ կիսամյակ, ստուգաք**

**Դասընթացի նպատակն է** տեղեկություններ հաղորդել պետական հանրակրթական փաստաթղթերի, դրանցով մայրենի լեզվի ուսուցչի առջև դրված խնդիրների մասին, ինչպես նաև գիտելիք հաղորդել մայրենի լեզվի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների, եղանակների և հնարների մասին, ուսանողներին ներկայացնել վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության ժամանակակից մեթոդների կիրառման տեսությունն ու պրակտիկան, ձևավորել առաջին դասարանում 6 տարեկաններին գրել, կարդալ սովորեցնելու ուսանողների գիտելիքները և գրաճանաչության դասեր վարելու կարողությունները:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա՝**

- պետական փաստաթղթերի նկարագրությունը, համառոտ բովանդակությունը,
- կրտսեր դպրոցականի հիշողության, ուշադրության, մտածողության և խոսքի բնութագիրը,
- սովորողակենտրոն ուսուցման առանձնահատկությունները,
- մեթոդ հասկացության բնութագիրը, մեթոդների դասակարգումը,
- գրաճանաչության ուսուցման փուլերը, դրանցից յուրաքանչյուրի խնդիրները,
- վերլուծական-համադրական հնչյունավանկային-հնչյունատառային մեթոդների էությունը,
- հնչյուն- տառի ուսուցման մեթոդական համակարգը:

## **Կկարողանա՝**

- ներկայացնել պետական փաստաթղթերը, բնութագրել կրտսեր դպրոցականին, ներկայացնել նրան բնորոշ հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները,
- բնութագրել դպրոց ընդունվող երեխայի առանձնահատկությունները, պատրաստականության աստիճանը,
- տարբերել ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, նշել դրանց կիրառության առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները,
- պլանավորել և վարել հնչյուն-տառի ուսուցման մեկ-երկու դաս:

## **Կտիրապետի՝**

- վեց տարեկաններին բնութագրելու սկզբունքներին,
- դպրոց ընդունվող երեխայի պատրաստականության աստիճանը ստուգելու կարողություններին,
- մայրենի լեզվից տարբեր խաղեր, վարժություններ նկարագրելուն և կիրառելուն,
- գրաճանաչության դաս պլանավորելու և վարելու սկզբունքներին,
- մայրենի լեզվից դիդակտիկական, դերային խաղեր կազմակերպելու և անցկացնելու հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Հանրակրթական պետական փաստաթղթեր: **Թեմա 2.** Հայոց լեզվի մեթոդիկական որպես գիտություն և կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 3.** Դպրոց ընդունվող երեխայի /ավագ նախադպրոցական տարիք/ տարիքային առանձնահատկությունները և դրանց հաշվառումը գրաճանաչության շրջանում: **Թեմա 4.** Գրաճանաչության ուսուցում: **Թեմա 5.** Գրաճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան: **Թեմա 6.** Գրաճանաչության ուսուցման այբբենական շրջան: **Թեմա 7.** Գրաճանաչության հետայբբենական շրջան:

**22/Բ50- Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա - 2 (6 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** գիտելիքներ հաղորդել կրտսեր դպրոցում ընթերցանության կազմակերպման մեթոդների, եղանակների մասին, ինչպես նաև մշակել որոշակի կարողություններ գեղարվեստական ստեղծագործությունների, բանահյուսական ժանրերի ուսուցման ուղղությամբ, ուսումնասիրել բացատրական ընթերցանության մեթոդով իրականացվող

մայրենիի դասի կազմակերպման մեթոդիկան 2-4-րդ դասարաններում, ձևավորել մայրենիի ինքնուրույն դասընթացներ մշակելու ուսանողների կարողությունները:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

- կրտսեր դպրոցում ընթերցանության կազմակերպման խնդիրները և սկզբունքները.
- ընթերցանության դասի կազմակերպման ժամանակակից մեթոդների նկարագրությունը.
- գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունները.
- բանահյուսական ժանրերի (հեքիաթ, առակ, հանելուկ, առած-ասացվածք) ուսուցման առանձնահատկությունները.
- արտադասարանական և ինքնուրույն ընթերցանության կազմակերպման սկզբունքները:

##### **Կկարողանա՝**

- նկարագրել ընթերցանության դասի պլանավորման և անցկացման քայլերը.
- նշել ընթերցանության դասի կառուցման սկզբունքները.
- նկարագրել ընթերցանության կազմակերպման մի քանի մեթոդներ.
- նկարագրել գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման դասեր
- ներկայացնել բանահյուսական ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունները:

##### **Կտիրապետի՝**

- դասի պլանավորման, դրա կազմակերպման ընթացքը քայլ առ քայլ նկարագրելու սկզբունքներին.
- մայրենի լեզվից ավանդական և ժամանակակից բազմազան մեթոդներով դաս վարելու սկզբունքներին.
- մայրենի լեզվից տրվող առաջադրանքները, վարժությունները, խաղերը սովորողների ընդհանուր զարգացմանը ծառայեցնելու ձևերին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ընթերցանության մեթոդիկա: **Թեմա 2.** Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը: **Թեմա 3.** Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունները: Պատմվածքի ուսումնասիրության առանձնահատկությունները: Բանաստեղծության ուսումնասիրումը: Հեքիաթի ուսումնասիրումը: Առակի ուսումնասիրումը: Ժողովրդական մանրապատում ստեղծագործության դասավանդման յուրահատկությունները: Այսպիսի ստեղծագործություններ ինքնուրույնաբար հյուսելու կարողությունների ձևավորումը:

**22/Բ51- Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա - 3 (6 կրեդիտ)**  
**Շաբաթական 9 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**6-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** գիտելիքներ հաղորդել կրտսեր դպրոցում քերականական գիտելիքների հաղորդման փուլերի և սկզբունքների մասին, ինչպես նաև մշակել որոշակի կարողություններ ձևաբանական, շարահյուսական տարրական գիտելիքների գործնական կիրառության մշակման ուղղությամբ:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա՝**

- կրտսեր դպրոցում քերականական գիտելիքների հաղորդման սկզբունքները.
- խոսքի մեջ քերականական գիտելիքը կիրառելու ուղղությամբ տարվող աշխատանքի ձևերը:

**Կկարողանա՝**

- ներկայացնել քերականական տարրական գիտելիքների հաղորդման սկզբունքները, կազմել առաջադրանքներ, վարժություններ, խաղեր մայրենի լեզվից՝ ուսուցման գործնականությունը և սովորողների ընդհանուր զարգացումն ապահովելու նպատակով.
- քերականական գիտելիքը դարձնել սովորողների կապակցված խոսքի և բառապաշարի զարգացման միջոց:

**Կտիրապետի՝**

- դասի պլանավորման, դրա կազմակերպման ընթացքը քայլ առ քայլ նկարագրելու սկզբունքներին, մայրենի լեզվից տարբեր մեթոդներով դաս վարելու սկզբունքներին.
- մայրենի լեզվից տրվող առաջադրանքները, վարժությունները, խաղերը սովորողների ընդհանուր զարգացմանը ծառայեցնելու ձևերին:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Քերականության մեթոդիկա: **Թեմա 2.** Մայրենիի տարրական դասընթացի ուսուցման փուլերը: **Թեմա 3.** Շարահյուսական տարրական գիտելիքների ուսուցումը: **Թեմա 4.** Ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցումը:

**22/Բ52- Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա - 4 (6 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

## **7-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** գիտելիքներ հաղորդել խոսքի տեսակների, դրանց ձևավորման և զարգացման սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև մշակել որոշակի կարողություններ կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման, ուղղագրական-ուղղախոսական, վայելչագրության հմտությունների զարգացման ուղղությամբ:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

- խոսքի տեսակները, բանավոր խոսքի զարգացման մեթոդները,
- բառապաշարի հարստացման և ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- կապակցված խոսքի զարգացման սկզբունքները,
- ըստ երաժշտության, նկարի, գրական երկի՝ պատմություններ հորինելու սկզբունքները,
- գրավոր խոսքի ձևավորման և զարգացման մեթոդները,
- կրտսեր դպրոցականի ուղղագրական-ուղղախոսական կարողությունները զարգացնելու սկզբունքները,
- դասվարի գործունեության կազմակերպման առանձնահատկությունները,
- մայրենի լեզվի դասին նախապատրաստվելու սկզբունքները:

##### **Կկարողանա՝**

- նկարագրել կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բովանդակությունը,
- կազմել բառապաշարի հարստացմանն ուղղված առաջադրանքներ, վարժություններ, խաղեր,
- նկարագրել սովորողների խոսքի զարգացման աշխատանքների բովանդակությունն ըստ նկարի, երաժշտության, գրական երկի,
- նկարագրել գրավոր զանազան աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու սկզբունքները,
- նշել սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղիները,
- նշել ուղղագրական կարողությունների ուղղությամբ տարվող աշխատանքի բովանդակությունը և եղանակները,
- պլանավորել մայրենի լեզվից ցանկացած Թեմայի կամ դասի կառուցվածքը և ընթացքը,
- նշել դասի աշակերտական նպատակները, դրանց իրականացման քայլերը,
- նշել ինքնազարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բովանդակությունը:

## **Կտիրապետի՝**

- խոսքի զարգացման դասի պլանավորման, դրա ընթացքի նկարագրության սկզբունքներին,
- բառապաշարի հարստացման ձևերին և եղանակներին,
- սովորողների ստեղծագործական-հորինողական կարողությունը խթանելու միջոցներին,
- գրավոր աշխատանքների կազմակերպման ժամանակակից սկզբունքներին,
- գրավոր աշխատանքների դասերի պլանավորման, կազմակերպման և անցկացման սկզբունքներին:

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Խոսքի զարգացման մեթոդիկա: **Թեմա 2.** Բանավոր խոսքի զարգացում: **Թեմա 3.** Բառապաշարի զարգացման մեթոդները: **Թեմա 4.** Կապակցված խոսքի զարգացման մեթոդիկա: **Թեմա 5.** Գրավոր խոսքի զարգացման մեթոդիկա: **Թեմա 6.** Ուղղագրական և վայելչագրական կարողությունների ձևավորման մեթոդիկա:

## **22/Բ46- Մանկական գրականություն (6 կրեդիտ )**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)**

### **7-րդ կիսամյակ, քննություն**

#### **Դասընթացի նպատակը՝**

- հաղորդել գիտելիքներ ժողովրդական բանահյուսության մասին և ներկայացնել ժողովրդական բանահյուսության՝ մանկական գրականությանն անցած ժանրերը՝ հեքիաթ, զրույց, առակ, առած, ասացվածք, հանելուկ, շուտասելուկ, խաղերգ, հաշվերգ և այլն,
- ներկայացնել մանկական գրականությունն իբրև գրականության առանձին, ինքնուրույն բաժին,
- բացահայտել մանկական գրականության նպատակներն ու առանձնահատկությունները,
- ծանոթացնել հայ և օտարերկրյա մանկական գրականությանը և նրա զարգացման օրինաչափություններին,
- օգնել ապագա մանկավարժներին՝ յուրացնելու մանկապատանեկան գրքի վերլուծության հնարները,
- ուսանողին հարստացնել տեսական և գործնական անհրաժեշտ գիտելիքներով, նրանց զինել նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների ընթերցանությունը ղեկավարելու հմտությամբ:

#### **Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** դասընթացի ծավալը, հեղինակներին և ստեղծագործությունները:

**Կկարողանա** ակնարկային և հեղինակներին նվիրված թեմաները վերլուծել՝ ելնելով մանկական գրականության ընդհանուր սկզբունքներից:

**Կտիրապետի** մանկական գրականության հիմնական ժանրերին, հայ և համաշխարհային մանկական գրականության նշանավոր հեղինակների հիմնական երկերին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Մանկական գրականության առարկան, նպատակն ու առանձնահատկությունները:

**Թեմա 2.** Մանկական գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը: Մանկական գրականության մեջ մտած բանահյուսական ժանրերը:

**Թեմա3.** Հայ մանկական գրականությունը մինչև 19-րդ դ: Մ.Գոշի և Վ.Այգեկցու առակները:

Ն.Շնորհալու հանելուկները: **Թեմա 4.** Հայ մանկական գրականությունը 19-րդ դ. I կեսին:

Խ.Աբովյանը հայ մանկական գրականության հիմնադիր: **Թեմա 5.** Մանկական գրականությունը

19-րդ դ. II կեսին: Ռ.Պատկանյանը մանկագիր: **Թեմա 6.** Ղ. Աղայանը մանկագիր: **Թեմա 7.**

Հովհ. Թումանյանը մանկագիր: **Թեմա 8.** Հայ մանկական գրականությունը 20-րդ դարում: Աթ.

Խնկոյան: Առակներ, «Բանաստեղծի վարդերը» զրույցը, հեքիաթները, մանկական

բանաստեղծությունները: **Թեմա 9.** Հ.Հայրապետյանի մանկական բանաստեղծությունները,

հանելուկները: **Թեմա 10.** Ստ. Զորյանի հեքիաթները, կենդանիների մասին պատմվածքները:

**Թեմա 11.** Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպը: **Թեմա 12.** Ս. Կապուտիկյանի մանկական

բանաստեղծությունները: **Թեմա 13.** Ժամանակակից հայ մանկագրությունը: Էդ. Միլիտոնյան, Ղ.

Սիրունյան, Ս. Մուրադյան, Յու. Սահակյան: **Թեմա 14.** Մանկական գրականությունը Անգլիայում:

Դ. Դեֆոյի «Դոքտորն Կրուզո» վեպը: **Թեմա 15.** Զ.Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը»

վեպը: **Թեմա 16.** Լուիս Քերոլի հեքիաթ-վիպակները: **Թեմա 17.** Ա. Միլնի «Վինի Թուխը և բուրրը,

բուրրը, բուրրը...» հեքիաթ-վիպակը: **Թեմա 18.** Մանկական գրականությունը Ֆրանսիայում: Շ.

Պերրոյի հեքիաթները: **Թեմա 19.** Ժ. Վեռնի մանկապատանեկան վեպերը: **Թեմա 20.** Անտուան

դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթ-վիպակը: **Թեմա 21.** Գրիմ եղբայրների

հեքիաթները: **Թեմա 22.** Հ. Ք. Անդերսենի հեքիաթները:

**11/Բ37 Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ - 1 (6 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)**

**2-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակը՝**

1. Ուսանողին ապահովելու կրտսեր դպրոցականների հաջող ուսուցման ու դաստիարակության, մաթեմատիկական գիտելիքներն ընդլայնելու ու խորացնելու ուղղությամբ անհրաժեշտ գիտելիքներով:

2. Ուսանողներին բացահայտել մաթեմատիկայի աշխարհայացքային նշանակությունը, խորացնել նրանց պատկերացումները շրջապատող աշխարհում մաթեմատիկայի տեղի ու դերի մասին:

3. Ուսանողներին տալ մաթեմատիկական անհրաժեշտ գիտելիքներ, որոնց հիմքի վրա կառուցվում է մաթեմատիկայի ամբողջ դպրոցական դասընթացը:

4. Նպաստել ուսանողների տրամաբանական մտածողության զարգացմանը, ուսանողների տրամաբանական գրագիտության կատարելագործմանը, ուսանողների ճանաչողական ինքնուրույնության զարգացմանը:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

1. բազմությունների տրման եղանակները, Վեննի գծապատկերը, էյլերի շրջանները, բազմությունների հավասարությունը, ենթաբազմությունը, վերջավոր բազմության ենթաբազմությունների թիվը: Բազմությունների հատումը, միավորումը, երկու բազմությունների տարբերությունը, համապարփակ բազմությունը, բազմության լրացումը, այդ գործողությունների հատկությունները, բազմությունների դեկարտյան արտադրյալը, դրա հատկությունների ապացուցումը:

2. Կիմանա ասույթ հասկացությունը, պարզ, բարդ ասույթները, բարդ ասույթների ճշմարտային արժեքների հիմնավորումը, ասույթների հետ գործողությունները, ասույթների հաշվի բանաձևերը, Դը Մորգանի օրենքները, «Պրեդիկատ» հասկացությունը, պրեդիկատների նկատմամբ տրամաբանական գործողությունները՝ պրեդիկատի ժխտումը, պրեդիկատների կոնյուկցիան, դիզյունկցիան, իմպլիկացիան, էկվիվալենցիան, դրանցից յուրաքանչյուրի ճշմարտացիության բազմությունը, քվանտորները, դրանց միջև կապը:

3. Կիմանա թեորեմների կառուցվածքը, անհրաժեշտ և բավարար պայմանները, թեորեմների ապացուցման ձևերը, ճիշտ և սխալ դատողությունները, հարաբերությունների տեսակները, համարժեքության հարաբերությունները, դրանց կապը բազմությունը ըստ դասերի տրոհման հետ, կարգի հարաբերությունները, գծային կարգավորյալ բազմության դիսկրետությունը և խտությունը: Իմանա ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմային մոտեցումները, «Հավասար է», «փոքր է» և «մեծ է» հարաբերությունները այդ բազմությունում:

#### **Կկարողանա՝**

1. ներկայացնել բազմության գաղափարը, բերել վերջավոր և անվերջ բազմությունների օրինակներ, բազմությունների տրման եղանակները, Վեննի գծապատկերը, Էյլերի շրջանները, բազմությունների հավասարությունը, ենթաբազմությունը, որոշել վերջավոր բազմության ենթաբազմությունների թիվը, ներկայացնել բազմությունների հետ գործողությունները, որոշել երկու բազմությունների տարբերությունը, ապացուցել գործողությունների հատկությունները, ներկայացնի բազմությունների դեկարտյան արտադրյալը, ապացուցել դրա հատկությունները, որոշել վերջավոր բազմությունների դեկարտյան արտադրյալի տարրերի քանակը:

2. Ներկայացնել հիմնական տրամաբանական կապերը և դրանցով արտահայտվող բարդ ասույթների ճշմարտային արժեքների հիմնավորումը, ապացուցել ասույթների հաշվի բանաձևերը, կիրառել Դը Մորգանի օրենքները, տարբերակել պրեդիկատ հասկացությունը, պրեդիկատի ժխտումը, պրեդիկատների կոնյուկցիան, դիզյունկցիան, իմպլիկացիան, էկվիվալենցիան, դրանցից յուրաքանչյուրի ճշմարտացիության բազմությունը, քվանտորները, դրանց միջև կապը:

3. Ճանաչել կոնկրետ թեորեմի կառուցվածքը, նրա անհրաժեշտ և բավարար պայմանները, ապացուցման եղանակը, ներկայացնել հասկացության ծավալն ու բովանդակությունը, հասկացության ընդհանրացում և սահմանափակում, սեռային և տեսակային հասկացությունները:

4. Ներկայացնել հարաբերությունները, դրանց տեսակները, համարժեքության հարաբերությունները, կապը բազմությունը ըստ դասերի տրոհման հետ, կարգի հարաբերությունները, գծային կարգավորյալ բազմության դիսկրետությունը և խտությունը: 5. Ներկայացնել ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմային մոտեցումները, բնական թվի և զրոյի գաղափարը, «հավասար է», «փոքր է» և «մեծ է» հարաբերությունները ոչ բացասական ամբողջ թվերի բազմության վրա:

### **Կտիրապետի՝**

1.բազմությունների տեսության առնչություններին, ասույթների և պրեդիկատների հաշվին, Պեանոյի աքսիոմատիկ համակարգին, հիմնական հանրահաշվական կառույցներին, թվերի տեսությանը:

2.Հանրահաշվական համակարգերի ընդլայնումներին վերաբերող հիմնական փաստերի, մաթեմատիկական գաղափարների հիման վրա խնդիրներ և վարժություններ լուծելու մեթոդներին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Բազմության գաղափարը, բազմության տարր, դատարկ բազմություն, վերջավոր և անվերջ բազմությունների օրինակներ: Բազմությունների տրման եղանակները, Վեննի գծապատկերը, Էյլերի շրջաններ, հավասար բազմություններ:

Ենթաբազմություն, ենթաբազմության տրումը բնութագրիչ հատկությամբ, «ենթաբազմություն է» առնչության հատկությունները: Վերջավոր բազմության ենթաբազմությունների թիվը: **Թեմա 2.**

Գործողություններ բազմությունների հետ, բազմությունների հատումը, միավորումը, երկու բազմությունների տարբերությունը, համապարփակ բազմություն, բազմության լրացում, այդ

գործողությունների հատկությունները:

$$A \cup \theta = A, A \cup H = H, A \cap \theta = \theta,$$

$$A \cap H = A, \bar{\theta} = H, \bar{H} = \theta,$$

**Թեմա 3.** Երկու, երեք վերջավոր բազմությունների միավորման տարրերի քանակը:

$$n(A \cup B) = n(A) + n(B) - n(A \cap B)$$

$$n(A \cup B \cup C) = n(A) + n(B) + n(C) - n(A \cap B) - n(A \cap C) - n(B \cap C) + n(A \cap B \cap C)$$

բանաձևերից յուրաքանչյուրի ապացուցումը:

**Թեմա 4.** Բազմությունների հանրահաշիվ.

$$A \cup A = A, A \cap A = A, A \cup B = B \cup A, A \cap B = B \cap A,$$

$$A \cup (B \cap C) = (A \cup B) \cap C, A \cap (B \cup C) = (A \cap B) \cup C,$$

$$A \cap (B \cup C) = (A \cap B) \cup (A \cap C)$$

$$A \cup (B \cap C) = (A \cup B) \cap (A \cup C),$$

$$\overline{A \cap B} = \bar{A} \cup \bar{B}, \overline{A \cup B} = \bar{A} \cap \bar{B},$$

$$A \setminus B = A \cap \bar{B}$$

հավասարություններից յուրաքանչյուրի ապացուցումը: Այդ հատկությունների մեկնաբանումը Էյլերի-Վեննի գծապատկերներով: **Թեմա 5.** Բազմությունների դեկարտյան արտադրյալ, դրա

հատկությունները:

$$A \times (B \cup C) = (A \times B) \cup (A \times C)$$

$$A \times (B \cap C) = (A \times B) \cap (A \times C)$$

հավասարություններից յուրաքանչյուրի

ապացուցումը: Վերջավոր բազմությունների դեկարտյան արտադրյալի տարրերի քանակը: **Թեմա**

**6.** Կոմբինատորիկայի խնդիրներ, գումարի, արտադրյալի կանոնը: Զուգորդություններ, կարգավորություններ կրկնությամբ, առանց կրկնությունների, տեղափոխություններ կրկնությամբ, առանց կրկնությունների: **Թեմա 7.** «Ասույթ» հասկացությունը, պարզ, բարդ ասույթներ,

հիմնական տրամաբանական կապեր, դրանցով արտահայտվող բարդ ասույթների ճշմարտային արժեքների հիմնավորումը: Գործողություններ ասույթների հետ, ասույթի ժխտումը, ասույթների

կոնյունկցիա, դիզյունկցիա, իմպլիկացիա, էկվիվալենցիա, դրանցից յուրաքանչյուրի սահմանումը: Ասույթների նկատմամբ կատարվող գործողությունների հիմնական հատկությունների

ապացուցումը, ասույթների հաշվի բանաձևերը, Դը Մորգանի օրենքները: **Թեմա 8.** «Պրեդիկատ»

հասկացությունը՝ մեկտեղանի, բազմատեղ: Տրամաբանական գործողություններ պրեդիկատների նկատմամբ, պրեդիկատի ժխտումը, պրեդիկատների կոնյուկցիա, դիզյունկցիա, իմպլիկացիա, էկվիվալենցիա, դրանցից յուրաքանչյուրի ճշմարտացիության բազմությունը, քվանտորներ, դրանց միջև կապը: **Թեմա 9.** Թեորեմներ, դրանց կառուցվածքը, անհրաժեշտ և բավարար պայմաններ: Հասկացություն թեորեմի ապացույցի արտածման մասին, թեորեմի ապացուցման ձևերը, ճիշտ և սխալ դատողություններ: **Թեմա 10.** Հասկացություն, դրա ծավալ և բովանդակություն, հասկացության ընդհանրացում և սահմանափակում, սեռային և տեսակային հասկացություններ: Հասկացության սահմանում, դրա տեսակները, առանձնահատկությունները, սահմանման կանոնները՝ համաչափություն, կրկնաբանության և շրջապտույտի բացառում, հստակություն, հակիրճություն: **Թեմա 11.** Հարաբերություններ, դրանց տեսակները, համարժեքության հարաբերություններ, կապը բազմությունը ըստ դասերի տրոհման հետ, կարգի հարաբերություններ, գծային կարգավորյալ բազմության դիսկրետությունը և խտությունը: **Թեմա 12.** Ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմային մոտեցումները: Բնական թվի և զրոյի գաղափարը, «հավասար է», «փոքր է» և «մեծ է» հարաբերությունները ոչ բացասական ամբողջ թվերի բազմության վրա:

## **11/Բ32 Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ -2 (6 կրեդիտ )**

*Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)*

3-րդ կիսամյակ, քննություն

### **Դասընթացի նպատակը՝**

1. Ուսանողներին ծանոթացնել հանրահաշվական նյութի հետ, թվային հավասարությունների, նրանց հատկությունների, անհավասարությունների և նրանց որոշման տիրույթների հետ,
2. գաղափար տալ հավասարումների, նրանց համարժեքության մասին, հավասարման արմատի և հավասարումների համակարգի լուծումների որոնման եղանակներին,
3. պատկերացում տալ արտապատկերումների տեսակների և ֆունկցիոնալ հարաբերությունների մասին:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

### **Կիմանա՝**

1. թվային արտահայտության հասկացությունը, թվային արտահայտության արժեքը, ճշմարիտ թվային հավասարությունների հատկությունները, թվային անհավասարությունների հատկությունները:

2. Փոփոխականներով արտահայտությունների նույնական ձևափոխությունները, նույնությունները, մեկ փոփոխականով հավասարումը, դրա արմատների բազմությունը, համարժեք հավասարումները, դրանց վերաբերյալ թեորեմները, երկու փոփոխականով հավասարումը, դրա արմատների բազմությունը:

3. Մոդուլ պարունակող հավասարումները՝ դրանց լուծման եղանակները, թեորեմներ անհավասարումների համարժեքության վերաբերյալ, մեկ անհայտով անհավասարումների համակարգը որպես անհավասարումների կոնյունկցիա, անհավասարումների համակարգի լուծումների բազմությունը, անհավասարումների համախումբը որպես անհավասարումների դիզյունկցիա, անհավասարումների համախմբի լուծումների բազմությունը, մոդուլ պարունակող անհավասարումները:

4. Հարաբերությունները, դրանց տեսակները՝ անդրադարձելի, ոչ անդրադարձելի, հակաանդրադարձելի, համաչափելի, ոչ համաչափելի, հակահամաչափելի, փոխանցելի, բազմությունների տարրերի միջև եղած բինար հարաբերությունների հատկությունները: Կիմանա համարժեքության հարաբերության գրաֆը և գրաֆիկը, կապը բազմության ըստ դասերի տրոհման հետ: Կարգի հարաբերությունը, գծային կարգավորված բազմությունների դիսկրետությունը և խտությունը:

#### **Կկարողանա**

1. որոշել թվային արտահայտության արժեքը, ներկայացնել ճշմարիտ թվային հավասարությունների հատկությունները, որոշել թվային անհավասարությունների հատկությունները:

2. Ներկայացնել փոփոխականներով արտությունների որոշման տիրույթը, փոփոխականներով արտահայտությունների նույնական ձևափոխությունները, նույնությունները: Ներկայացնել մոդուլ պարունակող հավասարումները, դրանց լուծման եղանակները:

3. Ներկայացնել երկու փոփոխականով երկու հավասարումների համակարգը, դրա լուծման եղանակները՝ Կրամերի մեթոդ, հանրահաշվական եղանակ: Ներկայացնել փոփոխականով անհավասարումները, դրանց լուծումների բազմությունը, անհավասարումների համարժեքության վերաբերյալ թեորեմները, ներկայացնել մեկ անհայտով անհավասարումների համակարգը, նրա լուծումների բազմությունը անհավասարումների համախումբը որպես անհավասարումների դիզյունկցիա, անհավասարումների համախմբի լուծումների բազմությունը, մոդուլ պարունակող անհավասարումները:

4. Ներկայացնել տարբեր տեսակի հարաբերություններ՝ անդրադարձելի, ոչ անդրադարձելի, հակաանդրադարձելի, համաչափելի, ոչ համաչափելի, հակահամաչափելի, փոխանցելի: Ներկայացնել համարժեքության հարաբերության գրաֆը և գրաֆիկը, կապը բազմության ըստ

դասերի տրոհման հետ: Ներկայացնել կարգի հարաբերություն, գծային կարգավորված բազմությունների դիսկրետությունը և խտությունը:

**Կտիրապետի** անհավասարությունների և հավասարությունների հատկությունների իմացությանը, հավասարումների և անհավասարումների լուծումների եղանակներին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Հասկացություն թվային արտահայտության մասին, թվային արտահայտության արժեքը, թվային հավասարությունը որպես ասույթ: **Թեմա 2.** Ճշմարիտ թվային հավասարությունների հատկությունները: **Թեմա 3.** Թվային անհավասարությունը որպես ասույթ, թվային անհավասարությունների հատկությունները: **Թեմա 4.** Փոփոխականներով արտահայտություններ, արտահայտությունների որոշման տիրույթը: Փոփոխականներով արտահայտությունների նույնական ձևափոխություններ, նույնություններ: **Թեմա 5.** Հասկացություն մեկ փոփոխականով հավասարման մասին, հավասարման արմատների բազմությունը: Համարժեք հավասարումներ, հավասարումների համարժեքության վերաբերյալ թեորեմներ: Հասկացություն երկու փոփոխականով հավասարման մասին, հավասարման արմատների բազմությունը: **Թեմա 6.** Մոդուլ պարունակող հավասարումներ: **Թեմա 7.** Երկու փոփոխականով երկու հավասարումների համակարգը որպես հավասարումների կոնյունկցիա, դրա լուծման եղանակները՝ Կրամերի մեթոդ, հանրահաշվական եղանակ: **Թեմա 8.** Փոփոխականով անհավասարումների լուծումների բազմությունը, թեորեմների անհավասարումների համարժեքության վերաբերյալ: **Թեմա 9.** Մեկ անհայտով անհավասարումների համակարգը որպես անհավասարումների կոնյունկցիա, անհավասարումների համակարգի լուծումների բազմությունը: **Թեմա 10.** Անհավասարումների համախումբը որպես անհավասարումների դիզյունկցիա, անհավասարումների համախմբի լուծումների բազմությունը, մոդուլ պարունակող անհավասարումներ: **Թեմա 11.** Հարաբերություններ, դրանց տեսակները՝ անդրադարձելի, հակաանդրադարձելի, համաչափելի, հակահամաչափելի, փոխանցելի: Բազմությունների տարրերի միջև եղած բինար հարաբերությունների հատկությունները: **Թեմա 12.** Համարժեքության հարաբերության գրաֆը և գրաֆիկը, կապը բազմության ըստ դասերի տրոհման հետ: **Թեմա 13.** Կարգի հարաբերություն, գծային կարգավորված բազմությունների դիսկրետությունը և խտությունը:

**11/Բ39- Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ - 3 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 5 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**4-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է՝**

**1. ուսանողներին ծանոթացնել ոչ բացասական ամբողջ թվերի աքսիոմատիկ կառուցման հետ:**

2. Ուսումնասիրել նշված թվերի թվաբանությունը և թվաբանական գործողությունների հիմնական հատկությունները, գոյությունը, միջակությունը և այլն:

3. Ուսումնասիրել մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը, թվարկության տարբեր համակարգեր:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

#### **Կիմանա՝**

1. ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմական մոտեցումը, բնական թվի և զրոյի գաղափարը, գումարի և տարբերության սահմանումը, գոյությունը և միակությունը, գումարման և տարբերության օրենքները:

2. Արտադրյալի սահմանումը, նրա գոյությունն ու միակությունը, բազմապատկման օրենքները, արտադրյալի սահմանումը գումարի միջոցով, ոչ բացասական ամբողջ թվի և բնական թվի քանորդի սահմանումը, նրա գոյությանը, միակությանը, թվի վրա գումարը և արտադրյալը բաժանելու կանոնները:

3. Թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, տասական համակարգում տրված թվի անցումը գ-ական համակարգի և հակառակը, թվաբանական գործողությունները տարբեր դիրքային համակարգերում, ունենա գաղափար հանրահաշվական գործողության, նրա տեղափոխական, զուգորդական, բաշխական հատկությունների մասին:

#### **Կկարողանա՝**

1. ներկայացնել ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմական մոտեցումը, բնական թվի և զրոյի գաղափարը, ոչ բացասական ամբողջ թվերի գումարը, տարբերությունը, գումարման և տարբերության օրենքները:

2. Ներկայացնել արտադրյալի սահմանումը, ոչ բացասական ամբողջ թվի և բնական թվի քանորդի սահմանումը, նրա գոյությունն ու միակությունը, թվի վրա գումարը և արտադրյալը բաժանելու կանոնների տեսաբազմական իմաստը, կատարել հանման և բաժանման գործողություններ, մնացորդով բաժանում:

3. Ներկայացնել թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, տասական համակարգում տրված թվի անցումը գ-ական համակարգի և հակառակը, կատարել թվաբանական գործողություններ տարբեր դիրքային համակարգերում: Ներկայացնել հանրահաշվական գործողությունը, նրա տեղափոխական, զուգորդական, բաշխական հատկությունները:

#### **Կտիրապետի՝**

1. բազմությունների տեսության հատկությունների հիման վրա տարբերության գոյությունն ու միակությունը ապացուցելուն, գումարից թիվ և թվից գումար հանելու կանոնների տեսաբազմական իմաստին:

2. Բազմությունների տեսության հատկություններին, ոչ բացասական ամբողջ թվերի հանման, բաժանման և մնացորդով բաժանման օրենքներին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմական մոտեցում: Բնական թվի և զրոյի գաղափարը: **Թեմա 2.** Գումարի սահմանումը, գումարի գոյությունը և միակությունը: Գումարման օրենքները: **Թեմա 3.** Տարբերության սահմանումը, նրա գոյությունն ու միակությունը: **Թեմա 4.** Գումարից թիվ և թվից գումար հանելու կանոնների տեսաբազմական իմաստը: **Թեմա 5.** Արտադրյալի սահմանումը, նրա գոյությանն ու միակությունը: Բազմապատկման օրենքները: Արտադրյալի սահմանումը գումարի միջոցով: **Թեմա 6.** Ոչ բացասական ամբողջ թվի և բնական թվի քանորդի սահմանումը, նրա գոյությունն ու միակությունը: Թվի վրա գումարը և արտադրյալը բաժանելու կանոնների տեսաբազմական իմաստը: **Թեմա 7.** Հանման և բաժանման սահմանումները: Բաժանում մնացորդով: **Թեմա 8.** Թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգեր: Տասական համակարգում տրված թվի անցումը զ - ական համակարգի և հակառակը: **Թեմա 9** Թվաբանական գործողությունները տարբեր դիրքային համակարգերում: **Թեմա 10.** Գաղափար հանրահաշվական գործողության մասին, հատկությունները՝ տեղափոխական, զուգորդական, բաշխական: **Թեմա 11.** Կրճատելի հանրահաշվական գործողություն: Հանրահաշվական գործողության չեզոք տարր, համաչափելի տարր, կլանող տարր, տարրի հակադարձը, հակադիրը:

## **11/Բ40- Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ - 4 (3 կրեդիտ )**

### **Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### **5-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողներին ծանոթացնել ոչ բացասական ամբողջ թվերի բազմության կառուցման տեսաբազմական մոտեցման հետ, մանրամասն ուսումնասիրել գումարման, բազմապատկման, հանման և բաժանման օրենքները, կիրառել թվաբանության հիմնական թեորեմը:

Դասընթացի ուղղվածությունը ուսանողների տիրապետումն է թվերի բաժանելիության հատկություններին, ընդհանուր բազմապատիկի և ընդհանուր բաժանարարի հասկացություններին և հատկություններին:

#### **Կրթական արդյունքները՝**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

### **Կիմանա**

1. տեսության աքսիոմատիկ կառուցման, կարգային և քանակային բնական թվերի, ոչ բացասական ամբողջ թվերի բազմության աքսիոմատիկ կառուցման մասին, Պեանոյի աքսիոմները, մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը:

2. Ոչ բացասական ամբողջ թվերի բազմապատկման աքսիոմատիկ սահմանումը, բազմապատկման հատկությունները, բազմապատկման աղյուսակը, պարզ և բաղադրյալ թվերը, պարզ թվերի ճանաչման եղանակները՝ հաջորդական փորձարկման եղանակը, Էրատոսթենեսի մաղը /ցանցը/, բազմապատիկը, բաժանարարը:

3. Թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը, դրանց գտնելու եղանակները, Էվկլիդեսի ալգորիթմը, բաժանելիության հարաբերությունը ոչ բացասական ամբողջ թվերի բազմությունում, գումարի /տարբերության/ և արտադրյալի բաժանելիությունը, բաժանելիության Պասկալի հայտանիշը:

### **Կկարողանա՝**

1. ներկայացնել տեսության աքսիոմատիկ կառուցման գաղափարը, կարգային և քանակային բնական թվերը, Պեանոյի աքսիոմները, Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդի էությունը, ոչ բացասական ամբողջ թվերի բազմապատկման աքսիոմատիկ սահմանումը, բազմապատկման հատկությունները, բազմապատկման աղյուսակը:

2. Ներկայացնել մեկից մեծ ցանկացած բնական թվի պարզ բաժանարարի գոյության վերաբերյալ թեորեմը, թվաբանական հիմնական թեորեմը թիվը պարզ բաժանարարների արտադրյալով ներկայացնելու վերաբերյալ, պարզ թվերի քանկի անվերջ լինելու վերաբերյալ թեորեմը:

3. Ներկայացնել բազմապատիկը, բաժանարարը, թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը, դրանց գտնելու եղանակները, Էվկլիդեսի ալգորիթմը:

4. Ներկայացնել բաժանելիության հարաբերությունը ոչ բացասական ամբողջ թվերի բազմությունում, գումարի /տարբերության / և արտադրյալի բաժանելիությունը, բաժանելիության Պասկալի հայտանիշը:

### **Կտիրապետի՝**

1. մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդի կիրառմամբ պնդումների ապացուցմանը, մեկից մեծ ցանկացած բնական թվի պարզ բաժանարարի գոյության, թիվը պարզ բաժանարարների արտադրյալով ներկայացնելու մասին թվաբանական հիմնական թեորեմի, պարզ թվերի քանկի անվերջ լինելու վերաբերյալ խնդիրներ լուծելուն:

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Գաղափար տեսության աքսիոմատիկ կառուցման մասին: Կարգային և քանակային բնական թվեր: Ոչ բացասական ամբողջ թվերի բազմության աքսիոմատիկ կառուցումը: Պեանոյի աքսիոմները: **Թեմա 2.** Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: **Թեմա 3.** Ոչ բացասական ամբողջ թվերի գումարման աքսիոմատիկ սահմանումը, գումարման հատկությունները, գումարման աղյուսակ: **Թեմա 4.** Ոչ բացասական ամբողջ թվերի բազմապատկման աքսիոմատիկ սահմանումը, բազմապատկման հատկությունները, բազմապատկման աղյուսակ: **Թեմա 5.** Պարզ և բաղադրյալ թվեր: Պարզ թվերի ճանաչման եղանակները՝ հաջորդական փորձարկման եղանակը, Էրատոսթենեսի մաղը /ցանցը/: **Թեմա 6.** Մեկից մեծ ցանկացած բնական թվի պարզ բաժանարարի գոյության վերաբերյալ թեորեմը: Թվաբանական հիմնական թեորեմը թիվը պարզ բաժանարարների արտադրյալով ներկայացնելու վերաբերյալ: Թեորեմ պարզ թվերի քանկի անվերջ լինելու վերաբերյալ: **Թեմա 7.** Բազմապատիկ, բաժանարար: Թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկ, ամենամեծ ընդհանուր բաժանարար, դրանց գտնելու եղանակները: Էվկլիդեսի ալգորիթմը: **Թեմա 8.** Բաժանելիության հարաբերությունը ոչ բացասական ամբողջ թվերի բազմությունում: Գումարի /տարբերության / և արտադրյալի բաժանելիությունը: Բաժանելիության Պասկալի հայտանիշը: 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 8-ի, 9-ի, 25-ի և 125-ի վրա բաժանելիության հայտանիշները: **Թեմա 9.** Գաղափար տոկոսի մասին, տոկոսի վերաբերյալ խնդիրներ:

## **11/Բ41- Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ - 5 (3 կրեդիտ )**

**Շաբաթական 6 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

### **6-րդ կիսամյակ, քննություն**

#### **Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողներին ծանոթացնել ամբողջ թվերի, ռացիոնալ թվերի տեսությանը:
2. Կատարել թվաբանական գործողություններ ռացիոնալ թվերի, ինչպես նաև տասնորդական կոտորակների հետ:
3. Ուսանողներին ծանոթացնել հանրահաշվի որոշ էլեմենտների հետ՝ դետերմինանտներ, գծային հանրահաշվական հավասարումների լուծման Կրամերի, Գաուսի մեթոդներին, հակադարձ մատրիցի և նրա կիրառման հետ:
3. Ծանոթացնել իրական թվի գաղափարի ներմուծման անհրաժեշտությունը և գործողություններ նրանց հետ:

#### **Կրթական արդյունքները՝**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

### **Կիմանա՝**

1. ամբողջ թվերը, բացասական ամբողջ թվերը, դրանց հետ գործողությունները, ռացիոնալ թվերը, կոտորակի գաղափարը, դրանց հետ գործողությունները: Իրական թվերը, իռացիոնալ թվերի գոյության վերաբերյալ հիմնավորումները, թվերի կլորացման կանոնները, մոտավոր թվերի հետ գործողությունները, գործողություններ կատարել կոտորակների, տասնորդական կոտորակների հետ,
2. մատրիցի դետերմինանտը, դրա հատկությունները և հաշվումը, համապատասխանությունների տեսակները,
3. ֆունկցիոնալ հարաբերությունները, ֆունկցիայի տրման եղանակները, ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթները:

### **Կկարողանա՝**

1. ներկայացնել ամբողջ թվերը, բացասական ամբողջ թվերը, դրանց հետ գործողությունները, ռացիոնալ թվերը, կոտորակները,
2. կատարել դրանց նկատմամբ գործողություններ, որոշել ոչ բացասական իրական թվերի արտադրյալը, նրա մոտավոր արժեքի գնահատականները,
3. հաշվել մատրիցի դետերմինանտը, դրա հատկությունները:

### **Կտիրապետի՝**

1. կոտորակների հիմնական հատկություններին, մատրիցների, դրանց տեսակների, դրանց նկատմամբ գործողությունների կատարմանը:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ամբողջ թվեր: Բացասական ամբողջ թվեր: Գործողություններ դրանց հետ: **Թեմա 2.** Ռացիոնալ թվեր: Կոտորակի գաղափարը, գործողություններ դրանց հետ: **Թեմա 3.** Տասնորդական կոտորակներ, դրանց հետ կատարվող թվաբանական գործողությունները: Սովորական կոտորակի ձևափոխումը տասնորդականի: **Թեմա 4.** Պարբերական կոտորակներ, գործողություններ դրանց հետ: Պարբերական կոտորակների ձևափոխումը սովորական կոտորակի: **Թեմա 5.** Իրական թվեր: Իռացիոնալ թվերի գոյությունը: **Թեմա 6.** Ոչ բացասական իրական թվերի գումարի սահմանումը, մոտավոր հաշվումը: **Թեմա 7.** Իրական թվերի տարբերության և քանորդի սահմանումը, մոտավոր հաշվումը: **Թեմա 8.** Թվերի կլորացման կանոնները, գործողությունները մոտավոր թվերի հետ: **Թեմա 9.** Մատրիցներ, գործողություններ դրանց հետ: **Թեմա 10.** Մատրիցի դետերմինանտ, դրա հատկությունները և հաշվումը: **Թեմա 11.** Գծային հավասարումների համակարգերի լուծման Կրամերի եղանակը: Թեմա 12. Գծային հավասարումների համակարգերի լուծման Գաուսի եղանակը: Թեմա 13. Արտապատկերումների

տեսակները: Մի բազմության արտապատկերումը մյուսի մեջ: Մի բազմության արտապատկերումը մյուսի վրա: Փոխմիարժեք արտապատկերում: Թեմա 14. Համապատասխանությունների տեսակները: Ֆունկցիոնալ հարաբերություններ, ֆունկցիայի տրման եղանակները: Ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթները:

## **11/Բ42- Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմունքներ - 6 (3 կրեդիտ )**

### **Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 սեմինար)**

#### **7-րդ կիսամյակ, քննություն**

#### **Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողներին ծանոթացնել ֆունկցիայի գաղափարի, նրա տարբեր տրման եղանակների, դրսևորումների, հատկությունների հետ,
2. ուսումնասիրել մոնոտոն, զույգ և կենտ, պարբերական, հակադարձ ֆունկցիաները և նրանց հատկությունները:

Դասընթացի ուղղվածությունը դա քառակուսային հավասարումների և անհավասարումների լուծումն է, ինչպես նաև նրանց բերվող թվաբանական խնդիրների և վարժությունների լուծումը:

#### **Կրթական արդյունքները՝**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

#### **Կիմանա՝**

1. առնչության մեկնաբանումը համապատասխանության տերմիններով, «Ֆունկցիա» հասկացության տարբեր սահմանումները, ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթը, ֆունկցիայի գրաֆիկը, տեսակները, ուղղել ընդհանուր հավասարումը, երկու ուղիղների հատումը, ընդհանուր հավասարումներով տրված երկու ուղիղների ուղղահայացության և զուգահեռության պայմանները:
2. Կետը, ուղիղը, ճառագայթը, անկյունը, անկյան տեսակները, անկյան չափումը, բեկյալը, բեկյալի տեսակները, եռանկյունը:
3. Եռանկյունների հավասարության հայտանիշները, եռանկյան միջնագծերը, կիսորդները և բարձրությունները, դրանց հատկությունները, կանոնավոր բազմանկյունները, անկյունների գումարը, կանոնավոր բազմանկյան մակերեսը, կանոնավոր բազմանկյան կողմի արտահայտումը ներգծած շրջանագծի շառավղով, կանոնավոր բազմանկյան կողմի արտահայտումը արտագծած շրջանագծի շառավղով:

#### **Կկարողանա՝**

1. ներկայացնել առնչության մեկնաբանումը համապատասխանության տերմիններով, «Ֆունկցիա» հասկացության տարբեր սահմանումներ:

2. Ներկայացնել ուղղի ընդհանուր հավասարումը, որոշել երկու ուղիղների հատման կետի կոորդինատները, գրել ընդհանուր հավասարումներով տրված երկու ուղիղների ուղղահայացության և զուգահեռության պայմանները:

3. Ստանալ ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթը, կառուցել ֆունկցիայի գրաֆիկը:

4. Ներկայացնել կետը, ուղիղը, ճառագայթը, անկյունը, անկյան տեսակները, անկյան չափումը, բեկյալը, բեկյալի տեսակները, եռանկյունը:

5. Ապացուցել եռանկյունների հավասարության հայտանիշները, եռանկյան միջնագծերի, կիսորդների և բարձրությունների հատկությունները:

6. Ներկայացնել կանոնավոր բազմանկյունները, որոշել դրանց անկյունների գումարը, մակերեսը, կանոնավոր բազմանկյան կողմն արտահայտել ներգծած շրջանագծի շառավղով, արտագծած շրջանագծի շառավղով:

### **Կտիրապետի՝**

1. կոորդինատների եռաչափ համակարգի, ուղիղ պրիզմայի, գլանի, կոնի, գնդի մակերևույթի մակերեսի, ծավալի վերաբերյալ խնդիրներ լուծելուն:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Առնչության մեկնաբանումը համապատասխանության տերմիններով: «Ֆունկցիա» հասկացության տարբեր սահմանումները

ա) ֆունկցիան որպես առնչություն

բ) ֆունկցիան որպես համապատասխանություն

գ) ֆունկցիան որպես երկու փոփոխական մեծությունների միջև կապ:

Ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթը, ֆունկցիայի գրաֆիկը: **Թեմա 2.** Ուղիղ համեմատականություն, հակադարձ համեմատականություն, դրանցից յուրաքանչյուրը ներկայացնող ֆունկցիայի հատկությունները, գրաֆիկը: **Թեմա 3.** Թվային ֆունկցիայի հասկացությունը: Գործողություններ թվային ֆունկցիաների նկատմամբ՝ գումար (տարբերություն), արտադրյալ (քանորդ), համադրույթ, հակադարձ:

Ֆունկցիաների համադրույթի, հակադարձի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանները:

**Թեմա 4.** Թվային ֆունկցիաների տեսակները՝ զույգ, կենտ, պարբերական, աճող, նվազող, մոնոտոն: Հիմնական թեորեմներ դրանց վերաբերյալ: **Թեմա 5** Քառակուսային ֆունկցիա, դրա հատկությունները, գրաֆիկը: Քառակուսային հավասարումների լուծումը և գրաֆիկական պատկերումը: Քառակուսային անհավասարումների լուծումը և գրաֆիկական պատկերումը:

Վիետի թեորեմը, դրա հետևանքները: **Թեմա 6.** Գաղափար գծի հավասարման մասին:

Շրջանագծի հավասարումը: **Թեմա 7.** Ուղղի հավասարումն անկյունային գործակցով: Երկու ուղիղների զուգահեռության և ուղղահայացության պայմանները, երբ դրանց հավասարումները

տրված են անկյունային գործակցով: **Թեմա 8.** Ուղղի ընդհանուր հավասարումը, երկու ուղիղների հատումը: Ընդհանուր հավասարումներով տրված երկու ուղիղների ուղղահայացության և զուգահեռության պայմանները: **Թեմա 9.** Կետ, ուղիղ, ճառագայթ, անկյուն, անկյան տեսակները, անկյան չափումը, բեկյալ, բեկյալի տեսակները, եռանկյուն: **Թեմա 10.** Եռանկյունների հավասարության I հայտանիշը: Եռանկյան միջնագծերը, կիսորդները և բարձրությունները: **Թեմա 11.** Եռանկյունների հավասարության II հայտանիշը: Եռանկյունների հավասարության III հայտանիշը: **Թեմա 12.** Ողղանկյուն եռանկյուն: Սուր անկյունների գումարը, 30<sup>0</sup> անկյան դիմացի կողմը, Պյութագորասի թեորեմը, եգիպտական եռանկյուն: **Թեմա 13.** Նման եռանկյունների մակերեսների հարաբերությունը: Նման եռանկյունների պարագծերի հարաբերությունը: Թեորեմ եռանկյան կիսորդի, դիմացի կողմի տրոհման վերաբերյալ: Անմատչելի կետի հեռավորության որոշումը: **Թեմա 14.** Թեորեմ շրջանագծի հատվող լարերի վերաբերյալ: Թեորեմ շրջանագծի հատողի և շոշափողի վերաբերյալ: **Թեմա 15.** Եռանկյան լուծումը: Ուղղանկյուն եռանկյան լուծումը: **Թեմա 16.** Կանոնավոր բազմանկյուններ: Անկյունների գումարը: Կանոնավոր բազմանկյան մակերեսը: Կանոնավոր բազմանկյան կողմի արտահայտումը ներգծած շրջանագծի շառավղով: Կանոնավոր բազմանկյան կողմի արտահայտումը արտագծած շրջանագծի շառավղով: **Թեմա 17.** Կոորդինատների եռաչափ համակարգ, ուղիղ պրիզմա, մակերևույթի մակերեսը, ծավալը, գլան, մակերևույթի մակերեսը, ծավալը, կոն, մակերևույթի մակերեսը, ծավալը, գունդ, մակերևույթի մակերեսը, ծավալը:

**11/Բ46 -Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-  
1 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 5 ժամ (40 ժամ դասախոսություն,20 ժամ սեմինար)**

**4-րդ կիսամյակ, ստուգաթղթ**

**Դասընթացի նպատակն է՝**

1. Ուսանողներին զինել կրտսեր դպրոցականների մեջ մաթեմատիկայի ուսուցման ժամանակ ծագող ուսումնադաստիարակչական հարցերին մասնագիտական ճիշտ լուծում տալու համար անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով:

2. Ընդգծված ուշադրություն դարձնել տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման նպատակներին, կազմակերպման ձևերին, մեթոդներին, միջոցներին: Ուսանողները դեղատոմսային մեթոդական հանձնարարականների յուրացումից անցնեն մեթոդական հարցերի լուծման տարբեր եղանակների օգտագործման հնարավորության գիտակցմանը:

**Կրթական արդյունքները՝**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

## **Կիմանա՝**

1. մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի բովանդակությունը և նպատակները, ժամանակակից մեթոդական համակարգի բաղադրիչները և նրանց փոխադարձ կապը, Մաթեմատիկայի տարրական ուսուցման նպատակները, Մաթեմատիկայի տարրական դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը,
2. մաթեմատիկայի ուսուցման մեթոդները դպրոցի տարրական դասարաններում, ուսուցման մեթոդների կապը նպատակի, բովանդակության, միջոցների և ուսուցման կազմակերպման ձևերի հետ,
3. մաթեմատիկայի սկզբնական ուսուցման միջոցները, մաթեմատիկայի դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բովանդակությունը ուսուցման գննապիտույքներն ու տեխնիկական միջոցները,
4. դասի և մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման այլ ձևերի մասին 1-4 ըդ դասարաններում, կճանաչի դասի տիպերը,
5. նկարագրել մաթեմատիկայի ուսուցման վերաբերյալ ուսումնական աշխատանքների կազմակերպման այլ ձևեր, կնկարագրի արտադասարանական աշխատանքների ձևերը,
6. տարրական դասարաններում սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման ձևերը, տետրերի վարման նկատմամբ պահանջները,
7. մաթեմատիկայի ուսուցման առանձնահատկությունները սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցում
8. Ոչ բացասական ամբողջ թվերի թվարկության ուսումնասիրման մեթոդական հնարները, կցուցաբերի աշակերտների մոտ բնական թվի և զրոյի գաղափարի ձևավորման նկատմամբ տարբեր մեթոդական մոտեցումներ,
9. թվերի թվարկման, «Հարյուրյակ համակենտրոնում», գումարում և հանում հարյուրի սահմաններում բազմապատկում և բաժանում հարյուրի սահմաններում , աղյուսակային բազմապատկում և բաժանում, արտաղյուսակային բազմապատկում և բաժանում, բաժանում մնացորդով թեմաների ուսուցման մեթոդական հնարները,
10. թվերի թվարկման, «Հազարյակ համակենտրոնում», գումարում, հանում հազարի սահմաններում թեմաների ուսուցման մեթոդիկան :

## **Կկարողանա՝**

1. զանազանել և ճանաչել մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի բովանդակությունը և նպատակները, ժամանակակից մեթոդական համակարգի բաղադրիչները և նրանց փոխադարձ կապը, մաթեմատիկայի տարրական ուսուցման նպատակները,

2. օգտագործել մաթեմատիկայի ուսուցման մեջ տարբեր մեթոդներ, կապակցել ուսուցման մեթոդները նպատակի, բովանդակության, միջոցների և ուսուցման կազմակերպման ձևերի հետ,
3. ընտրել ուսուցման մեթոդը կախված կոնկրետ դիդակտիկ խնդիրների, ուսումնական նյութի բովանդակության առանձնահատկություններից, օգտագործվող ուսուցման միջոցներից,
4. զանազանել դասի տիպերը և Մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման այլ ձևերը 1-4-րդ դասարաններում,
5. իրականացնել մաթեմատիկայի ուսուցման վերաբերյալ ուսումնական աշխատանքներ, կկազմակերպի արտադասարանական աշխատանքներ,
6. իրականացնել տնային առաջադրանքների կատարման կազմակերպումը, ղեկավարումը, վերահսկումը,
7. մատնանշել մաթեմատիկայի ուսուցման առանձնահատկությունները սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցում, նկարագրել մաթեմատիկայի դասը, նրա տեղը դասացուցակում,
8. կիրառել ոչ բացասական ամբողջ թվերի թվարկության ուսումնասիրման մեթոդական հնարներ,
9. զանազանել և կիրառել թվերի թվարկման, «Հարյուրյակ համակենտրոնում» գումարում և հանում հարյուրի սահմաններում, բազմապատկում և բաժանում հարյուրի սահմաններում, աղյուսակային բազմապատկում և բաժանում, արտաղյուսակային բազմապատկում և բաժանում, բաժանում մնացորդով թեմաների ուսուցման մեթոդական հնարները,
10. կիրառել թվերի թվարկման, «Հազարյակ համակենտրոնում» գումարում, հանում թեմաների ուսուցման մեթոդական հնարները:

### **Կտիրապետի՝**

1. դասը ճիշտ պլանավորելու, կազմակերպելու, անցկացնելու ձևերին և խնդիրներին,
2. օժտված կլինի կառուցողական մանկավարժական հմտություններով,
3. եզրահանգումներ կատարելու հմտություններին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկական որպես գիտություն և որպես ուսումնական առարկա, նրա բովանդակությունը և նպատակները: Ժամանակակից մեթոդական համակարգի բաղադրիչները և նրանց փոխադարձ կապը: Մաթեմատիկայի տարրական դասընթացը որպես ուսումնական առարկա 1-4-րդ դասարաններում: Մաթեմատիկայի տարրական ուսուցման նպատակները: Մաթեմատիկայի տարրական դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը:

**Թեմա 2.** Մաթեմատիկայի ուսուցման մեթոդները դպրոցի տարրական դասարաններում: Մաթեմատիկայի ուսուցման մեջ տարբեր մեթոդների օգտագործումը: Ուսուցման մեթոդների կապը նպատակի, բովանդակության, միջոցների և ուսուցման կազմակերպման ձևերի հետ: **Թեմա 3.** Մաթեմատիկայի սկզբնական ուսուցման միջոցները: Մաթեմատիկայի դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, ուսուցման զննապիտույքներն ու տեխնիկական միջոցները: Ուսուցման մեթոդի ընտրության կապը կոնկրետ դիդակտիկ խնդիրների, ուսումնական նյութի բովանդակության առանձնահատկությունների, օգտագործվող ուսուցման միջոցների հետ: **Թեմա 4.** Դասը և մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման այլ ձևերը 1-4 ռդ դասարաններում: Դասի տիպերը: **Թեմա 5.** Մաթեմատիկայի ուսուցման վերաբերյալ ուսումնական աշխատանքների կազմակերպման այլ ձևեր: Արտադասարանական աշխատանքներ: **Թեմա 6.** Գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգումը և գնահատումը, տեսրերի վարման նկատմամբ պահանջները: Տնային առաջադրանքների կատարման կազմակերպումը, ղեկավարումը, վերահսկումը: **Թեմա 7.** Մաթեմատիկայի ուսուցման առանձնահատկությունները սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցում: Մաթեմատիկայի դասը, նրա տեղը դասագուցակում: **Թեմա 8.** Ոչ բացասական ամբողջ թվերի թվարկության ուսումնասիրման մեթոդիկան: Տարբեր մեթոդական մոտեցում բնական թվի և զրոյի գաղափարի ձևավորման նկատմամբ: Ըստ համակենտրոնների թվերի ուսուցման մեթոդիկան, «Տասնյակ համակենտրոնում» թվերի թվարկման ուսուցումը, գումարում և հանում տասի սահմաններում: **Թեմա 9.** Թվերի թվարկման ուսուցումը «Հարյուրյակ համակենտրոնում», գումարում և հանում հարյուրի սահմաններում, բազմապատկում և բաժանում հարյուրի սահմաններում: Աղյուսակային բազմապատկում և բաժանում, արտաղյուսակային բազմապատկում և բաժանում: Բաժանում մնացորդով: **Թեմա 10.** Թվերի թվարկման ուսուցման մեթոդիկան «Հազարյակ համակենտրոնում»: Գումարում, հանում հազարի սահմաններում:

**11/Բ47- Տարրական դասարաններում Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա - 2 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**5-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողների մոտ զարգացնել մաթեմատիկական լեզվով խոսելու, մեթոդական հարցերի լուծման տարբեր եղանակների օգտագործման հնարավորություններ, աշակերտների ուսումնառության մեջ տեքստային խնդիրների կարևորագույն դերի գիտակցում:

2. Ուսանողներին ծանոթացնել թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապի ուսուցման հարցերին:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

1. բազմապատկում և բաժանում հազարի սահմաններում թեմայի ուսուցման մեթոդական հնարները,
2. թվերի թվարկումը «Բազմանիշ թվեր համակենտրոնում» թեմայի մեթոդական հնարները,
3. բազմանիշ թվերի գումարումն ու հանումը, բազմապատկումը երկնիշ և եռանիշ թվերով թեմայի ուսուցման հնարները,
4. բազմանիշ թվերի բաժանումը, բաժանում երկնիշ և եռանիշ կարգային թվերի վրա, բաժանում երկնիշ և եռանիշ թվերի վրա թեմայի ուսուցման հնարները,
5. թվաբանական գործողությունների արդյունքների փոփոխության կանոնները, թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապեր,
6. տեքստային խնդիրների լուծման ուսուցման մեթոդական հնարները, տեքստային խնդիրների դերը կրտսեր դպրոցականների ուսուցման գործում, կզանազանի թվաբանական խնդիրների տեսակները,
7. խնդիրներ լուծելու համար կատարվող նախապատրաստական աշխատանքները, լուծման ստուգման եղանակները,
8. խնդիրների լուծման ուսուցման մեթոդական հնարները:

##### **Կկարողանա՝**

1. կիրառել բազմապատկում և բաժանում հազարի սահմաններում թեմայի ուսուցման մեթոդական հնարները,
2. կիրառել թվերի թվարկումը «Բազմանիշ թվեր համակենտրոնում» թեմայի ուսուցման հնարները,
3. գործնականում կիրառել բազմանիշ թվերի գումարումն ու հանումը, բազմապատկումը երկնիշ և եռանիշ թվերով թեմայի ուսուցման հնարները,
4. գործնականում կիրառել բազմանիշ թվերի բաժանումը, բաժանում երկնիշ և եռանիշ կարգային թվերի վրա, բաժանում երկնիշ և եռանիշ թվերի վրա թեմայի ուսուցման հնարները,
5. կիրառել թվաբանական գործողությունների արդյունքների փոփոխության կանոնները, բացահայտել թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապերը,

6. կազմակերպել խնդիրներ լուծելու համար կատարվող նախապատրաստական աշխատանքները, կիրառել լուծման ստուգման եղանակները,
7. կիրառել պարզ և բաղադրյալ խնդիրների լուծման ուսուցման մեթոդական հնարները, կկարողանա սովորողների մոտ ձևավորել բաղադրյալ խնդիրներ լուծելու կարողություններ:

**Կտիրապետի՝**

1. բազմանիշ թվերի բաժանում, բաժանում երկնիշ և եռանիշ կարգային թվերի վրա, բաժանում երկնիշ և եռանիշ թվերի վրա թեմայի ուսուցման հնարներին,
2. թվաբանական գործողությունների արդյունքների փոփոխության կանոններին,
3. թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապերին,
4. պարզ և բաղադրյալ խնդիրների ուսուցման մեթոդներին:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Բազմապատկում և բաժանում հազարի սահմաններում: **Թեմա 2.** Թվերի թվարկումը «Բազմանիշ թվեր համակենտրոնում»: **Թեմա 3.** Բազմանիշ թվերի գումարումն ու հանումը, բազմապատկումը երկնիշ և եռանիշ թվերով: **Թեմա 4.** Բազմանիշ թվերի բաժանումը, բաժանում երկնիշ և եռանիշ կարգային թվերի վրա, բաժանում երկնիշ և եռանիշ թվերի վրա: **Թեմա 5.** Թվաբանական գործողությունների արդյունքների փոփոխության դիտարկումներ, թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապի ուսուցումը: **Թեմա 6.** Բանավոր հաշվումների մեթոդիկա, վարժությունների տեսակներ բանավոր հաշվումների համար: Բանավոր հաշվի վերաբերյալ պարապմունքների կազմակերպում: **Թեմա 7.** Տեքստային խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկան: Տեքստային խնդիրների ֆունկցիան կրտսեր դպրոցականների ուսուցման գործում: Թվաբանական խնդիրների տեսակները, խնդիրների լուծման դերը: **Թեմա 8.** Նախապատրաստական աշխատանքներ խնդիրներ լուծելու համար: Ծանոթացում խնդիրների լուծմանը: Լուծման ստուգումը: **Թեմա 9.** Պարզ խնդիրների լուծման ուսուցումը, պարզ խնդիրների դասակարգումը: **Թեմա 10.** Բաղադրյալ խնդիրների լուծման ուսուցումը, ծանոթացում բաղադրյալ խնդրին, լուծելու կարողությունների ձևավորումը:

**11/Բ48- Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա - 3 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 9 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**6-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողներին ծանոթացնել թվային արտահայտությունների և փոփոխական պարունակող արտահայտությունների ուսումնասիրման մեթոդներին,
2. ծանոթացնել խնդիրների լուծման ուսուցման ընդհանուր հնարներին, թվաբանական, հանրահաշվական և երկրաչափական նյութի փոխադարձ կապի ուսումնասիրմանը, տեսության կապին գործնականի հետ:

### **Կրթական արդյունքները՝**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

1. դասին նախապատրաստվելու, դասի պլան կազմելու, դասի մեթոդական վերլուծություն կատարելու հիմնական պահանջները և կանոնները,
2. համեմատական մեծությունների հետ կապված խնդիրներով աշխատելու մեթոդիկան, խնդիրների մեթոդական վերլուծման եղանակները (վերլուծական և համադրական),
3. հանրահաշվական նյութի ուսումնասիրման մեթոդիկան, մաթեմատիկական արտահայտություններ, գործողություններ կատարելու կարգի կանոնները, արտահայտությունների հիմնական ձևափոխությունները,
4. թվային հավասարություններ, անհավասարություններ և փոփոխական պարունակող հավասարումների, անհավասարումների ուսումնասիրման մեթոդիկան, հավասարումներ կազմելու միջոցով խնդիրների լուծման ձևերը,
5. կարևորագույն մեծությունների ուսումնասիրման մեթոդիկան, երկարության և նրա չափման միավորների ուսուցումը, մեծությունների ուսուցումը 6 տարեկաններով համալրված 1-ին դասարանում,
6. զանգվածի և նրա չափման միավորների, ժամանակի և նրա չափման միավորների ուսուցման մեթոդիկան:

#### **Կկարողանա՝**

1. կիրառել դասին նախապատրաստվելու, դասի պլան կազմելու, դասի մեթոդական վերլուծություն կատարելու հիմնական պահանջները և կանոնները:
2. կիրառել համեմատական մեծությունների հետ կապված խնդիրներով աշխատելու մեթոդական հնարներ, խնդիրների մեթոդական վերլուծման եղանակները (վերլուծական և համադրական)
3. կիրառել մաթեմատիկական արտահայտություններ, գործողություններ կատարելու կարգի, կանոնները հիմնական ձևափոխությունները
4. լուծել թվային հավասարություններ, անհավասարություններ և փոփոխական պարունակող հավասարումներ, անհավասարումներ, կիրառել դրանց ուսուցման մեթոդիկան, լուծել խնդիրներ հավասարումներ կազմելու միջոցով:

5. կիրառել զանգվածի և նրա չափման միավորների, ժամանակի և նրա չափման միավորների ուսուցման մեթոդիկան:

#### **Կտիրապետի՝**

1. դասին նախապատրաստվելու, դասի պլան կազմելու, դասի մեթոդական վերլուծություն կատարելու հիմնական պահանջներին և կանոններին,
2. համեմատական մեծությունների հետ կապված խնդիրներով աշխատելու մեթոդիկային, խնդիրների մեթոդական վերլուծման եղանակներին (վերլուծական և համադրական),
3. թվային հավասարություններ, անհավասարություններ և փոփոխական պարունակող հավասարումների, անհավասարումների ուսումնասիրման մեթոդիկային,
4. կտիրապետի դիդակտիկ խաղերի կազմակերպման հմտություններին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ուսուցչի դասին նախապատրաստվելը, դասի պլանի կազմում, դասի մեթոդական վերլուծություն: **Թեմա 2.** Համեմատական մեծությունների հետ կապված խնդիրներով աշխատելու մեթոդիկան: Խնդիրների մեթոդական վերլուծման եղանակները (վերլուծական և համադրական): **Թեմա 3.** Հանրահաշվական նյութի ուսումնասիրման մեթոդիկան, Մաթեմատիկական արտահայտություններ, գործողություններ կատարելու կարգի, կանոնների ուսումնասիրումը: Ծանոթացում արտահայտությունների հիմնական ձևափոխություններին, ծանոթացում տառային արտահայտություններին: **Թեմա 4.** Թվային հավասարություններ, անհավասարություններ և փոփոխական պարունակող հավասարումների, անհավասարումների ուսումնասիրման մեթոդիկան: Խնդիրների լուծումը հավասարումներ կազմելու միջոցով: **Թեմա 5.** Կարևորագույն մեծությունների ուսումնասիրման մեթոդիկան տարրական դասարանների Մաթեմատիկայի դասընթացում: Երկարության և նրա չափման միավորների ուսուցումը, մեծությունների ուսուցումը 6 տարեկաններով համալրված 1-ին դասարանում: **Թեմա 6.** Զանգվածի և նրա չափման միավորների ուսուցումը: Ժամանակի և նրա չափման միավորների ուսուցումը: **Թեմա 7.** Մեծությունների չափման ուղղակի և անուղղակի եղանակներ, գործողություններ անվանական թվերի հետ, դիդակտիկ խաղերի կազմակերպում:

**11/Բ49- Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա - 4 (6 կրեդիտ )**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**7-րդ կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է՝**

1. Ուսանողների մոտ մեթոդական գիտելիքների վերարտադրողական մակարդակից անցնելու տարբեր իրավիճակները քննադատաբար վերլուծելու և գնահատելու, հիմնավորված գործողություններ կատարելու կարողությունների ձևավորմանը:

2. Ուսանողները պատրաստ լինեն դպրոցում այլընտրանքային որևէ ծրագրով աշխատելուն, ձևավորվի հետազոտություններ կատարելու հմտություններ:

3. Ուսանողներին զինել երկրաչափական պատկերների և դրանց պարզագույն հատկությունների հետ աշակերտներին ծանոթացման մեթոդական հնարներով, ծանոթացնել երկրաչափական պատկերների մակերեսների հաշվման վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկային:

### **Կրթական արդյունքները՝**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

1. կոտորակների հետ ծանոթացնելու մեթոդիկան, կոտորակների ուսումնասիրման համակարգը,
2. կոտորակների համեմատումը, թվի մասի և մասով թվի գտնելու վերաբերյալ խնդիրների լուծումը,
3. երկրաչափական նյութի ուսումնասիրման մեթոդիկան, երկրաչափական պատկերների (կետ, ուղիղ և կոր գծեր, հատված, բեկյալ գիծ) և դրանց պարզագույն հատկությունների հետ աշակերտներին ծանոթացման մեթոդիկան,
4. մաթեմատիկական գիտության մեջ օգտագործվող հետազոտման մեթոդները,
5. կրտսեր դպրոցականների զարգացմանը նպաստող աշխատանքները Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, տարրական դպրոցում գործող այլընտրանքային դասագրքերի բովանդակությունը,
6. ինտերակտիվ (փոխգործուն) մեթոդները Մաթեմատիկայի տարրական դասընթացում, բազմաբնույթ մտածողության տարրերը:

#### **Կկարողանա՝**

1. կիրառել կոտորակների հետ ծանոթացնելու մեթոդիկան, կոտորակների ուսումնասիրման համակարգը,
2. կիրառել երկրաչափական նյութի ուսումնասիրման, երկրաչափական պատկերների (կետ, ուղիղ և կոր գծեր, հատված, բեկյալ գիծ) և դրանց պարզագույն հատկությունների հետ աշակերտներին ծանոթացման մեթոդիկան,
3. իրականացնել աշակերտների տարածական պատկերացումների և երևակայությունների զարգացմանը նպաստող աշխատանքներ, լուծել պատկերների ճանաչման վերաբերյալ խնդիրներ,

4. կիրառել մաթեմատիկական գիտության մեջ օգտագործվող հետազոտման մեթոդները, իրականացնել դիտումներ, աշակերտների գրավոր աշխատանքների վերլուծում, զրույց,
5. իրականացնել կրտսեր դպրոցականների զարգացմանը նպաստող աշխատանքներ, տարրական դպրոցում գործող այլընտրանքային դասագրքերի վերլուծություն,
6. կիրառել ինտերակտիվ (փոխգործուն) մեթոդները մաթեմատիկայի տարրական դասընթացում, բազմաբնույթ մտածողության տարրերը:

#### **Կտիրապետի՝**

1. կոտորակների հետ ծանոթացնելու մեթոդիկային,
2. երկրաչափական նյութի ուսումնասիրման, երկրաչափական պատկերների (կետ, ուղիղ և կոր գծեր, հատված, բեկյալ գիծ) և դրանց պարզագույն հատկությունների հետ աշակերտներին ծանոթացման մեթոդիկային,
3. աշակերտների տարածական պատկերացումների և երևակայությունների զարգացմանը նպաստող հմտությունների,
4. կտիրապետի ինտերակտիվ (փոխգործուն) մեթոդներին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Կոտորակների հետ ծանոթացնելու մեթոդիկան, կոտորակների ուսումնասիրման համակարգը: **Թեմա 2.** Կոտորակների համեմատումը, թվի մասի և մասով թվի գտնելու վերաբերյալ խնդիրների լուծում: **Թեմա 3.** Երկրաչափական նյութի ուսումնասիրման մեթոդիկան: Երկրաչափական պատկերների (կետ, ուղիղ և կոր գծեր, հատված, բեկյալ գիծ) և դրանց պարզագույն հատկությունների հետ աշակերտներին ծանոթացնելու մեթոդիկան: **Թեմա 4.** Երկրաչափական տարրական կառուցումներ: Պատկերների անվանումը (անկյուն, եռանկյուն, բազմանկյուն, շրջան): **Թեմա 5.** Աշակերտների տարածական պատկերացումների և երևակայությունների զարգացումը: Պատկերների ճանաչման վերաբերյալ խնդիրների լուծում: **Թեմա 6.** Բեկյալ գծի երկարություն, բազմանկյան պարագիծ: Պատկերի մասերի բաժանումը և տրված մասերով պատկերի կազմումը: Մեծությունների չափման ուսումնասիրություն: Երկրաչափական պատկերների մակերեսների վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկան: Կառուցման խնդիրները Մաթեմատիկայի տարրական դասընթացում: **Թեմա 7.** Մաթեմատիկական գիտության մեջ օգտագործվող հետազոտման մեթոդները: Դիտումներ, աշակերտների գրավոր աշխատանքների վերլուծում, զրույց, հարցաթերթիկների լրացում, մանկավարժական էքսպերիմենտ: **Թեմա 8.** Կրտսեր դպրոցականների զարգացումը Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Տարրական դպրոցում գործող այլընտրանքային դասագրքերի վերլուծություն: **Թեմա 9.** Ինտերակտիվ (փոխգործուն) մեթոդների կիրառումը Մաթեմատիկայի տարրական դասընթացում: Բազմաբնույթ մտածողության տարրերը:

**23/ԲՑ- Կերպարվեստ և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ)  
Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**1-ին կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ուսանողների մոտ ձևավորել դրական վերաբերմունք դեպի կերպարվեստը, բարձրացնել նրանց մոտ առարկայի արժևորման մակարդակը, ծանոթացնել կերպարվեստի տեսակների և ժանրերի հետ, ուսանողները կարողանան ինքնուրույն կատարել գծանկարի, գունանկարի և կոմպոզիցիայի առաջադրանքները, կարողանալ տարբերակել կերպարվեստի դասի տիպերը և հետագայում ճիշտ կազմակերպել ուսուցման և դաստիարակության գործընթացները:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա՝**

- դասակարգել և նկարագրել կերպարվեստի տեսակները, ժանրերը,
- ցուցադրել նատյուրմորտի կառուցման հաջորդականությունը, մարդու մարմնակազմի համաչափությունները,
- պատմել դեկորատիվ նկարչության մասին,
- նախշերի տեսակները, կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի պատմությունը, առարկան, կերպարվեստի դասի տիպերը,
- կատարել ստեղծագործական աշխատանքներ առօրյա և ֆանտաստիկ Թեմաներով:

**Կկարողանա՝**

- դասակարգել և տարբերակել ժանրերը,
- նկարել նատյուրմորտներ գծանկարի, գունանկարի և գրիզայի տեխնիկայով, կոմպոզիցիայով ճիշտ տեղադրել նկարի մեջ,
- նկարել մարդ տարբեր տարիքի,
- կազմել նախշեր,
- կազմել դասի օրինակելի պլան,
- տարբերակել երեխայի տարիքային առանձնահատկությունները,
- դասի տիպերը 1-4-րդ դասարաններում,
- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

**Կտիրապետի՝**

- գունանկարի և գծանկարի կատարման տեխնիկային,

- նկարչության դասավանդման ժամանակ դպրոցում կիրառվող ավանդական և նոր մեթոդներին,
- միջառարկայական կապերին և կերպարվեստի ժանրերին,
- դպրոցում գեղագիտական դաստիարակության իրականացման, մեկնաբանման, գնահատման նոր համակարգին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակության բաղկացուցիչ մաս, Կերպարվեստը որպես գեղագիտական դաստիարակության միջոց, կերպարվեստը արվեստների համակարգում: **Թեմա 2.** «Կերպարվեստ» առարկայի ուսումնական նպատակները, կերպարվեստ առարկայի կրթական նշանակությունը «Կերպարվեստ» բնագավառի ուսումնական գործունեության բաղադրիչները: **Թեմա 3.** Գծանկարը գրաֆիկական նկարչության տեսակ, ուսուցողական գծանկարի զարգացման համառոտ ակնարկ, ուսումնական գծանկարի մեթոդական հիմքերը, ուսումնական գծանկարի կատարման ժամանակ կիրառվող մեթոդները: **Թեմա 4.** Բնականից կատարվող գծանկար կտրտված մակերևույթ ունեցող երկրաչափական մարմիններից: Մի քանի առարկաններից կազմված նատյուրմորտի առաջադրում: Գծանկարի կատարման ժամանակ օգտագործվող անհրաժեշտ նյութերը և պիտույքները: Հասկացություն հեռանկարի մասին: Գծային և գունային հեռանկարներ: **Թեմա 5.** Կոմպոզիցիան ստեղծագործության հիմք: Առաջադրանքի կոմպոզիցիոն տեղադրում: Հասկացություն նկարի մաթեմատիկական, թեմատիկ կոմպոզիցիոն կենտրոնների մասին: **Թեմա 6.** Հաստոցային գունանկարչություն և մոնումենտալ-դեկորատիվ գունանկարչություն. Որմնանկարչություն, խճանկարչություն, մանրանկարչություն, գեղանկարչության տեխնիկական և նյութերը: **Թեմա 7.** Հաստոցային գրաֆիկայի տեսակները, բարձր տպագրություն, խոր տպագրություն, հարթ տպագրություն: Գրքի գեղարվեստական ձևավորում և նկարազարդում :Պլակատ և ծաղրանկար: **Թեմա 8.** Դեկորատիվ կիրառական արվեստի տեսակները:Երկրաչափական, բուսական և կենդանական նախշերը դեկորատիվ կիրառական արվեստում: Տառատեսակներ,գորգի նախշի նկարում: **Թեմա 9.** Քանդակագործությունը կերպարվեստի տեսակ: Քանդակակազմության տեսակները: Կավ, կավի մշակումը և նախապատրաստումը: **Թեմա 10.** Կերպարվեստի ժանրերը: Նատյուրմորտի, դիցաբանական, բնանկարի, պատմական ժանրերը և ժանրերում ստեղծագործող նկարիչները:

**23/Բ52-Տեխնոլոգիա և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ)**  
**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

## 1-ին կիսամյակ, քննություն

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել աշխատանքային դաստիարակության խնդիրներին ու նպատակներին, ուսանողներին տալ գիտելիքներ բնական և արհեստական նյութերի և դրանցով աշխատելու առանձնահատկությունների վերաբերյալ: Ուսումնասիրեն դասավանդման ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդները, որպեսզի կարողանան ճիշտ պլանավորել և դասավանդել տեխնոլոգիայի դասը:

## Կրթական արդյունքները

### Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

**Կիմանա** դասակարգել տեխնոլոգիայի խնդիրները, շարադրել աշխատանքային դաստիարակության մասին, դասի կառուցվածքը և աշխատանքային գործունեության ձևերը, ներկայացնել թղթի ստացման պատմությունը, օրիգամների ծագման պատմությունը և այլն:

**Կկարողանա** կատարել փորձեր թղթի հետ և տարբերակել թղթի տեսակները, դիտարկել աշխատանքային գործունեություն ճիշտ մեթոդիկայով, տարբերակել բնական և արհեստական թելերը:

**Կտիրապետի** թղթով պատրաստվող աշխատանքներ կատարելու վարպետությանը, պլանավորել տեխնոլոգիայի դասը դպրոցում, ավանդական և նոր մեթոդները ներկայացնելուն, բնական նյութերով աշխատանքի ընթացքում երեխաների ստեղծագործական ունակությունները բացահայտելուն:

## Բովանդակություն

**Թեմա 1.** Աշխատանքային դաստիարակություն: Աշխատանքային դաստիարակության բաղադրամասերը դպրոցում: **Թեմա 2.** «Տեխնոլոգիա» առարկայի նպատակները: **Թեմա 3.** «Տեխնոլոգիա» առարկայի պահանջները, խնդիրները, բովանդակությունը: **Թեմա 4.** Ուսուցման մեթոդների և մեթոդական հնարների տեղայնացումը «տեխնոլոգիա» առարկայական դաշտում: **Թեմա 5.** Աշխատանքային անվտանգության կանոնների պահպանումը տեխնոլոգիա առարկայի դասաժամերին: Թղթով և սովարաթղթով աշխատանքի մեթոդիկան: **Թեմա 6.** Ապլիկացիան որպես դեկորատիվ աշխատանքի տեսակ: **Թեմա 7.** Խճանկար կամ խճանկարչություն (մոզայկա): **Թեմա 8.** Օրիգամին որպես հնագույն արվեստ: Օրիգամիում ընդունված պայմանական նշանները: **Թեմա 9.** Աշխատանք բնական և արհեստական նյութերով: **Թեմա 10.** Կավի մշակման տեխնոլոգիան: **Թեմա 11.** Ծղոտ, ծղոտի մշակման տեխնիկան: **Թեմա 12.** Մանածագործական նյութերով աշխատանքների դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիական մշակումը: **Թեմա 13.** Մանածագործական նյութերով աշխատանքների ազդեցությունը երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման գործում: **Թեմա 14.** Գործվածքով, թելերով, ժապավեններով աշխատանք: **Թեմա 15.** Գորբելեն, գործելու տեսակները:

**Թեմա 16.** Կարպետ, գործելու սկզբունքները: **Թեմա 17.** Ասեղնագործություն՝ տեսակները: **Թեմա 18.** Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկան հիմնական դպրոցի տարրական դասարանում:

**13/Բ1- Երաժշտություն և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

**1-ին կիսամյակ, քննություն**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել դասավանդման տեսության և մեթոդիկայի հետ, ծանոթացնել երաժշտության ծագման, ձևավորման ու զարգացման օրինաչափություններին, սովորողների մոտ ստեղծել և ամրապնդել երաժշտադաստիարակչական աշխատանքի վերաբերյալ հստակ և հիմնավոր պատկերացումներ, ինչպես նաև ուսանողներին ծանոթացնել վոկալ աշխատանքին, մանկական ձայնի բնորոշ առանձնահատկություններին, երգչախմբի ձայնի տեսակներին, դասավանդման տեսության և մեթոդիկայի հետ, ծանոթացնել երաժշտության ծագման, ձևավորման ու զարգացման օրինաչափություններին, սովորողների մոտ ստեղծել և ամրապնդել երաժշտադաստիարակչական աշխատանքի վերաբերյալ հստակ և հիմնավոր պատկերացումներ, ինչպես նաև ուսանողներին ծանոթացնել վոկալ աշխատանքին, մանկական ձայնի բնորոշ առանձնահատկություններին, երգչախմբի ձայնի տեսակներին, դասավանդման տեսության և մեթոդիկայի հետ, ծանոթացնել երաժշտության ծագման, ձևավորման ու զարգացման օրինաչափություններին, սովորողների մոտ ստեղծել և ամրապնդել երաժշտադաստիարակչական աշխատանքի վերաբերյալ հստակ և հիմնավոր պատկերացումներ:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա** երաժշտության դասավանդման տեսությունը և մեթոդիկան, երաժշտության ծագման, ձևավորման և զարգացման օրինաչափությունները, երաժշտական դաստիարակության աշխատանքների վերաբերյալ հստակ պատկերացումներ, օկտավաներ, նոտագրություն, երաժշտական տերմինները, տեմպի գրառումները, ռիթմական պատկերների խմբավորման, ալիտերացիայի և դինամիկայի նշանների մասին, կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացման առանձնահատկությունները, ցածր, միջին և բարձր դասարաններում երաժշտության դասի կազմակերպման մեթոդները:

**Կկարողանա** երգը թերթից ընթերցել, բարդ ռիթմիկ պատկերները խմբավորել, տեմպերը նշաններով տարբերակել, նյուանսներին տիրապետել, մանկական երգչախմբին սովորեցնել բազմաբնույթ և բազմաձայն երգեր, կազմել դասի օրացուցային թեմատիկ պլան, երգի

ուսուցման օրինակելի պլան, կարողանալ համեմատել ճիշտ և սխալ երգեցողություն, կազմակերպել երաժշտության ունկնդրման դաս:

**Կտիրապետի** երաժշտության դասավանդման մեթոդներին, մանկական երգչախումբ ղեկավարելուն, օկտավաներին, սոլի և բասի բանալիներին, բոլոր նոտաներին, ռիթմին, ալտերացիային, տառային նշումներին, դինամիկայի նշաններին և հանրակրթական և հանրամատչելի բնույթի երաժշտական որոշ հարցերի:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Հնչյուն: Հասկացություն հնչյունի մասին: **Թեմա 2.** Հնչյունի տևողություն, ռիթմ, երաժշտառիթմական շարժում: **Թեմա 3.** Ալտերացիայի նշաններ, հնչյունի ածանցված աստիճաններ: **Թեմա 4.** Հնչյունի էն հարմոնիզմ: Դիատոնիկ և խրոմատիկ կիսատոններ, ամբողջ տոներ: Դինամիկայի նշաններ: **Թեմա 5.** Տեմպ: Տակտ, չափ, խմբավորում, նոտագրությունը կրճատող և պարզեցնող նշաններ, պարզ և բարդ տակտեր: **Թեմա 6.** Ինտերվալ: Ինտերվալների էնհարմոնիզմը: **Թեմա 7.** Լադ, տոնայնություն, գամմա: **Թեմա 8.** Ակորդներ: **Թեմա 9.** Երաժշտության դասավանդման մեթոդիկայի ընդհանուր հարցեր: **Թեմա 10.** Երգչական անհրաժեշտ ունակություններ: **Թեմա 11.** Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը: Երաժշտության դասը և նրա կառուցվածքը: **Թեմա 12.** Մանկական ծայնի պահպանման և զարգացման հարցեր: **Թեմա 13.** Երաժշտական ունկնդրման դասի օրինակ:

## **13/Բ10- «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դասավանդման մեթոդիկա (5 կրեդիտ )**

**Շաբաթական 13 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

### **Ց-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակը**

Սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր է հասկանալ, թե նա ինչպիսի փոխհարաբերությունների մեջ է իր ընկերների, ուսուցիչների, ընտանիքի անդամների հետ, համակեցության կանոններ և ճիշտ վարքագիծ ձևավորելու համար: Կենսոլորտի մասին համակողմանի պատկերացում կազմելու համար պետք է տարբերակի նրա առանձին բաղադրիչների՝ մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի փոխադարձ կապը, մեզ սնող ու պահող հողածածկույթի դերը: Գաղափար կազմել բնության տարբեր եղանակային դրսևորումների մասին, ինչպես է մարդն արձագանքում եղանակի փոփոխություններին:

Կարևորվում է նաև առողջության և անվտանգ կենսագործունեության հիմնահարցերը:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

## **Կիմանա՝**

- բացահայտել մարդկային փոխհարաբերությունները և վարքագծի կանոնները տանը, փողոցում, դասարանում,
- լուսաբանել համագործակցության և փոխօգնության հիմնական առանձնահատկությունները,
- ճանաչել ընտանեկան տոները, ազգային տոնախմբությունները,
- նկարագրել ինչ է բնությունը, բնության կառուցվածքը՝ արեգակնային համակարգից մինչև երկիր մոլորակ,
- ճանաչել բնական միջավայրի կենսաբազմազանությունը, շրջապատում հանդիպող բույսերին և կենդանի օրգանիզմներին,
- Գնահատել բույսերի դերը բնության մեջ և մարդու կյանքում (օդի մաքրությունը, բույսերի գեղեցկությունը, հրաշալի դեղատու, մրգեր, բանջարեղեն, մշակովի և այլ բույսեր): Ճանաչել ընտանի և վայրի կենդանիները: Բնության մեջ դրանց նշանակությունը,
- սահմանել առողջություն և անվտանգ կենսագործունեության հիմնական սկզբունքները՝ սնունդ, հիգիենա: Ինչպես խուսափել վարակներից: Անվտանգության պահպանումը տանը և տնից դուրս: Երթևեկության կանոնները:

## **Կկարողանա՝**

- Լուսաբանել՝ ով է ինքը. ինչպես է ճանաչում ինքն իրեն, իր նախասիրությունները, նպատակները, սովորությունները: Ինչով է նման ու տարբեր մյուսներից: Ինչպես է ընկալում աշխարհը:
- Իրականացնել ներդաշնակ հարաբերություններ ընտանջքում, իր իրավունքներն ու պարտականությունները, համակեցության կանոնները: Ընտանիքը հանգստանում է:
- Կիրառել ստացած գիտելիքները բնության բոլոր կառուցվածքային բաղադրիչների առանձնահատկությունները պարզաբանելու համար:
- Կատարել ինքնուրույն դիտարկումներ իր շրջապատում տարածված բույսերի ու կենդանիների վերաբերյալ:
- Պարզագույն խմբավորումներ կատարել, դիտարկումներ անել մթնոլորտային երևույթների (տեղումների և քամու) վերաբերյալ, մեկնաբանություններ անել հողի գլխավոր հատկանիշի՝ բերրիության (բերքատվության) վերաբերյալ:
- Լուսաբանել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից, վերլուծել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները:

## **Կտիրապետի՝**

- ընկալումների բազմազանությանը (հանդուրժողականություն, իրավահավասարություն, ընկերասիրություն, փոխօգնություն),
- վարքի կանոններին, միջավայրին, ուր ապրում է: Մարդու՝ միջավայրում ունեցած դերի կարևորությանը,
- բնության գաղտնիքներին, մեկնաբանություններ կատարելուն բնական երևույթների և գործընթացների վերաբերյալ,
- առողջություն և անվտանգ կենսագործունեություն ժամանակակից պահանջներին,
- Երկիր մոլորակի կենսաբազմազանության՝ բույսեր, կենդանիներ, մարդ, փոխկապվածությունը բնության մեջ:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ով եմ ես: **Թեմա 2.** Ես և իմ ընտանիքը: **Թեմա 3.** Ես և դպրոցը: **Թեմա 4.** Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը: **Թեմա 5.** Քաղաք և գյուղ: **Թեմա 6.** Բնությունն իմ շուրջ: **Թեմա 7.** Առողջություն և անվտանգ կենսագործունեություն: **Թեմա 8.** Ես և իմ շրջապատի մարդիկ: **Թեմա 9.** Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը: **Թեմա 10.** Երկնային մարմիններ: **Թեմա 11.** Տարվա եղանակներ: **Թեմա 12.** Մեր առողջությունը: **13.** Անվտանգությունը մեր շրջապատում: **Թեմա 14.** Բնություն: **Թեմա 15.** Մարմիններ, նյութեր, մասնիկներ: **Թեմա 16.** Բնությունը և մարդը:

### **22/Բ33- Մանկավարժական տեխնոլոգիաներ (5 կրեդիտ )**

#### **Շաբաթական 13 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)**

#### **8-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակը.** «Մանկավարժական տեխնոլոգիաներ» դասընթացը կիրառական, գործնական ուղղվածություն ունի: Դասընթացի նպատակն է տարբերակել և դասակարգել դպրոցում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները, կարողանալ պլանավորել և ուսումնական գործընթացում ճիշտ կիրառել մանկավարժական տեխնոլոգիաները, դասավանդման մեթոդներն ու հնարները:

#### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

**Կիմանա** սահմանել «Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը, բացահայտել նրա էությունը, տալ մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների բնութագիրը, ներկայացնել դրանց դրական և բացասական կողմերը, մտապահել մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, կրթական դերը, տարբերակել տեխնոլոգիաները և գտնել դրանք ճիշտ ու տեղին կիրառելու ուղիները:

**Կկարողանա** պատկերավոր ներկայացնել տարբեր տեխնոլոգիաները, մշակել դրանք գործնականում կիրառելու սկզբունքները, բացահայտել դրանց անհատակրթիչ դերը և վարպետություն դրսևորել կիրառման ընթացքում ծագած բարդությունները հաղթահարելու գործում:

**Կտիրապետի** ցանկացած առարկայի, ցանկացած թեմայի կամ դասի պլաններ կազմելու սկզբունքներին, տարբերակի ընտրված տեխնոլոգիան և մեթոդը և առանձնացնի դրանք՝ դասի յուրաքանչյուր պահին տեղին օգտագործելու:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը: **Թեմա 2.** Մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրիչներն ու դրանց դասակարգումը: **Թեմա 3.** Ավանդական ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 4.** Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 5.** Հարգացնող ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 6.** Նախագծային ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 7.** Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 8.** Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 9.** Քննադատական ուսուցման տեխնոլոգիա: **Թեմա 10.** «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիա: **Թեմա 11.** Իսաղային տեխնոլոգիաներ: **Թեմա 12.** Անձնային կողմնորոշման տեխնոլոգիաներ:

## **13/Բ59- Ֆիզիկական դաստիարակության տեսություն և դասավանդման մեթոդիկա (2 կրեդիտ)**

**Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

### **7-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Դասընթացի նպատակը**

Դասընթացը նպատակաուղղված է տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողներին ծանոթացնել հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում ֆիզկուլտուրայի դասավանդման խնդիրներին, հնարքներին և մեթոդներին, սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում:

#### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

- «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և դասավանդման մեթոդիկա» առարկան և հիմնական հասկացությունները,
- ֆիզիկական դաստիարակության նպատակը և խնդիրները,

- Ֆիզիկական դաստիարակության միջոցները: Ֆիզիկական վարժությունները որպես Ֆիզիկական դաստիարակության հիմնական միջոց,
- Ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերը դպրոցում,
- Ֆիզիկական դաստիարակության ուսուցման սկզբունքները,
- կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը: Թույլ առողջությամբ երեխաների ֆիզ. դաստիարակությունը,
- Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկական երրորդ դասարանում,
- Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկական չորրորդ դասարանում:

#### **Կկարողանա՝**

- արժևորել ֆիզկուլտուրայի դերը երեխայի առողջության պահպանման գործում,
- ցուցաբերել հմտություն ֆիզիկական վարժությունների ուսուցման գործում,
- բացատրել ֆիզդաստիարակության դասավանդման դերը հանրակրթական հաստատությունում,
- տալ համապատասխան ֆիզիկական բեռնվածություն տարրական դասարաններում:

#### **Կտիրապետի՝**

- տարրական դասարաններում ֆիզիկական դաստիարակության մեթոդներին,
- տարրական դասարաններում ֆիզիկական վարժությունների ուսուցման տեխնիկային,
- տարրական դասարաններում ֆիզիկական կուլտուրայի դասավանդման մեթոդներին:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ֆիզիկական դաստիարակության տեսություն առարկան և հիմնական հասկացությունները: **Թեմա 2.** Ֆիզիկական դաստիարակության նպատակը և խնդիրները: **Թեմա 3.** Ֆիզիկական դաստիարակության միջոցները: Ֆիզիկական վարժությունները որպես Ֆիզիկական դաստիարակության հիմնական միջոց: **Թեմա 4.** Ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերը (դպրոցում, արտադպրոցական հաստատությունների համակարգում, ընտանիքում): **Թեմա 5.** Ֆիզիկական դաստիարակության ուսուցման սկզբունքները: **Թեմա 6.** Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների Ֆիզիկական դաստիարակությունը: Թույլ առողջությամբ երեխաների ֆիզ. դաստիարակությունը: **Թեմա 7.** Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկական երրորդ դասարանում: **Թեմա 8.** Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկական չորրորդ դասարանում:

### **3.2. Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ**

22/Բ20 - Լեզվական վերլուծության սկզբունքները ( 4 կրեդիտ )

### **Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

#### **7-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել լեզվական տարբեր վերլուծությունների սկզբունքներին և առանձնահատկություններին՝ ըստ լեզվի տարբեր /հնչյունական, ձևայնաբանական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական/ մակարդակների:

#### **Կրթական արդյունքները**

##### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

- լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները, լեզվի կառուցվածքային մակարդակները,
- հնչյուն և հնչույթ տարբերակումը, հնչյունների տեսակները, հնչյունական վերլուծության սկզբունքները,
- ձևայնաբանության սահմանումը, նրանց տեսակները, ձևայնաբանության դերը բառերի կազմության հարցում,
- բառերի տեսակներն ըստ կազմության, բարդությունների տեսակներն ու կազմության առանձնահատկությունները, բառակազմական վերլուծության սկզբունքները,
- բառապաշարի դասակարգումները,
- բառերի խոսքիմասային առանձնահատկությունները, նյութական, քերականական, վերաբերմունքային իմաստ արտահայտող, թեքվող և չթեքվող խոսքի մասերի տարբերակումը, ձևաբանական վերլուծության սկզբունքները,
- բառակապակցության, նախադասության տեսակներն ու կառուցվածքային և փոխակերկման առանձնահատկությունները, շարահյուսական վերլուծության սկզբունքները,
- լեզվի մակարդակների փոխհարաբերությունները:

##### **Կկարողանա՝**

- ներկայացնել լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները, լեզվի կառուցվածքային մակարդակները,
- նշել հնչյուն և հնչույթ տարբերակումը, թվարկել հնչյունների տեսակները,
- գործադրել հնչյունական վերլուծության սկզբունքները,
- սահմանել, թվարկել և առանձնացնել ձևայնաբանության տեսակները, ընդգծել նրանց դերը բառերի կազմության հարցում,
- տարբերակել բառերի տեսակներն ըստ կազմության, բարդությունների տեսակները, ցույց տալ բառակազմական վերլուծության սկզբունքները,

- ներկայացնել բառապաշարն ըստ դասակարգումների,
- ընդգծել բառերի խոսքիմասային առանձնահատկությունները, բացատրել ձևաբանական վերլուծության սկզբունքները,
- ցույց տալ բառակապակցության, նախադասության տեսակները, կառուցվածքային ու փոխակերկման առանձնահատկությունները,
- բացատրել շարահյուսական վերլուծության սկզբունքները,
- ցույց տալ լեզվի մակարդակների փոխհարաբերությունները:

**Կտիրապետի** լեզվի կառուցվածքային մակարդակները տարբերելու, հնչյունների տեսակները որոշելու, հնչյունական վերլուծության սկզբունքները բացատրելու, հնչյունական վերլուծություն կատարելու, բառապաշարը դասակարգելու, ձևույթների տեսակները առանձնացնելու, ըստ կազմության բառերը դասակարգելու, բարդությունների տեսակները որոշելու, բառակազմական վերլուծության սկզբունքները բացատրելու և բառակազմական վերլուծություն կատարելու, բառերի խոսքիմասային առանձնահատկությունները նշելու, ձևաբանական վերլուծություն կատարելու, բառակապակցության, նախադասության տեսակները տարբերելու, նրանց կառուցվածքային առանձնահատկություններն ընդգծելու, շարահյուսական վերլուծության կատարելու, լեզվի մակարդակների փոխհարաբերությունները ցույց տալու հմտությունների:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները: Լեզվի կառուցվածքային մակարդակները: **Թեմա 2.** Հնչյունական մակարդակ: Հնչյուն և հնչույթ: Հնչյունները իբրև լեզվի նյութական նվազագույն միավորներ, նրանց տեսակները: Հնչյունական վերլուծության սկզբունքները: **Թեմա 3.** Ձևույթային մակարդակ: Ձևույթներն իբրև լեզվի իմաստակիր նվազագույն միավորներ, նրանց տեսակները: Ձևույթների դերը բառերի կազմության հարցում: Բառակազմական վերլուծության սկզբունքները: Բառերի տեսակներն ըստ կազմության: Բարդությունների տեսակներն ու կազմության առանձնահատկությունները: Բառային մակարդակ: Բառապաշարի դասակարգումները: **Թեմա 4.** Ձևաբանական մակարդակ: Բառերի խոսքիմասային առանձնահատկությունները: Նյութական, քերականական, վերաբերմունքային իմաստ արտահայտող, թեքվող և չթեքվող խոսքի մասերի ենթարկվող բառեր: Ձևաբանական վերլուծության սկզբունքները: **Թեմա 5.** Շարահյուսական մակարդակ: Բառակապակցություն և նախադասություն: Կառուցվածքային առանձնահատկությունները: Բառակապակցությունների տեսակներն ու կառուցվածքային առանձնահատկությունները վերլուծություն կատարելիս: Փոխակերպումներ: Դերբայական դարձվածի վերլուծության սկզբունքները: Շարահյուսական վերլուծության սկզբունքները: Աշխատանք բնագրերով: Բնագրերի լեզվական վերլուծություն

**22/Բ7- Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները (4 կրեդիտ)**

**Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

**7-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ընդհանուր պատկերացում տալ գեղարվեստական գրականության առանձնահատկությունների մասին, ներկայացնել գրական երկի վերլուծության հիմնական սկզբունքները, արժևորել դրանց դերը բնագրի ճիշտ ընկալման և գնահատման գործում, սովորողներին ուղղորդել՝ կատարելու ինքնուրույն վերլուծական աշխատանք:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա** գրականագիտության հիմնական հասկացություններն ու եզրույթները, գեղարվեստական երկի մանրազնին, մասնագիտական վերլուծության ձևերը:

**Կկարողանա** գեղարվեստական ստեղծագործությունը համակողմանի վերլուծության ենթարկել՝ կիրառելով ժամանակակից գրականագիտության ձեռքբերումները, վերլուծման տարբեր եղանակները:

**Կտիրապետի** գեղարվեստական գրականության ուսումնասիրման և ստեղծագործությունների վերլուծության հիմնական սկզբունքներին:

**Բովանդակություն**

**Թեմա 1.** Գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկությունները: Գրական երկի գիտական ուսումնասիրությունը և նրա խնդիրները: Բնագիր (տեքստ): Համատեքստ: Բանալի բառեր: **Թեմա 2.** Գրական ստեղծագործության կառուցվածքը և նրա վերլուծությունը: Գրական ստեղծագործության հյուսվածքը (նկարագրություն, պատմություն, տրամախոսություն): Բովանդակություն և ձև: **Թեմա 3.** Կոմպոզիցիայի հենակետերը: Գեղարվեստական տեքստի ուժեղ դիրքերը՝ վերնագիր, բնաբան, տեքստի և առանձին մասերի սկիզբը և վերջը (առաջին և վերջին նախադասությունները): **Թեմա 4.** Գրական ուղղություն: Հոսանք: Գեղարվեստական համակարգեր: **Թեմա 5.** Գեղարվեստական ստեղծագործության նախնական վերլուծություն. Թեման, տեսակը, ոճը: **Թեմա 6.** Գրական ստեղծագործության իրազեկային (ինֆորմատիվ) և համալիր վերլուծություն: **Թեմա 7.** Գրական ստեղծագործության լեզվաբանական և ոճաբանական վերլուծություն: **Թեմա 8.** Գրական ստեղծագործության գրականագիտական վերլուծություն: **Թեմա 9.** Գրական ստեղծագործության բանասիրական վերլուծություն: **Թեմա 10.** Գրական ստեղծագործության մոտիվային վերլուծություն:

**23/Բ51- Սոցիալական մանկավարժություն (4 կրեդիտ)**

**Շաբաթական 10 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

## **8-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** հաղորդել գիտելիքներ սոցիալական մանկավարժության գիտատեսական հիմքերի, սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունների և գործունեության ոլորտների վերաբերյալ:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

##### **Կիմանա՝**

- սոցիալական մանկավարժության առանձնահատկությունները՝ որպես գիտաճյուղի, սոցիալականացման համատեքստում դաստիարակությունը և սոցիալական դաստիարակությունը,
- սոցիալական մանկավարժության սկզբունքներն ու գործառույթները,
- սոցիալականացման ինստիտուտները, գործոնները, փուլերը,
- սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները և գործառույթները:

##### **Կկարողանա՝**

- ներկայացնել մարդուն սոցիալականացման գործընթացում,
- բնութագրել սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության,
- պլանավորել և իրականացնել անձի սոցիալականացմանն ուղղված մանկավարժական գործունեություն,
- վերլուծել անձի սոցիալականացման գործընթացի խնդիրներն ու դժվարությունները

##### **Կտիրապետի՝**

- մարդու անձ ձևավորման, սոցիալականացման վերաբերյալ սոցիալական աջակցության նախագծերի կազմմանը:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Սոցիալական մանկավարժությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 2.** Սոցիալական մանկավարժության զարգացման պատմությունից: **Թեմա 3.** Սոցիալական մանկավարժության սկզբունքներն ու գործառույթները: **Թեմա 4.** Սոցիալականացումը որպես սոցիալիալական մանկավարժության հիմնախնդիր: **Թեմա 5.** Սոցիալականացման գործոնները. կենսաբանական գործոններ: **Թեմա 6.** Սոցիալականացման գործոնները. սոցիալական գործոններ: **Թեմա 7.** Ընտանիքը որպես սոցիալականացման ինստիտուտ: **Թեմա 8.** Սոցիալականացման փուլերը: **Թեմա 9.** Սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության: **Թեմա 10.** Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները և գործառույթները:

**23/Բ34 - Մանկավարժության պատմություն (4 կրեդիտ )**

**Շաբաթական 10 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

## **8-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** բացահայտել հասարակական - պատմական տարբեր ֆորմացիաներին բնորոշ կրթադաստիարակչական համակարգերի, մանկավարժության տարբեր երախտավորների ներդրումների էությունը, տեղեկացնել հայ դպրոցի ու մանկավարժական մտքի անցած ուղու պատմության և հայ գործիչների կատարած ներդրումների մասին:

### **Կրթական արդյունքները**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

**Կիմանա** դաստիարակության, դպրոցի անցած ուղու պատմությունը հնագույն շրջանից սկսած մինչև մեր օրերը (հասարակական - տնտեսական տարբեր կացութեան ընթացքում), ինչպես նաև մանկավարժության երախտավորների ներդրումները դաստիարակության ու դպրոցի զարգացման պատմության մեջ:

**Կկարողանա** ինքնուրույն ուսումնասիրել պատմամանկավարժական բնույթի աղբյուրներ, նախապատրաստվել դասավանդման մեթոդիկաների ուսումնասիրման համար, միջառարկայական կապեր հաստատել ժողովուրդների պատմության և մանկավարժության պատմության դասընթացների միջև՝ մշակութային հարցեր քննարկելիս:

**Կտիրապետի** պատմամանկավարժական գիտելիքների, պատմամանկավարժական աղբյուրների հետ աշխատելու կարողության, որն օգտակար է ապագա մանկավարժի ինքնակրթության համար:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Դաստիարակությունը և դպրոցը ստրկատիրական կարգերում: Մանկավարժության պատմության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Դաստիարակությունը նախնադարյան համայնական կարգերում: **Թեմա 3.** Դաստիարակությունը և դպրոցը ստրկատիրական կարգերում: **Թեմա 4.** Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: **Թեմա 5.** Դպրոցը և մանկավարժությունը նոր շրջանում (մինչև 1917թ.): **Թեմա 6.** Հայ մանկավարժության պատմություն: **Թեմա 7.** Մանկավարժական միտքն ու դաստիարակությունը մինչմեսրոպյան շրջանում: **Թեմա 8.** Դպրոցն ու դաստիարակությունը 5-11-րդ դարերում: **Թեմա 9.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-18-րդ դարերում: Հայ դպրոցի հետագա զարգացումն ու բարգավաճումը: **Թեմա 10.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դարի դարասկզբին: **Թեմա 11.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 1920 թվականից մինչև մեր օրերը:

## **23/Բ7-Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն (2 կրեդիտ)**

### **Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

## **6-րդ կիսամյակ, ստուգարք**

## **Դասընթացի նպատակը**

Դասընթացը նպատակ ունի ընդլայնել ուսանողների մասնագիտական հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել ուսանողների մոտ մասնագիտական և միջանձնային արդյունավետ փոխհարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ հոգեբանական հմտությունների ձևավորմանը:

## **Կրթական արդյունքները**

### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

- անձի և սոցիալական միջավայրի փոխհարաբերության առանձնահատկությունները,
- խմբային և անհատական գործընթացների, ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի սեռական դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները,
- ծնող-երեխա փոխհարաբերությունների օրինաչափությունները:

#### **Կկարողանա՝**

- քննարկել և բացահայտել ընտանեկան փոխհարաբերությունները, միջանձնային հարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները, դրանց սոցիալական պատճառները:

#### **Կտիրապետի՝**

- Ծնողավարման հմտություններին,
- միջանձնային կոնֆլիկտների կանխարգելման և կարգավորման մեթոդներին:

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Սոցիալական հոգեբանության առարկան, խնդիրները, սոցիալական հոգեբանության մեթոդաբանությունը և մեթոդներ: **Թեմա 2.** Հասարակական և միջանձնային հարաբերություններ, սոցիալական խմբերի հոգեբանական բնութագիրը (մեծ և փոքր խմբեր):

**Թեմա 3.** Փոքր խմբերի հոգեբանություն, մեծ խմբեր ( դասակարգերի և ազգի հոգեբանություն):

**Թեմա 4.** Զանգվածների հոգեբանություն: **Թեմա 5.** Ընտանիքի զարգացման պատմությունը:

Ընտանիք եվ ամուսնություն: Ընտանիքը մարդկային խմբի տեսակ: **Թեմա 6.** Ընտանիքի

կառուցվածքը և տեսակները, Ժամանակակից ընտանիքի ֆունկցիաները: Ամուսնական

հարաբերություններ: **Թեմա 7.** Նախաամուսնական հարաբերություններ: Ամուսնաընտանեկան

կյանքի փուլերը: Հուզական հարաբերություններ: **Թեմա 8.** Կնոջ և տղամարդու

փոխհարաներությունները: Ամուսնական հարաբերությունները և նրանց փոփոխությունները:

Ծնող-երեխա փոխհարաբերություններ:

## **23/Բ6 - Կիրառական մանկավարժություն (2 կրեդիտ )**

## **Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)**

### **6-րդ կիսամյակ, ստուգարք**

**Դասընթացի նպատակն է** նպաստել մանկավարժական գործընթացում ապագա դասվարների՝ մանկավարժական իրավիճակները բազմակողմանի վերլուծելու, մանկավարժական խնդիրներ նախագծելու և լուծելու, կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններին համապատասխան նրա անձի զարգացման գործընթացը պլանավորելու, հետազոտական աշխատանքները կազմակերպելու գործնական հմտությունների զարգացմանը:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

#### **Կիմանա՝**

- «Կիրառական մանկավարժություն» դասընթացի առարկան, նպատակը, խնդիրները, առարկայի տեղը և դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ, մանկավարժության կիրառական ոլորտները,
- մանկավարժական հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունավետության պայմանները,
- ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, նպատակահարմարության որոշման սկզբունքները,
- մանկավարժական գործընթացի կազմակերպման ոճերը, ուսումնառողներին ճանաչելու հոգեբանական միջոցներն ու հնարները:

#### **Կկարողանա՝**

- պլանավորել և իրականացնել գործնական հմտությունների զարգացմանն ուղղված մանկավարժական գործունեություն,
- ապահովել տեսության և պրակտիկայի կապը գործնականում,
- լուծել պրոբլեմային իրավիճակներում առաջացող մանկավարժական խնդիրները,
- արդյունավետ հաղորդակցվել մանկավարժական գործընթացում,
- ընտրել դասավանդվող թեմային համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաներ,
- ձևավորել և զարգացնել աշակերտների գործնական կարողություններն ու հմտությունները,
- իրականացնել ուսումնառողների խմբի մանկավարժական դիագնոստիկա, կանխատեսում, նախագծում, մոդելավորում, կազմել պլաններ թեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային պլաններ և այլն:

#### **Կտիրապետի՝**

- մանկավարժական գործընթացի կազմակերպման հաղորդակցական, մանկավարժական, հոգեբանական հնարների ու միջոցների,

- մանկավարժական իրավիճակների վերլուծության, խնդիրների առաջադրման, ըստ նպատակահարմարության լուծման ուղիների ընտրության և կիրառման, արդյունքների գնահատման, ռեֆլեքսիվության կարողությունների:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ընդհանուր հասկացություն կիրառական մանկավարժության մասին: **Թեմա 2.** Մանկավարժի գործնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների նկարագիրը: **Թեմա 3.** Մանկավարժական գործունեության մեթոդաբանությունը: **Թեմա 4.** Մանկավարժական իրավիճակ և խնդիր: **Թեմա 5.** Մանկավարժական խնդիրների լուծման մեջ մանկավարժի հաղորդակցական ոճի առանձնահատկություններն ու նշանակությունը: **Թեմա 6.** Կոնֆլիկտները մանկավարժական իրավիճակներում: **Թեմա 7.** Նախագծային մեթոդը, որպես գործնական հմտությունների զարգացման և կիրառման արդյունավետ գործիք: **Թեմա 8.** Խաղային տեխնոլոգիաները գործնական հմտությունների զարգացման գործընթացում: **Թեմա 9.** Թրենինգները, թրենինգ-սեմինարները՝ որպես ոլորտային հմտությունների զարգացման արդյունավետ միջոցներ: **Թեմա 10.** Մանկավարժի վալետլոգիա:

### **4. Կրթական այլ մոդուլներ**

#### **Մանկավարժական պրակտիկա- 1 ( 2 կրեդիտ )**

**Տևողությունը՝ 2 շաբաթ**

**4-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Նպատակը**

Պրակտիկան կազմակերպվում է ուսումնաճանաչողական նպատակով: Այս պրակտիկայի հիմնական թեման դպրոցն է՝ ուսումնադաստիարակչական, հոգեբանամանկավարժական և արտադասարանական դաստիարակչական գործընթացներով: Ծանոթացում կրթական հաստատությանը, դիտումներ, տվյալների հավաքագրում, համագործակցություն, համագործակցային ուսուցման դիտարկում, զեկուցում, ինքնագնահատում, հետադարձ կապ: Ապագա ուսուցիչների մեջ դաստիարակել երեխաների կյանքի, առողջության և անվտանգության նկատմամբ պատասխանատվության զգացում, ձևավորել դաստիարակության բնագավառի համար անհրաժեշտ հոգեբանամանկավարժական կարողություններ ու հմտություններ:

#### **Կրթական արդյունքները**

#### **Պրակտիկայի ավարտին ուսանողը**

#### **Կիմանա՝**

- հաստատությունը՝ որպես հոգեբանամանկավարժական միջավայր:
- մանկավարժական հետազոտությունների մեթոդները և դասղեկի կողմից դրանց կիրառության ձևերը,

- դասղեկի ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդները աշակերտների բազմակողմանի զարգացման ուղղությամբ,
- ավագ ընկերների աշխատանքային փորձը ընդօրինակելու ձևերը,
- դպրոցի փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը,
- ուսուցչի մանկավարժական գործունեության կառուցվածքը,
- աշակերտների հետ շփման ոճերը:

#### **Կկարողանա՝**

- պլանավորել դաստիարակչական միջոցառումները և հաղորդակցումը մանկավարժական տարբեր իրավիճակներում,
- օրագիր վարելու և մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում կատարած աշխատանքը վերլուծել,
- ուսուցչի ուսումնադաստիարակչական գործունեությունը, աշակերտների վարքը և գործունեությունը դիտելու հմտություններին, ճանաչել, ներկայացնել, քննարկել և մեկնաբանություններ անել պրակտիկայի ընթացքում իր մանկավարժական թղթապանակում հավաքագրած հոգեբանամանկավարժական տվյալները:

#### **Կտիրապելի՝**

- հանրակրթության եզրույթների գիտակցված վերարտադրմանը, մանկավարժական նշանակալի փաստերը, նկարագրի ուսումնադաստիարակչական գործընթացները և սեփական աշխատանքները հասկացություններով, սկզբունքներով և օրենքներով ներկայացնելուն:

### **Մանկավարժական պրակտիկա - 2 ( 8 կրեդիտ )**

#### **Տևողությունը՝ 6 շաբաթ**

#### **6-րդ կիսամյակ, քննություն**

#### **Մանկավարժական պրակտիկայի նպատակը**

- դաստիարակչական նպատակ. մանկավարժական գործունեության նկատմամբ հետաքրքրությունների խթանումը, մանկավարժական կոմպետենցիաների բազայի ձևավորումը,
- ուսումնամեթոդական նպատակ. ձևավորել հատուկ պրոֆեսիոնալ մանկավարժական մասնագիտական կարողությունների և հմտությունների բազա, ինչպես նաև ուսանողին պատրաստել՝ իրականացնելու ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն, որոշել վերոնշյալ պատրաստության աստիճանը, զարգացնել ուսանողների՝ ակտիվ մանկավարժական գործունեությունը

պլանավորելու, իրականացնելու և արդյունքներն ամփոփելու և գնահատելու կարողությունները:

### **Կրթական արդյունքները**

#### **Պրակտիկայի ավարտին ուսանողը**

**Կիմանա** ուսուցչի կողմից օգտագործվող աշակերտի անձի ուսումնասիրման մեթոդները, ուսուցչի կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բազմազան ձևերը, մեթոդները, հնարները, եղանակները աշակերտների բազմակողմանի զարգացման ուղղությամբ, ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը վերլուծելու մեթոդներն ու եղանակները, ուսուցչի կողմից ուսուցման կրթական, դաստիարակող, զարգացնող գործառնությունների իրականացման եղանակները, ուսուցչի կողմից աշակերտների ուսումնաճանաչողական գործունեության տարբեր փուլերում ուսուցման մեթոդների և հնարների կիրառման պայմանները և ձևերը, էքսկուրսիաների կազմակերպման և անցկացման մեթոդիկան, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները և ուսումնառության դրդապատճառները, ուսուցչի կողմից դաստիարակչական աշխատանքի պլանավորումը, դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը, դաստիարակության գործընթացի իրականացման մեթոդները, միջոցները և ձևերը, աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակները և դրա ձևավորման ուղղությամբ ուսուցչի գործունեության առանձնահատկություններն ու մեթոդները, ծնողների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը և ձևերը, առարկայի ուսումնական ծրագրի բովանդակությունը, աշակերտների հետ ուսուցչի աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը, ուսումնական առարկայի դասի տիպերը, կառուցվածքը, առանձնահատկությունները, դասերի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու մեթոդները, եղանակները:

**Կկարողանա** մշտապես շփվել սովորողների հետ և հետևել նրանց գործունեությանը և շփումներին, իրականացնել դիագնոստիկ և մոնիթորինգային աշխատանքներ, տիրապետել նրանց ուսումնասիրման մեթոդներին, ծանոթանալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակակից դպրոցական համակարգին, հարմարվել դպրոցի աշխատանքային ռեժիմին, հաճախել և վերլուծել ուսանողների և ուսուցիչների կողմից անցկացվող բաց դասերը, արտադասարանական պարապմունքները և դաստիարակչական աշխատանքները, ինքնուրույն պլանավորել, նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտադասարանական

պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ, արժևորել և գնահատել դրված նպատակների իրականացված լինելու մակարդակը:

**Կտիրապետի** ուսումնամանկավարժական պրակտիկայի անցկացման ժամանակահատվածում սեփական գործունեությունը պլանավորելու, ուսուցչի ուսումնադաստիարակչական գործունեությունը դիտելու և վերլուծելու, աշակերտների գործունեությունը դիտելու և վերլուծելու, դիտումների արձանագրություններ կազմելու, աշակերտի անձի ուսումնասիրման հետազոտական մեթոդների կիրառության, դասի ընթացքը արձանագրելու, աշակերտների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման, աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակի որոշման և կոլեկտիվի ձևավորման հարցում ուսուցչի գործառույթների իրականացման, աշակերտների մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության ուղղությամբ տարվող միջոցառումների կազմակերպման և անցկացման ձևերը, աշակերտական կոլեկտիվների հետ ստեղծագործական աշխատանքների կազմակերպման և անցկացման հմտությունների, ուսուցչի ուսումնադաստիարակչական աշխատանքի դիտման, դրա հոգեբանամանկավարժական վերլուծություն իրականացնելու, դասի նպատակների և խնդիրների որոշման, պլան կոնսպեկտներ կազմելու, դասեր անցկացնելու, դասի հոգեբանամանկավարժական վերլուծություն կատարելու, առարկայի շրջանակներում ուսումնադաստիարակչական աշխատանք կատարելու, էքսկուրսիաների Թեմատիկայի որոշման, նախապատրաստման, անցկացման, սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու, գնահատելու հմտություններին:

### **Մանկավարժական պրակտիկա - 3 ( 8 կրեդիտ )**

#### **Տևողությունը՝ 8 շաբաթ**

#### **8-րդ կիսամյակ, քննություն**

#### **Նպատակը**

Պրակտիկական կազմակերպվում է ամփոփիչ-գնահատող նպատակով: Այս պրակտիկայի բովանդակությունը ուսումնադաստիարակչական գործընթացի, մանկավարժական գործունեության վերլուծության և արդյունքների գնահատումն է:

#### **Կրթական արդյունքները**

#### **Մանկավարժական պրակտիկայի ավարտին ուսանողը.**

**Կիմանա** մանկավարժական հետազոտությունների մեթոդները և դասղեկի կողմից դրանց կիրառության ձևերը, դասղեկի ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդները

աշակերտների բազմակողմանի զարգացման ուղղությամբ, ավագ ընկերների աշխատանքային փորձը ընդօրինակելու ձևերը, դպրոցի փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը, ուսուցչի մանկավարժական գործունեության կառուցվածքը, աշակերտների հետ շփման ոճերը:

**Կկարողանա** մշտապես շփվել սովորողների հետ և հետևել նրանց գործունեությանը և շփումներին, իրականացնել դիագնոստիկ և մոնիթորինգային աշխատանքներ, տիրապետել նրանց ուսումնասիրման մեթոդներին, ծանոթանալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակակից դպրոցական համակարգին, հարմարվել դպրոցի աշխատանքային ռեժիմին, հաճախել և վերլուծել ուսանողների և ուսուցիչների կողմից անցկացվող բաց դասերը, արտադասարանական պարապմունքները և դաստիարակչական աշխատանքները, ինքնուրույն պլանավորել, նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտադասարանական պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ, արժևորել և գնահատել դրված նպատակների իրականացված լինելու մակարդակը, աշխատել դպրոցի տնօրինության, մանկավարժական կոլեկտիվի և սովորողների ծնողների հետ, կազմել աշակերտների և դասարանի հոգեբանամանկավարժական բնութագրեր, թղթապանակներ: իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթացի դիագնոստիկա և մոնիթորինգ, կանխատեսել ուսումնադաստիարակչական գործընթացի ապագա արդյունքները:

**Կտիրապետի** մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում սեփական գործունեությունը պլանավորելու, օրագիր վարելու և մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում կատարած աշխատանքը վերլուծելու, ուսուցչի ուսումնադաստիարակչական գործունեությունը, աշակերտների վարքը և գործունեությունը դիտելու հմտություններին, դասի նպատակների և խնդիրների որոշման, պլան կոնսպեկտներ և տեխնոլոգիական հերթագայության քարտեր կազմելու, դասեր անցկացնելու, դասի հոգեբանամանկավարժական վերլուծություն կատարելու, առարկայի շրջանակներում ուսումնադաստիարակչական աշխատանք կատարելու, էքսկուրսիաների Թեմատիկայի որոշման, նախապատրաստման, անցկացման, աշակերտների անձի ուսումնասիրություն կատարելու, հոգեբանամանկավարժական բնութագրեր կազմելու, մեթոդական և գիտամեթոդական ուսումնասիրություններ իրականացնելու, սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու, արժևորելու և գնահատելու հմտություններին:



**Բակալավրի կրթական ծրագրի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիոն կազմի**

h/ h	Դասընթացներ/կրթական մոդուլներ	Կոմպետենցիաներ																		
		Մասնագիտական							Գործնական					Ընդհանրական						
	Ընդ- կրեդիտ	Ա 1	Ա 2	Ա 3 4	Ա 5	Ա 6	Ա 7	Բ 1	Բ 2	Բ 3	Բ 4	Բ 5	Գ 1	Գ 2	Գ 3	Գ 4	Գ 5	Գ 6		
1	Ռուսաց լեզու	3+3												✓						
2	Օտար լեզու	3+3												✓						
3	Հայոց պատմության հիմնահարցեր	3+3												✓		✓				
4	Փիլիսոփայության հիմունքներ	3														✓				
5	Ֆիզիկական դաստիարակություն	0														✓				
6	Քաղաքագիտության հիմունքներ	3														✓				
7	Տնտեսագիտության հիմունքներ																✓			
8	Մշակութաբանության հիմունքներ																✓			
9	Կրոնագիտության հիմունքներ	3														✓				
10	Տրամաբանության հիմունքներ	3						✓												
11	Իրավագիտության հիմունքներ	3						✓												
12	Հետազոտության մեթոդաբանություն	3																	✓	
13	Շախմատի տեսություն և պրակտիկա	3			✓					✓			✓							
14	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3												✓	✓					
15	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3														✓	✓			
16	Սոցիոլոգիա	3														✓				
17	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր																✓			
18	Ընդհանուր մանկավարժություն	3+3	✓	✓		✓	✓	✓		✓	✓		✓					✓	✓	
19	Ներառական կրթության հիմունքներ	3	✓		✓			✓												
20	Ընդհանուր հոգեբանություն	3+3	✓		✓			✓			✓	✓								
21	Հայոց լեզու	6+6+6+ 6+3+3+ 3	✓								✓			✓					✓	
22	Տարրական դասարաններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	6+6+6+ 6	✓	✓			✓			✓	✓		✓						✓	

23	Մանկական գրականություն	6															V		V	
24	Մաթեմատիկա – ՄՏԴ տեսական հիմունքներ	6+6+6+ 3+3+3	V			V				V							V			V
25	Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա	6+6+6+ 6	V	V					V	V			V						V	
26	Կերպարվեստ և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	V						V	V							V			
27	Տեխնոլոգիա և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	V						V	V							V			
28	Երաժշտություն և տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա	4	V						V	V							V			
29	Ես և շրջակա աշխարհը դասընթացի դասավանդման մեթոդիկա	5	V						V	V							V			
30	Մանկավարժական տեխնոլոգիաներ	5	V	V									V							V
31	Ֆիզիկական դաստիարակության տեսություն և դասավանդման մեթոդիկա	2	V						V	V							V			
32	Մանկավարժության պատմություն	4	V						V				V							
33	Սոցիալական մանկավարժություն		V						V				V							
34	Կիրառական մանկավարժություն	2	V	V			V												V	V
35	Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն		V		V			V		V	V		V							
36	Լեզվական վերլուծության սկզբունքները	4	V																	
37	Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները		V		V			V		V	V									
38	Կուրսային աշխատանք / հոգեբանություն կամ մանկավարժություն/	1	V			V				V	V			V					V	
39	Կուրսային աշխատանք / Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա/	1	V			V				V	V			V					V	
40	Կուրսային աշխատանք / Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա/	1	V			V				V	V			V					V	
41	Մանկավարժական պրակտիկա	2	V	V	V	V	V	V	V	V			V	V	V				V	
42	Մանկավարժական պրակտիկա	8	V	V	V	V	V	V	V	V			V	V	V				V	
43	Մանկավարժական պրակտիկա	8	V	V	V	V	V	V	V	V			V	V	V				V	
44	Ավարտական աշխատանք	8	V	V	V	V	V			V	V		V	V					V	V

